

ԷԶՄԻԱԾԻՆ

84



Բ
2000



9387.



ԾԶ ՏԱՐԻ

ՀԱՄԱԾՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Փ Է Դ Դ Դ Դ Դ
2000



ՔՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ (ԱՆՏԱՓԱՌ) ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ անդրանիկ Կոնդակը	3
ՆԱՕՏՏ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի խոսքը ապճած Ս. Էջմիածնի Մայր հաճարում Ջորավար Անդրանիկի աճյունի առջև	10
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Վլադիմիր Ռուշայտյին	12
Սյովուկիայի պաշտոնական պարվիրակությունն այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին	13
Փետրվարի 6-ին կրթերգվի Ամենայն հայոց Կաթողիկոսի անդրանիկ Կոնդակը	14
Փետրվարի 14-ն Տյառնընդառաջի փոխն է	15
Գարեգին Բ Կաթողիկոսը մեկնեց Ժնև	16
Ամենայն հայոց Կաթողիկոսը կնախագահի Անդրանիկ Ջորավարի հոգեհանգստյան արարողությանը	16
Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ Բյուրոյի պարվիրակությանը	17
Գարեգին Երկրորդ. «Պարզենների հեղմաձու հանձնումը հայրենիքի նվիրյալ գավալեններին՝ առավել պետք է մեզ՝ ապրողներին»	18
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Կոնստանտին Տոգկուն	19
Գարեգին Բ Կաթողիկոս. «Համալսել ջանքերով կկարողանանք կայունացնել երկրի վիճակը»	20
Այցելությունների ժամանակացույց	21

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը փար Լայելոյ Կոյսերին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին	27
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը փար Անդրանիկ Սարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	29
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը փար և փիկին Հավորտ և Պարպրա Փիթրեզներին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	31
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը հաչարուր Թալարյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով	

նով պարզևարելու մասին	33
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրք Ար- ժանապատիվ Տ. Բարգեն ավագ քահանա Մազսուրյանին՝ ծննդյան 90 և քահանայական գործունեության 50-ամյակի առթիվ.	35
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և զնա- հափանքի գիրք փար Փայլակ Ահարոնյանին՝ ազգային- հասարակական գործունեության 50-ամյակի առթիվ	37

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԱՅԻԼՅԱՆ - Քահանայական ձեռնադրու- թյուն և օծում, վեղարի փվչություն	39
Տ. Մաթթոս արեղա Պողոսյան	43
Տ. Մարկոս արեղա Հովհաննիսյան	44
Տ. Ղուկաս արեղա Զաքարյան	45
Տ. Ղևոնդ քահանա Գալիոյան	46
ՎԱՏԵ ՍՐԿ. ՀՈՎՍԵՓՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում	47
Տ. Գևորգ քահանա Վարդանյան	48
Լուրեր	49
Խոսք Գիսր արքեպս. Նազգաշեանի՝ կարդացուած Սուրբ Յով- հաննէս Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Զօրավար Անդրանիկ Օգանեանի աճիւնին առջեւ, անոր Հայրենիք փոխադրու- թեան առթիւ կատարուած հոգեհանգստի արարողութեան ընթացքին	51

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎՐԶ. ԶԻՖԹՃԵԱՆ - Հայ Եկեղեցին և հայ երիտա- սարդը դէմ առ դէմ	53
ԱՄԲԿԵՆ ՍՐԿ. ՆԱՆՅԱՆ - Աստվածային Հայրությունը Ջրիստոսի Եկեղեցու ներքին կյանքում	57

1700 - ԱՄՅԱԿ

ՏՕՔՏ. ԼԵՒՈՆ ՄՈՄՃԵԱՆ

Եկմալեան Պատարագի վերամշակում, թէ ոչ.	64
Խորէնեան Պատարագ.	69

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՆՈՒՆԻԱԶԱՐՅԱՆ - Գրիգոր Նարեկացու «Լարդավա- ռի» պատր...	75
ԼԱՎՄԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Եվսերիոս Էմեսացու «Արևկուրթիկ»-ի լեզվական յուրահատկությունները	80
ԻՂԻՃԵ ՌԱԶՈՅԱՆ - Խրավուրթ և կրոն	86
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ - (Զակարի 1286 թ. արձանագրու- թյան «Քնթորար» վարչական տերմինը	94
ԽԱՉԻԿ ՐԱԴԻԿՅԱՆ - Գևորգյան ճեմարանի նրախորհրդ- ները, Կոմիտաս վարդապետը	99
ՆՆՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ - Սյունիքի Երիցու պատմական վանքը	114
ԹԱԹՈՒՂ ԶԱՎԵՆԻ ՍՅՈՒՆԻ - Սյունյաց Շաղար ոստանի տեղադրության հարցի շուրջ	118

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - «Հայաստանն Արևելքի և Արևմուտքի միջև, Երևանագարամյա բաղաբաղկություն: Խմբ.՝ Հ. Գևորգյան, Փարիզ, 1996, 256 էջ» (գրքի վերնագիրը՝ Փրանսերեն)	126
ԼԱՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Հովհան Օձնեցու նոր թարգմանությունը	131
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата	137
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin	140
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine	143

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐՈՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՇ



**ԸՐԵԳԻՆ Բ ԵՆՈՒՇ ԹԻՒՌՈՂՈՒԹԵԼՈՒ ՆՈՅՆԻ ԿԵԾՈՒՆ ԸՋԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԵՊՈՍ ԵՒ ԿԵԹՈՂԻԿՈՍ ԸՄԵՆՆԵՐՆ ԿՇՈՈՑ
ԵՆՈՐԸԳՈՑՆ ՊԵՏՐՈՒԲՐ ԿՄԸՋԳԵԿԵՆ ՆԵՒԸՄԵՆԵՐ ԸԹՈՈՈՑ
ԸՐԵՐԸՏԵՆ ԸՈՒՐԵԿԵԿԵՆ ՍԵՐ ԵԿԵՂԵՈՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻՇԵՆԻ**



ՔՐԻՍՏՈՍԱՄԻՆՆԻ ՍԻՐՈՑ ՍԻՋՈՑՆ ԵՒ ՍՐՀՆՈՒԹԻՆ ՎՅՈՐԱՐԱՆԱԿԱՆ
ՄԵՍԻ ՏՄԵՆ ԿԵԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆ, ՊԵՏՐՈՂՈՒԹԵՆ ԿՇՈՈՑ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՄԱՐԻՄԵՑ ԵՒ ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍՈՑ,
ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐՈՂԱՊԵՏԱՑ, ՔԱՎՄԱՅՈՑ ԵՒ ՍՄԱԿԱՄԱԿԱՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍԹՈՒ ՄԵՄԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՎԱՄԱՅՈՑԱՅՈՒՆ ՈՐՀՐՈՑ ԵՒ ՊԵՏՏՈՆԵՐ
ԵՒ ՍԻՐԵՑԵՆԱՎ ՎԱՄԱՅՈՑ ՎԱՄԱՅՈՑԱՎ ԺՈՂՈՎՈՐԵՆԱՎ ՎԱՅՈՑ

ՏԵՐ, ուղղուն զգնացաք մեր ի ճանապարհ իսթապոյթման, ՏԵՐ,
ուղղեմ եւ սուղեպոյթեմ Լոյսոյ մերոյ եւ անմեղին Լուստապոյթոյ,
զ'նոյ թաղաթաղ թնտն ճանապարհն եւ ի կեանքն յախանիցաւ:
Առաջ եւ անոր տանաւորն ընտ Լոյսոյ Լուստապոյթ Ընտ իսթա
խապոյթն Ընտ Լոյսոյ Միանապոյ Տաղապոյ իսթա սուղապոյ ի մայն
ոքանա թնտն Լոյսոյն թաղապոյթն Լոյսապոյթն անոյթապոյթ Մեր
կանգապն Երբ յոյսմ Լուսոյն ժաղապոյթ եանն Լոյսոյ ի Լոյսապոյթն,
Արցապոյթ եւ ի Արցապոյթ:

Առապոյթն Լոյսոյն յիսթա իսթապոյթն վնտապոյթն իսթ
ժաղապոյթն Լոյսոյ Ուտապոյթ վնտապոյթն յաւապոյթն Երբ
Ընտապոյթն Լոյսոյն Լուսապոյթն Սաթ իսթապոյթն Սաթ
Արցապոյթն 1700-ամեայ յիսթապոյթն, ապա յաւապոյթն մեր
ժաղապոյթն ի Լոյսապոյթն միտապոյթն, իսթապոյթն Լուսապոյթն:

Շարունակեալ մեր ջանքերն թաղապոյթն իսթապոյթն
կեղեկեանքոյ, վնտապոյթն ու թաղապոյթն Լոյսոյն յաւապոյթն
Լուսապոյթն եւ Լուսապոյթն իսթապոյթն իսթապոյթն իսթապոյթն
Լուսապոյթն, մեծ թաղապոյթն իսթապոյթն Լուսապոյթն յաւապոյթն
Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն
Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն

Դոյնեալ թաղապոյթն իսթապոյթն յաւապոյթն Լուսապոյթն
Լուսապոյթն կեղեկեանքն յաւապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն
Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն
Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն
Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն Լուսապոյթն

ՎԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿՈՒ ՄՆԱԿԱՆԱԹԵՐԹԸ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԵՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՄԲԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ
ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ,
ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՆԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԲԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ
ՊԱՇՏՈՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱ ՀԱՄԱՅՆ ՀԱՄԱՏԱՑԵԱ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Տէր, ուղղեա՛ր զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան, Տէր, ուղղեա՛ր եւ
առաջնորդեա՛ր հոգւոց մերոց եւ ամենայն հաւաքացելոց զնալ յարդարութեան
ճանապարհն եւ ի կեանսն յաւիտենից»:

Աստձոյ եւ ատրբ նախնեաց հէտ հայոց համահաւաք հանդիպման խորախոր-
հուրդ Միաձնաէջ Տաճարից խօսք «առեալ ի ձայն օրհնութեան հայրենի բարբա-
ռով»՝ հայրապետական անդրանիկ Մեր Կոնդակն ենք յղում համայն ժողովրդեանն
հայոց ի հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս:

Արարատի մարտը հայկացիի դիմաց Եռագոյնի վեհադեպի նոր ծածանումով Հայոց Ռաբանում վերստին պարմական յուսառար օրեր է ապրում Հայաստան-հայց Առաքելական Մուրը Եկեղեցու Մայր Աթոռը՝ 1700-ամեայ յիշողութեամբ, աշխարհաւիթ մը ժողովրդին ի հոգեւոր միաստեղծութեամբ:

Բարեկեցական կենտրոնը ուսուցողական խորհրդակցական առաքելութեամբ: Կոնքրետ, որ իր մշտնջենական լոյսով հոգեւորական կանգնում է հայ հոգիները դէպի հայտնական հասարակ օրոյս: Սքողին Սքող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Երուսաղէմի Սուրբ Կեղեցի մէջ, Մարտիկացեալ Փրկչի Ծննդեան Այրում, Յարուցեալ Տիրոջ թափուր գերեզմանի յոսեփորան սրբարանում, եւ այսօր վերստին Միածնի Իջման Սուրբ Սեղանի աջեւ ծառայութեան Մեր ուխտը նորոգած Աստուծոյ, ժողովրդիս ու Հայրենիքիս առաջ, Հայրապետական առաքելութեան Մեր ճանաչողական եւ սկսում Հայ Եկեղեցու Նախապետութեան Աթոռների Գահակալների, Թեմակալ Առաջնորդների եւ ծառայանալու Դահանայից դասի հետ Բարձրաւոր Աստուծոյ ողորմութեանն ու առաջնորդութեանը սպասեմք, քաջալեր եւ յուսադիր մը ժողովրդի հաւարի նոր արթնութեամբ, անկախ մեր Հայրենիքի գոյութեամբ, Հայ Առաքելական Մայր Եկեղեցուն հայրենի պետութեան գորակցութեամբ: Բիր փառք Երկնաւորին, որ Հայաստանի անկախութեամբ ազատ գործունէութեան նոր հնարաւորութիւն պարգեւեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով:

Արեւելի կամրով Աստուծոյ եւ ժողովրդիս ընտրութեամբ 1999 թ. եօկտեմբերի 27-ին կոչուեցինք առաջին սպասաւորը լինելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նոյնների 4-ին, մասնակցութեամբ Մեր սիրեցեալ եղբայրների Մեծի Տանն Իրիկեայ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի, Երուսաղէմի եւ Պոլսոյ Հայոց Պատրիարքներ, Ամենապատիւ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի, Ամենապատիւ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանի, սրբազան Հայրապետական ձեռնադրութիւն եւ օծում որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպէս Լուսաւորչի Աթոռի 132-րդ Գահակալ:

Հայրապետական ընտրութեան համագգային ուրախութիւնը մտայլուեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովում ի ցաւ համայն մեր ժողովրդի, Կրկի ունեցած ողբերգութեամբ, երբ դաւադրութեան գոհ դարձան Հանրապետութեան Ազգային Ժողովի Նախագահը, Վարչապետը, պետական եւս վեց պաշտօնեաներ: Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքում վճռական բարեփոխումներ ձեռնարկած պետական բարձրաստիճան աշխարհում մեծ կորուստ կրեց մեր ժողովուրդը: Զաւալի իրողութիւնն այսօր համագգային մտահոգութեան եւ անձնական պատասխանատւութեան է կոչում խրաքանչիւրիս՝ յաղթահարելու ներքաղաքական լարումները, ամրապնդելու երկրի անվտանգութիւնն ու կայունութիւնը՝ որպէս հիմնարար պայման յետագայ անշեղ զարգացման ու առաջընթացի:

Եզրափակեցին 1999 թուականը: Այսօր, ահա, «Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Ծննդեան «յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճություն» երեքշաբաթյան առերիստվ նորոգեալ, լաւարեսուրսեամբ, փարտած մեր հաւատքին ու Հայրենիքին, քրիստոնէական մեր ինքնութեանը հաւատարիմ, թեւակոխել ենք 2000՝ դարակազմիկ թուականը:

Քրիստոսի որդեգրեալներն ենք երկու հազար տարիներ ի վեր, սուրբ ընծիւր՝ «խաղաղութեան առերարանիչներ» ձեռքով հայրենի մեր հողում սերմանուած հունդերի: 1700 տարիներ առաջ երկնքի դռները բացուեցին Հայոց երկնականարում: Նահապալկների արեամբ սրբացեալ մեր երկրի սրտում Միաձին Որդու աստուածային էջքով «եկն անանցանելի լոյսն առ ամկայծելի ճրագն», ու Լուսաւորչի հաւատի հիմների վրայ բարձրացաւ հրաշակերտ Տաճարը Սուրբ Էջմիածնի՝ ինքնութեան եւ գոյութեան խորեւորդը Թորգոմական տան, Հայկեան մեր զարմի: Յարութեան յաղթական հաւաքը դարձրած արարող գօրութիւն, աղօթաբոյր մատեան, ծաղկեցինք, գիտութեան կաճառ վանքեր հիմնեցինք, դարերի մէջ մեզ բաժին ընկած փշտոճանապարհներին երգ ու բառով, գոյն ու քարով երկնեցինք զարմանահրաշ մշակոյթ մեր: Արդար Արեգակի լոյս այգաբացի վստահութեամբ մեր իրաւունքը պաշտպանեցինք Աւարայրում, Սարգարապատում, Արցախի նորօրեայ եերոսամարտում: Անտարանի կենսապարգել հոսքին ապաւինած՝ եղեռն վերապրեցինք, ահեղ երկրաշարժ:

Այնպիսի մեր ժողովրդի համար ցեղասպանութեամբ սկսուած դարն աւարտում է արցախեան ազատամարտի յաղթական շնչով, հայրենի հողի փոքրիկ մի հատումում Աստուծոյ շնորհով ու ողորմութեամբ, մեր արի կամքով հաստատուած նոր անկախութեամբ: Տասնամեայ մաքառումների, գոհողութիւնների՝ ու թանկ կորուստների գնով իրականացել է դարաւոր մեր իղծը: Արդ, ինչպէ՞ն կարող ենք նահանջել ժամանակաւոր դժուարութիւնների առջեւ, ինքնակամ տրուել ահագնացող մահաբեր արտագաղթին: Ինչպէ՞ն կարող ենք եեռանալ ազատութեան լոյսով արեւորուած, անկախութեամբ գօրութիւն առնող եւ կեանք պարգեւող Հող-Հայրենիք, երբ դարերի մէջ բազմիցս հիմնիվեր վերաշինել ենք մեր տունը, որպէս փինիկ յառնել մոխիրներից: Արիանանք յոյսով ու հաւատքով, գօրեպնդուենք վճռականութեամբ՝ մեր պատմութեան բեկումնային շրջադարձը ապրելու: Ձինուենք լաւարեսութեամբ, որ ի՞ լրումն ժամանակաց, ի՞ լրումն դարի՝ Անտարանի լոյսով սիրոյ, խաղաղութեան, արդարութեան ու հաշտութեան նոր առաւօտ է բացուելու աշխարհի վրայ, մեր Հայրենիքում:

Հայրական պատգամ ու կոչ ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր զաւակներին «հաւատքի բարի մարտը» մղելու եւ նորոգելու հոգիներում «սուրբ սրտից, բարի խղճմտանքից, անկեղծ հաւատքից» բխած Սէրը: Սէրը առ մեր հայրերի Աստուած, սէրը առ Հայրենիս, սէրը առ հաւատքի անսասան վե՛ն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ մեր հոգւո՛ ծննդավայրն ու տապանը փրկութեան, մեր միութեան ակունքը՝ եւ յարաբերութեան շնորհը մեզ: Երկիւղածութեամբ պահպանենք մեզ աւանդուած

2000-ամսայ սրբազան ժառոնգութիւնը: Նոր հանաչումով, նոր արժեւորմամբ, նոր ներշնչութիւնով կեանք դարձնենք՝ «պի ժամանակ է սկիզբն ինկելոյ» հայոց նոր դարձի: Իզգային արդար իղձերի իրազօրեման ճանապարհին ինքներ հիմնաւոր կամորջ հայոց անցեալը, ներկան ու գալիքը կապող:

Տիրաւոր սիրոյ ողջունիս Հայրապետական երաւը եւ յորդոր ենք ուղղում մեր Մայր Եկեղեցւոյ Նաիրապետութեան Աթոռների Գահակալ հոգևոր եղբայրներին, ուխտապահ միաբանութեանը, հայրենիքում ու հայոց Մկիտորում հովուական անուակարկ սպասաւորութեան կանչում առաջնորդ հայրերին ու բախանաներին՝ ինկել Տիցոյ ալգոյ արի ու ժուշան մշակներ: Երկնային մեր Հարդապետի խօսքին հաւաքարիմ կենսոց ճանապարհով անվարան ու անսայթաւ առաջնորդել մեր ժողովրդի զաւուկներին՝ «հաւաքովք սրբեալ զսիրտս նոցա»: Հայրենի սրբութիւն-ժողովրդի զաւուկներին՝ համամարդկային արժէքներով գորացնել ազգային մեր ներով, քրիստոնեական համամարդկային արժէքներով գորացնել մեր միութեան Տաճարը կեանքը, խօսքին համարժէք գործերով՝ բարձրացնել մեր միութեան Տաճարը կենսաբոյ աւիշ առնող Զրիստոսի Անտարանից եւ ներշնչման աղբիւր ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու Նոյեան սուրբ Հայրենիքը մեր:

Համայն մեր ժողովրդի հետ միասնական ջանքերով ճշունամոյս պիտի ինքներ մեր հոգևոր կեանքի բարեփոխմանն ու վերաշինութեանը, Հայ Եկեղեցւոյ բարենորոգման թայյրին՝ յաղթահարելով այդ ճանապարհին տարիներ ի վեր խոչընդոտ հանդիսացող եկեղեցական վարչա-իրաւական վիճերն ու տարածայնութիւնները Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնների միջեւ, վերականգնելով կանոնական վիճակ եւ ընդլուծում գործունէութիւնը Առաքելական մեր Մէկ ու Սուրբ Եկեղեցւոյ: Մեր յաւատարմութեան հիմքը ներկայ եղբայրական ջերմ յարաբերութիւններն են երկու Աթոռների միջեւ:

Հոգևոր կեանքի գորացման ճանապարհին առաջնահերթ կարեւորում ենք հոգևորական նոր սերնդի պատրաստութիւնը, որպէսզի օր առօր կեանք մղեն Անտարանի ճշմարտութեան յայտով գինավառ, շնորհներով քի, մեզ գործակից նախնայ հոգևոր սպասաւորներ՝ առաջեորդելու եւ համախմբելու մեր զաւակներին Մայր Եկեղեցւոյ, հայրենական աւանդների շուրջ: Հայրական մշտական հոգածութեան ներքոյ պիտի պահենք Գեորգեան Հոգևոր Ծննդարանը, Վազգենեան հոգևոր դպրանոցը եւ Ծիրակի հոգևոր ընծայարանը, որոնցում նախապետում ենք համակարգել ու բարելաւել ուսումնակրթական գործընթացի կազմակերպումը:

Շարունակելու ենք ջանքերը՝ բարձրացնելու խոնարհում եկեղեցիները, վերանորոգելու ու բարեգարդելու հայրենի դարաւոր սրբավայրերը եւ կառուցելու նորերը՝ նաիրական երազով, որ ամէն բնակավայրում, մեծ քաղաքների թաղամասերում վեհաշուր յառնեն աղօթքի տները մեր, իրենց շուրջ սկիզբ տալով համայնքային բնականոն կեանքին:

Հոգևոր սպասաւորների յաջորդական պատրաստութիւնը, նորարաց եկեղեցիները յուսպի նրաշիւքներն են դառնում Մայր Հայրենիքում եկեղեցական համայնքների լիարժէք կազմակերպման համար, որպէսզի Առաքելական մեր Եկեղեցին՝ մըջ-

տապելու ներկայ իր հաւատացեալների առօրեայ կեանքում, լիարիւն իրականացնել մեր ժողովրդին հովուելու՝ երկնաւոր առաքելութիւնը, չթողնելով բաց դաշտ օտարամուտի օտարացնող հոսանքների գործունէութեան համար:

Հրամայական ենք համարում քարոզչական ընդարձակ գործունէութեան ծաւալումը, որպէսզի լուսաբաղծ Հայ Եկեղեցին շարունակի լինել Սիրոյ, Հաւատի, Յոյսի լուսառաք, կենարար աղբիւրը հայութեան կեանքի՝ Մայր Հայրենիքում եւ հայոց Սփիւռքում: Հայ Եկեղեցու խօսքը հաւատարմութիւն մեր գաւակներին պիտի մատուցուի աւանդական եւ արդի տարբեր միջոցներով՝ ինչպէս եկեղեցիների ներշնչուն պատերից ներս քարոզներով, սրբազան արարողութիւններով ու խորհուրդներով, այնպէս եւ դպրոցներում քրիստոնէական դաստիարակութեամբ, եկեղեցասիրաց կազմակերպութիւնների գործունէութեամբ, հոգեւոր պարբերականների եւ գրականութեան հրատարակութեամբ, ժաղիօ-հեռուստատեսային ծրագրերով: Հոգեւոր կրթադաստիարակչական գործունէութեան եիմնաշեշտը ուղղուած ենք տեսնում մասնատրաքար մատաղ սերնդին, որպէսզի հաւատի ճշմարտութեամբ, քրիստոնէական բարոյականութեամբ, արդարութեան ոգով, ազատութեան շնչով, ազգային անանց մեր արժէքներով սնուած եւ հասակ առած սերունդը կարող եւ յանձնառու լինի պահել գալիքի մեր երթը:

Հայ Եկեղեցին դարեր ի վեր եղել է անկախութեան սրբազան գաղափարի կրողը եւ արծարծողը հայ եոգիներում, սրբօրէն պահպանողը հայ ինքնութեան, սշտկութային գանձարանը հայոց: Առաքելաշախիղ իր ընթացքով, մեր աւուր հայրերի աստուածասէր ու հայրենապաշտ ոգով Հայ Եկեղեցին պիտի շարունակի հայապահպան իր առաքելութիւնը Հայրենիքում եւ Սփիւռքի հայոց կեանքում: Հոգեւոր կեանքը հայ գաղթօթախնների վերաշինութեան ու վերածննդի հենքը դարձնելով, մեր Եկեղեցին՝ որպէս պատմականօրէն ձեւատրուած համագգային կառոյց, ամրապնդելու է աշխարհի բոլոր ծագերում սփռուած հայութեան՝ միմեանց ու Մայր Հայրենիքի հետ բազմակողմանի կապը՝ կենսունակ անցեալի մեր սուրբ յիշատակներով, անկախացեալ Մայր Հայրենիքի գոյութեան հպարտութեամբ, մեր լինելութեան անվարան կամքով ու համագգային մեր իղձերով:

Շարունակելու ենք գործուն մասնակցութիւն ունենալ միջեկեղեցական կեանքում հաւատարիմ համայն աշխարհում խաղաղութեան պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցութեան մեր Եկեղեցու աւանդներին: Նոր ժամանակների տարաբնոյթ մարտահրաւերների առջեւ քրիստոնէական քայր Եկեղեցիների հետ մեր ջանքերը միատրած, հետեւողականօրէն իրականացնելու ենք հոգեւորի լոյսով մարդկութեան կեանքի իմաստատրման սուրբ առաքելութիւնը՝ յանուն քրիստոնէական սկզբունքների կենսագործմամբ բարու յաղթանակի եւ համընդհանուր երջանկութեան:

Անկախ ազգային պետականութեան պայմաններում անհրաժեշտօրէն նոր որակ են ենթադրում Հայ Եկեղեցու եւ Հայոց պետութեան յարաբերութիւնները՝ իրաւական հիմքերով ամրագրուած: Հայ Եկեղեցին եւ Հայոց պետութիւնը Հայ

ժողովուրդը և իր ամբողջության մէջ: Ազգային կեանքի հոգեւոր և աշխարհիկ նրկու
այս կառույցների միմեանց լրացնող ներդաշնակ միութեամբ միայն ի գորտւ ենք
կերտել բարգաւաճ ու բարձր գալիքը մեր ժողովրդի: Հայադրոշմ հայորդիք, ծնունդ
առած Հայ Եկեղեցու աւազանից, սնուած Աւետարանի ճշմարիտ խօսքով,
քրիստոնէական բարոյագիտով ու Խայրենեաց ժառանգութեամբ, նորանկախ մեր
Հայրենիքի քաղաքացիներն են, հենարանն ու շինարարները կայուն և գորեղ
իրաւական պնդութեամբ:

Իրաւական պնդութեան:
Քացուող նոր դարաշրջանի հրամայականներին համահունչ Հայ եկեղեցու համար արդիական են ներքին բարեկարգութիւնն ու բարենորոգումը, Սահմանադրութեամբ օծվելու վաղեմի անհրաժեշտութիւնը, որն իրագործելի է, երբ յաղթա-
հարում կը լինեն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան և Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան միջեւ՝ մեր ժողովրդին բաջ յայտնի խնդիրները: Լիայոյս ենք, որ
ատաղիկայում աւարտին պիտի հասցենք և վաւերացնենք գործադրութեան
Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Սահմանադրութիւնը՝ ձեռնարկուած Մեր
նրջանկայիշարակ նախորդի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:
Սառսանադորոշմամբ՝ առաջին յապակեցումը և կանոնակարգումը յարաբերութիւն-
նկույզ, մեր եկեղեցու Նախնայականութեան Աթոռները, բոլոր թեմերը՝ որպէս մէկ
սլորմաբի բազկավարած ճիւղեր, կարող պիտի լինեն լիարժէք արդիւնաւորումով
ծառայել մեր ժողովրդին:

Շառայել մեք ժողովրդիս։
 Եւ Եկեղեցու ներքին կեանքի նորոգութեան ուղղութեամբ կարեւորութիւն բերեալ ժամանակի ոգուն եւ թելադրանքին ընդառաջ՝ եկեղեցական կանոնների յստակօրէն կեանքի կոչումը եւ ճիստարարողական բարեկարգութիւնը՝ Եկեղեցու սրբազան ու սրբացնող արարողութիւնները մեր ժողովրդին առաւել հասկանալի եւ հարազատ դարձնելու նկատառումով, նաեւ՝ զերծ կամայական բարեփոխումներից։ 'Ճարտարութեամբ մեր հայրերի սուրբ օրհնանքի ղեկավարութեամբ վանական կեանքի վերարթնացումը, որպէսզի վանքերը մեր, իբրեւ ջերմանալի աղօթքի տներ, ինչպէս դարեր շարունակ, լինեն հոգու եւ մարմնի լուսաւորութեան աղբիւր մեր ժողովրդի կեանքից ներս։ Ուշադրութեան կենտրոնում ենք ունենալու հոգևոր միաբանական կեանքի եւ վարչա-տնտեսական աշխատանքների վերակազմակերպումը Մայր Աթոռում, գործունէութեան առանձին բնագաւառներում գործուն համակարգերի ստեղծմամբ՝ համապատասխան բաժին-ներաբաժիններով։ Մայր Աթոռը լիարիւն կեանքով կարող է ալրել, նպատակամիտ գործունէութիւն ծաւալել, երբ ի յայելում մեծազնիւ բազում բարերարների արդար վաստակից նշան նուիրատւութիւնների՝ եկամտաբեր հաստատութիւնների, հիմնադրամների հաստատման ճանապարհով կ'ունենայ ֆինանսական առաւել հնարաւորութիւններ։ Եկեղեցու տնեցումքը՝ որպէս համագլխի սեփականութիւն, ծառայել ու ծառայելու է ազգային նպատակների՝ եկեղեցական, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, տնտեսական, ընկերային կեանքի ալլազան ասպարէզներում։

Մօտ է ժամանակը: 2001 թուականը ազգային մեր կեանքում նշանատրուելու է Հայաստանում քրիստոնեության պետականօրէն ճանաչման 1700-ամեակի փոնակապարտութեամբ: Յիշարժան յոբելեան չէ միայն, որ խնդրութեամբ ու հանդիսատր նշելու ենք ազգովի, այլ համայն ժողովրդով՝ հոգեւորական թէ աշխարհական, որպէս մէկ Եկեղեցի, մէկ պետութիւն քայլ առ քայլ, հետեւողականօրէն կենսատրելու ենք հրամայական նպատակները, առաջադրուած ծրագրերը: 1700-ամեակի փոնակապարտութեան մեծագոյն իրագործումը Երեւանի Մուրք Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցու կառոյցն է՝ կարօտ ֆինանսատրման: Չունենք փարակոյս, որ կենդանի է բարեգործութեան ոգին հայորդեաց հոգում, եւ Հայոց մայրաքաղաքի կենտրոնում իր ողջ շուքով շուրջով յառնելու է Հաւատքի մեր Հօր նուիրական անուրը կրող նոր սրբապետին՝ որպէս հաւաստիացում ապրուած 17 դարերի մեր արժեւորման, որպէս մարմնատրում երջանկայիշապակ Վազգէն Ա եւ Գարեգին Ա Հայրապետների լուսեղէն նրազների եւ յաւերժախօս քարեղէն աղօթք՝ մեր սուրբ նախնեաց բարեխօսութեամբ առ Աստուած միպրում:

Այրենք ու գործենք Հայոց մեծ դարձի 1700-ամեայ խորհրդով, Եկեղեցու, Հայրենիքի ու հայրենեաց վերաշինութիւնը իրական դարձնելու աներեր կամքով:

Հաւաքանք մեր միաբանութեան յաղթանակող կարողութեանը: Եւ թող Աստուած գօրացնի մեզ ամենքիս մեր պարտքի մէջ: Թող Հոգին Իր ճշմարիտ, Հոգին Իր Բարի առաջնորդի մեզ յերկիր ուղիղ, ի լոյսն իմանալի:

«**Տ**էր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան, Տէր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգւոց մերոց եւ ամենայն հաւաքացիւոց զնալ յարդարութեան ճանապարհն եւ ի կեանսն յաւիպենից»:

Շնորիք Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եւ սէրն Աստուծոյ ընդ ձեզ ամենեսին, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ կոնդակս ի 5-ն փետրուարի

Յամի Տեառն 2000

եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ 1

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍԲԸ ԱՍՎԱԾ
Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒԹ՝
ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՃՅՈՒՆԻ ԱՌՋԵՎ
(20 փետրվարի 2000 թ.)**

«Յանուս Հոր և Որդույ և Հոգույն Արդյ. ամեն»:

*«Մահկանացու ծննալ,
անմահ զխորժ յիշատակ երող»*

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց.

Տոն է այսօր հայության, արդարության հաստատման թանկ օր: Ամենայն Հայաստանի Հայրենի հողը որպես սուրբ մասունք իր նվիրական զիրկն է առնում Զորավար Անդրանիկի փարագիդ աճյունը: Բյուր փառք Աստուծո, ազատ է Հայաստանը ընդունելու իր դուրացուն հերոս զավակին, որի վերջին կամքն էր Հայրենիքում ամփոփել իր մարմինը. սակայն հանգրվան գտավ հեռավոր Փարիզում, բանգի Ազատության Սարսիկը՝ մահացած անգամ, սարսափով էր ազդում բռնապետություններին:

Արդարև, աշխարհում չկա մի հայ, որի սիրտը հուզմունքով չպրոփի և հպարտությունից չուռչի՝ արտաբերելով Զորավար Անդրանիկի նվիրական անունը: Դյուցազնաշունչ զորավարի և նրա զինակից երկրապան Ֆիդայիների հայրենի ու անհայտ անուններով է բացվում 19-րդ դարի հայ ազատագրական պայքարի հուժկու նոր շրջանը՝ լի տասնամյակների անձնուրաց նվիրումով, գերմարդկային ջանքերով, գոհոգություններով ու կորուստներով, լի արդարության հանդեպ անկեղծ հավատով և խորը հիասթափություններով: Շուրջ կեսդարյա հերոսապատում այդ ժամանակաշրջանը ավելի, քան նախընթաց մի բանի դարեր, հասունության անօրինակ դասեր մատուցեց մեր ժողովրդին՝ վերստին հավաստելով հայի ապրելու կամքը և մարտական ոգին, ազատության սերը և գոհաբերվելու կարողությունը:

«Ո՛վ Ազատություն դու սպառազեն, Տավրոս լեռներից մեզ երևեցար»: Ապավինած Մասնա քաջաց անպարտելի ոգուն, Զեյթունի, Տարոնի սեզ լեռներին ու թավ անտառներին, արդարության տննչով վառված Հայրենյաց պաշտպան ուխտյալները՝ Ֆիդայի հայ քաջորդիք, առաջնորդեցին սրբազան ընդվզումը ընդդեմ Օսմանյան Թուրքիայի հայաջինջ բռնությունների՝ կերպելով հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերի ոգին և հերոսական այդ մարտերում կոփվելով որպես զորավարներ:

Սիրելի հայորդիք, մարտական երկար ուղի է անցել մեծ Հայդուկապետ ու Զորավար Անդրանիկը: Շապին-Գարահիսարցի սավառնաթև Արծվի թռիչքի բարձունքից

տեսանելի են Առաքելոց վանքի կոիվը, Սասունի հերոսամարտերը, Դիմանի ճակատամարտը... Նրա սխրալից, անանձնական կյանքի ճանապարհով կարելի է քայլ առ քայլ վերապրել հայ ժողովրդի 19-րդ դարավերջի և եղեռնասկիզբ 20-րդ դարի առաջին քառամյակի անվիճելիորեն գոյ հիշատակի արժանի պատմությունը՝ հարուստ հերոսական կերպարներով: Հայաստանի ազատագրման երազով ապրած քաջագունների հրեղեն կյանքով, ինչպես եղեգան փողից, ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որի ժառանգորդն ենք այսօր՝ մեր Հայրենիքի ազատ ու անկախ փոքրիկ այս հողակտորի վրա:

Երանելի է դարձող, Զորավար, երախտագետ մեր ժողովրդի սիրտ խնկարկումով, հաղթանակած հայ զինվորների թևերի վրա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարից Հայոց Հանրապետության ղեկավարության ուղեկցությամբ՝ գլխավորությամբ Հանրապետության նախագահի, Հայրապետիս և զինվորյալ միաբանությանս աղոթքով, հպարտ Եռագույնի ներքո ճանապարհվում ես դեպի բարձունքը անմահների, ուր հայրենաբաղձ, տենչավառ հոգուդ հրճվանքով ընդառաջ են գալիս լույս հոգիները բյուր զավակներիդ, որ նոր նախադասներն են վասն Հայրենյաց, վասն հավաքի՝ մարտի ելած նաև քո անվամբ, հայացքի առջև քո թանկ պատկերը՝ կրծքիդ շողացող Սուրբ Լուսավորչի շքանշանով:

«Գործս կիսատ մնաց» խոսքդ նոր արժևորմամբ ու հնչողությամբ վերստին արձագանքում է հայ հոգիներում: Գործիդ շարունակման վկան է այսօրը, որով, խոսքիդ համաձայն, «հավատքով մխրճվում ենք դեպի ապագան»: Այսօր Զորավարիդ աճյունը չէ միայն, որ ամփոփում ենք հայրենի հողում, այլև կոթող ենք կանգնեցնում անթաղ ու անշիրիմ հայրենյաց պաշտպան բազում հայորդյաց՝ մեր երկրի սրբում ու մեր հոգիներում անթնդելով ձեր սերը առ Հայրենին, ազատասերնչ ոգին ու հավատը հայոց գալիքի հանդեպ:

Հաղթապատկ սուրդ, սիրելի Զորավար, որ բազմիցս շողացել է ազատության ու արդարության հույսի ցուլերով, խաղաղ ու շինարար կյանքի երազի փայլով, քո ամուր ձեռքում դարձել է հրավեր ու կոչ հայոց միության, արարումի իր այս խորհրդով հայոց արևին է պարզվել այսօր երազ քո Հայրենիքում, Սուրբ Էջմիածնում, ուր 80 տարիներ առաջ պատյան դրոցի ու այն հանձնեցի լուսահոգի Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Թող շեղբը սրիդ խաղաղության անմայ կապույտը անդրադարձնի Մայր Հողին ամփոփ և հերկի հայոց հոգին սպեղծագործ ու հողը պողաբեր՝ հայորդյաց մրաց ու ձեռքի արգասիքների արևագույնը բազմապատկելով հայրենի երկնքում: Թող լեռնանիստ մեր Հայրենիքի բարձր երկնքից Հույսի, Հավատի, Միտ լույսերի արփացողանքով կոչնականչ սուրդ միավորի հայ հոգիները ի սփյուռս աշխարհի:

Թող Զորավարիդ հոգնաբանջ մարմինն ու անմահ հոգին հանգիստ գտնեն ազատ Հայրենիքի մեր սուրբ հողում, Մասյաց փեշերին հավերժախոս բազմած Սուրբ Էջմիածնի հայացքի առջև՝ Եռաբլուրի փառքի բարձունքին:

«Խունկ, աղօթք և բիրտ օրհնութիւն ի յօսեղէն յարկսն բնակեալ» քո հոգուն:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՅ ՎԱԿԻՄԻՐ ՌՈՒՇԱՅԼՈՅԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 փետրվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության ՆԳ նախարար Վլադիմիր Ռոշայույին՝ ՆՏ ՆԳ նախարար Հայկ Հարությունյանի և Հայաստանում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովի ընկերակցությամբ:

Ողջունելով հյուրերին, Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայ-ռուսական կապերի զարգացման առնչությամբ և հույս հայտնեց, որ ներքին գործերի նախարարությունների համագործակցությունը կնպաստի երկու երկրների կայունության ամրապնդմանը: «Իրկրի օրինապահության պահպանման համար մենք փնտրում ենք նաև Էկեղեցու դերը, և մենք էլ մեր հերթին մեր նպաստը կրենք այդ կարևոր գործին», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն Ռոշայուն իր հերթին կարևորեց Էկեղեցու անուրանալի դերը ժողովրդի հոգնոր-բարոյական դաստիարակության և դրանով իսկ օրինապահ հասարակություն կերտելու ճանապարհին:

ՄԱՍԼԱ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՅԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 փետրվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Սլովակիայի պաշտոնական պատվիրակությունը՝ Սլովակիայի Արտաքին գործերի և Էկոնոմիկայի նախարարներ Էդուարդ Կուկանի և Լյուբոմիր Նարայի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընկերակցում էր Ռուսաստանում Սլովակիայի դեսպան Իգոր Ֆուրդիկը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախությամբ ողջունեց Սլովակիայի պատվիրակության Հայաստան այցը, որն իր նպաստը կբերի երկու երկրների զարգացմանը: «Մասնավոր ուրախություն է, որ անկախության նոր պայմաններում ինչպես մեր, այնպես էլ Սլովակիայի պարագայում երկու հինավուրց երկրներ համագործակցության նոր շունչ են դրսևորում, քանզի ժողովուրդներն առանձին չեն կարող բարձր կյանք ստեղծել»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Է. Կուկանը նշեց. «Մեծ պարիվ է մեզ համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվելը, և գիտակցում ենք նաև Ձեր ողջ պատասխանատվությունը, որ կրում եք համայն հայության առջև»:

Օգտվելով առիթից, Նորին Սրբությունը պատվիրակության անդամներին իր ցավակցությունը հայտնեց Չեխիայի և Սլովակիայի Պատրիարք Դորոթեյ արքեպիսկոպոսի վախճանման առիթով:

ՄԱՍՆՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ ԿԸՆԹԵՐՑՎԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Սայր Աթոռ Ս. Էջմիածին, 4 փետրվարի 2000 թ.:

Փետրվարի 6-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ա. Պապարագի ընթացքում հանդիսավորապես կրթերգվի Ն.Ս.Շ.Տ. Գալսեղի Բ Մմենայն Հայոց Երաթողիկոսի անդրանիկ կոնդակը:

Հայ Առաքելական Եկեղեցու ավանդության համաձայն, նորընթիր Հայոց Հովվապետը Հայ Եկեղեցու եկիրապետական Մթոռների գահակալներին, հոգևորականաց ողջ դասին և համայն հայությանը Հայրապետական անդրանիկ ուղերձով կներկայացնի կաթողիկոսական առաքելության իր ծրագրերն ու Մմենայն Հայոց Երաթողիկոսության գործունեության մասին իր մտորումները:

ՄԱՄՆԻ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ



ՀՈՒՄԻԿ ԱՐԺԵՂԻՍԿԱԾՈՍ ՍԱՆՃՈՒԹՄԱՆ ԸՆԹԵՐՈՒՄ Է
ՆԱԹԱՄԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԵԱՅԻՆ ԿՈՆԴԱԿԸ

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆՆ Է

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 12 փետրվարի 2000 թ.:

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հերթական անգամ կնշի Տյառնընդառաջի տոնը: Այն խորհրդանշում է 40-օրյա Հատուի ընծայումը Երուսաղեմի տաճարին Մարիամ Աստվածածնի կողմից: Տյառնընդառաջի տոնին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում կմատուցվի Ս. Պատարագ:

Տոնի նախօրեին, փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի կունենա Նախարարների և Անդաստանի հանդիսավոր արարողություն: Հավարտ արարողությանց, եկեղեցու կանթեդներից վերցված կրակով Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բակում կբոցավառի ավանդական խառույկը՝ իբրև Քրիստոսի յույսի և իմաստության խորհրդանիշ:

ՄԱՍՆՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՅ ԺՆԵՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 14 փետրվարի 2000 թ.:

Այսօր, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հնգօրյա այցով մեկնեց ժնև:

ՄԱՍՆԱԴԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՆԱՍԱԳԱՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐԱՎԱՐԻ ՀՈԳԵՃԱՆԳԱՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 18 փետրվարի 2000 թ.:

Կիրակի օրը, փետրվարի 20-ին, առավոտյան ժամը 10-ին, ազգային հերոս Անդրանիկ Զորավարի աճյունը կրեղադրվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հավատարմորդ Պապարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախազանդությամբ փեղի կունենա հոգեհանգստյան արարողություն: Նորին Աթոռապետին իր Հայրապետական պատգամը կհաղորդի ներկաներին՝ Հայոց Մեծ Զորավարի աճյունը հայրենի հողին վերադարձնելու պատմական առիթով:

ՄԱՍՆԱԴԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՅՂ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 փետրվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅՂ նորընտիր քյուրոյի ներկայացուցիչ հրանտ Մարգարյանին, քյուրոյի անդամներ Ալբերտ Աճեմյանին, Վիգեն Նովսեփյանին, Գերագույն Մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռոստամյանին և քարտուղար Կիրո Մանայանին:

Ողջունելով և շնորհավորելով ՀՅՂ ներկայացուցիչներին՝ Մայր հայրենիքում կուսակցության ընդհանուր ժողովի գումարման և բարեհաջող անցկացման առիթով, Վեհափառ հայրապետը կարևորեց քաղաքական կուսակցությունների դերը պետական ու ազգային կյանքում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հայ եկեղեցու և ազգի առջև ծառացած մի շարք խարցեր, որոնց թվում Նորին Սրբությունը շեշտեց ԱԴՀ երկրներում հայ համայնքների կազմակերպման, հոգևոր սպասավորների պատրաստման խնդիրները: Կարևորելով եկեղեցու դերն այս խնդիրների լուծման ասպարեզում՝ ՀՅՂ պարվիրակության անդամներն իրենց գորակցությունն ու նվիրվածությունը հայրենեցին Մայր եկեղեցուն:

Հանդիպման ավարտին ցանկություն հայտնվեց հաճախակի դարձնել նմանապիպ ինքնակազմակերպումներն ու քննարկումները, որոնք, Վեհափառ հայրապետի համոզմամբ, իրենց նպաստավոր արդյունքը կարող են ունենալ:

ՄԱՍՆՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ



ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ.

«ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՆԵՏՄԱՆՈՒ ՎՆՁՆՈՒՄԸ ՆԱՅԻՐՆԻՔԻ ՆՎԻՐՅԱԼ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ՝ ԱՌԱՎԵԼ ՊԵՏՔ Է ՄԵՋ՝ ԱՊՐՈՂՆԵՐԻՄ»

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 փետրվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահական նստավայրում ներկա գրկվեց Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին և վարչապետ Վազգեն Սարգսյանին հեղինակու Ազգային հերոսի կոչում շնորհելու և հոկտեմբերի 27-ին գոհված բարձրաստիճան մյուս պետական այրերին Հանրապետության պաշտոն շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու արարողությանը: Ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Նաչատրյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գալին Հարությունյանը, պետական բարձրաստիճան անձինք, գոհվածների հարազատներ:

«Հանրապետության համար ղեկավարին ժամանակներում, որպես երկրի օրենսդիր և գործադիր բարձր իշխանության կրողներ, Հայրենիքի արժանավոր զավակները միավորեցին իրենց քանքերը որոշիչ բարեփոխումներ իրականացնելու վճռականությամբ, մասնավորաբար Կարեն Դեմիրճյանը՝ քաղաքական, տնտեսական կյանքի առաջնորդության, շինարար գործունեության բազմամյա փորձառությունը ուսերին, և Վազգեն Սարգսյանը՝ հայրենյաց պաշտպան զինվորի, հրամանատարի, Հայոց Ազգային բանակ կազմավորած երիտասարդ նախարարի վաստակով: Նրանք բոլորն էլ նվիրական երազ ունեին, ազապո մեր Հայրենիքը տեսնել խաղաղ երկնքի ներքո բարձր, շեն ու բարգավաճ, լեցուն մեր ժողովրդի երջանիկ ու խնդուն, սպեղծարար կյանքով: Այսօր պարգևների հեղինակու հանձնումը Հայրենիքի նվիրյալ զավակներին՝ առավել պետք է մեզ՝ ապրողներին, որպես ազգային մեր կյանքում արժենքների կարևորում և հայրենաշինության գործում մեր հանձնառության դրսևորում»,- Հայրապետական իր խոսքը ուղղելով ներկաներին՝ ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Արքությունն իր աղոթքը եղեց առ Աստված՝ հայցելով Տիրոջ օրհնությունը, որպեսզի իրական դառնա գոհված պետական այրերի՝ Հայրենիքի վերաշինության երազը՝ որպես հափուցում երանց ընդմիջված կյանքի:

ՄԱՄԼՈՂ ԴԻՎԼՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՏՈՅԿՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 փետրվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության դաշնային սահմանապահ ծառայության պետ, գեներալ-գնդապետ Կոնստանտին Տոցկուն՝ ՀՀ ԱԶ նախարար Կառլոս Պետրոսյանի և Հայաստանում ՌԴ դեսպան Անատոլի Դոլուկովի ընկերակցությամբ:

Վախափառ Հայրապետը, ողջունելով պատվարժան եյուրին, շեշտեց հայ-ռուսական դարավոր բարեկամության ու կապերի կարևորությունը, որոնք միաեյուսված են փոխընդհանուր ռազմավարական շահերով, և իր գոհունակությունը հայրենեց հայ և ռուս սահմանապահների միջև առկա փոխվստահության և համագործակցության համար:

«Մեր աղոթքն է, որ երկիրը ապրի խաղաղության մեջ, չխաթարվի պատերազմներով, ողբով ու ավերով», - ասաց Նորին Սրբությունը՝ մատթելով Աստուծո օգնականությունը սահմանապահ գործերին՝ ի շահ համընդհանուր խաղաղության:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն Տոցկին վստահություն հայտնեց, որ ռուս սահմանապահները կշարունակեն այնքան օգնել հայկական սահմանների պահպանությանը, որքան այն անհրաժեշտ կլինի հայ ժողովրդին:

ՄԱՍՆԱ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ

ԳԱՐՆԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՀԱՄԱՏՆՆԱԿ ԶԱՆՔԵՐՈՎ ԿԿԱՐՈՂԱՆԱՆԲ ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ ԵՐԿՐԻ ՎԻՃԱԿԸ»

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵՆՆԵՑ ՄՈՍԿՎԱ

Մարտ Աթոռ Ս. Էջմիածին, 29 փետրվարի 2000 թ.:

Այսօր, առավոտյան, Ն.Ս.Ս.Տ. Պառնդին Բ (մենայն Հայոց Կաթողիկոսը Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդի նորայրական հրավերով մեկնեց Մոսկվա:

Նորին Սրբությանը ուղեկցում էին Հայ Մտաբեկական Եկեղեցու Արքայի թեմի առաջնորդ Ս. Պարզև արքեպս, (Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջնակեցական Խորհրդակցությունների բաժնի գլխավոր քարտուղար Ս. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Ռեկրահնայի հայոց թեմի առաջնորդ Ս. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական փոխապահ Ս. Մովսես վրդ. Մովսիսյանը, Սանկտ-Պետերբուրգի հայոց հոգևոր հովիվ Ս. Եզրաս աբղ. Ներսիսյանը, Ս. Արշակ աբղ. Խաչատրյանը՝ իբրեք գավազանակիր, և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը: Մոսկվայում Վեհափառ Հայրապետի շախմբին կմիանա նաև Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրան արքեպս. Կյուրեղյանը:

Վեհափառ Հայրապետի անդրանիկ այցը Մոսկվա նպատակ ունի գորացնել Նրկու Եկեղեցիների դարավոր կապերն ու քննարկել հարաբերությունները:

Այցելության ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների, թեմական խորհրդի և հավատացյալների հետ, կայցելի Մոսկվայում կառուցվելիք հայկական եկեղեցու տարածք:

Օղանավակայանում, ի պատասխան լուսաբերողների հարցերի, Նորին Սրբությունն անդրադարձավ և Հայրապետական իր մաղթանքը հղեց Հայաստանի նորակազմ կառավարությանը:

«Դրական ենք համարում, որ տարբեր կուսակցություններ պաշտոններ են ստանձնել այս կառավարության մեջ: Հավատում ենք և ինչու ունենք, որ համալուրջ քանրերով մեր ժողովուրդը պիտի կարողանա բարձր կյանք կերպել, կայունացնել երկրի վիճակը և հանրապետությունը դուրս բերել փոփոխական, աղքատական ծանր վիճակից», - ասաց Վեհափառ Հայրապետը:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

(նոյեմբեր 1999 թ. - փետրվար 2000 թ.)

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՅԵԼԱԾ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՎ ՊԱՏՎՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբեր 1999 թ.

- 6.11 - ՆՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչներ
- 7.11 - ԱԺ Նախագահ Արմեն Խաչատրյան
- 10.11 - ՆՆ Ֆինանսների նախարար Լևոն Բարխուդարյան
- 10.11 - Իրանի Իսլամական Հանրապետությունում ՆՆ արտակարգ և լիազոր դեսպան Գեղամ Ղարիբջանյան
- 10.11 - ՆՆ ԱԿ Նախարար Սերժ Սարգսյան
- 12.11 - Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյան և նախագահության անդամներ
- 15.11 - ՆՆ Կրթության և գիտության նախարար Էդուարդ Ղազարյան
- 17.11 - ՆՆ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյան և աշխատակազմ
- 18.11 - Տեղական մարզային իշխանության ղեկավարներ՝ քաղաքապետ Երվանդ Աղվանյանի գլխավորությամբ
- 21.11 - ՆՆ ՆԳ նախարար Հայկ Հարությունյան
- 22.11 - Հայաստանում Ռուսինիայի արտակարգ և լիազոր դեսպան Պավել Պլատոնա
- 22.11 - ԻՄ նախագահ Պարույր Հայրիկյան
- 23.11 - ՆՆ նախագահին կից ներման հանձնաժողովի անդամներ
- 24.11 - ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի քարտուղար Միխայիլ Կրոպոտկ
- 24.11 - ՌԱԿ-ի նախագահ Ռուբեն Միրզախանյան
- 25.11 - Հայկական Հայրենակցական միությունների նախագահներ

Դեկտեմբեր 1999 թ.

- 1.12 - Հայաստանում Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բաբրի Ռուշդի Էլ Ամմարի
- 1.12 - ՆՆ Ազգային անվտանգության նախարար Կառլոս Պետրոսյան
- 2.12 - ՆՆ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյան
- 8.12 - Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոմկո

- 11.12 - Հայաստանում Իրանդիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Դեյվիդ Դոնահյու
- 11.12 - ՏՏ նախագահ Ռոբերտ Քոչարյան
- 11.12 - Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Քերի Քեիկո՝ Հայաստանում ՈԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնի ուղեկցությամբ
- 13.12 - Ղարաբաղյան հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Նիկոլայ Գրիբկով և Ժան Ժոսկ Կայարո
- 13.12 - Հայաստանում Միլիայի Արարական Հանրապետության գործերի ժամանակավոր հավաքույրմարտ, դեսպանորդ, դոկտոր Համեղ Հասան
- 13.12 - Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Թոմաս Էյզան Ջոնս
- 13.12 - Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլոզ Նիկոլոզաշվիլի
- 14.12 - Հայաստանում Դերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Պոլկեր Ջայթջ
- 14.12 - Տայաստանում Լիբանոսի արտակարգ և լիազոր դեսպան Թոնի Բադաուի
- 14.12 - Հայաստանում Իրնական համայնքի հոգևոր առաջնորդ, ուսրբի Գերշ Մեյեր Բուռչարյան
- 14.12 - ՏՎարչապետ Արամ Սարգսյան
- 15.12 - Հայաստանի եզդիների հոգևոր խորհրդի նախագահ Հասան Հասանյան
- 21.12 - Հայաստանի Ազգությունների միության ներկայացուցիչներ՝ միության նախագահ Վլադիմիր Չապոնի գլխավորությամբ
- 21.12 - ԱՊՀ գործադիր քարտուղար Յուրի Յարոլ

Հունվար 2000 թ.

- 4.01 - Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բալ Սնանդ
- 13.01 - Հայաստանում ՍՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոն
- 29.01 - Եվրախորհրդի տնդական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակություն՝ Կոլո Կասագրանդի գլխավորությամբ

Փետրվար 2000 թ.

- 3.02 - Ռուսաստանի Դաշնության ՆԳ նախարար Վլադիմիր Ռուչայլո
- 3.02 - Սլովակիայի պատվիրակություն՝ Սլովակիայի Արտաքին գործերի և Էկոնոմիկայի նախարարներ Էդուարդ Կուկանի և Լյուբոմիր Հարախի գլխավորությամբ

ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբեր 1999 թ.

- 2.11 - Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի եկել՝ ՂՂ նախագահ Ռոբերտ Քոչարյանին
- 4.11 - Եպիսկոպոսաց դասի եկել՝ ՂՂ նախագահ Ռոբերտ Քոչարյանին
- 7.11 - Հանգուցյալ վարչապետ Վազգեն Սարգսյանի և ԱԺ հանգուցյալ նախագահ Կարեն Դեմիրճյանի ընտանիքներին
- 8.11 - ՂՂ վարչապետ Արամ Սարգսյանին
- 14.11 - ԱԺ փոխխոսնակ, հանգուցյալ Յուրի Բախշյանի և ԱԺ պարզամալոր Արմենակ Արմենակյանի ընտանիքներին
- 16.11 - ՂՂ Գիտությունների Ազգային Ակադեմիա
- 17.11 - ՂՂ Ազգային ժողով
- 27.11 - Անդրանիկ ուխտը Օշական՝ Ս. Մաշտոցի գերեզմանին
- 30.11 - Սահմանադրական դատարան

Դեկտեմբեր 1999 թ.

- 7.12 - Սպիրակ և Գյումրի
- 30.12 - ՂՂ բանակի զորամաս և հանրապետական հոսպիտալ

Նոյեմբեր 2000 թ.

- 29.01 - Առաջին պաշտոնական այցը ՂՂ Կրոնի գործերի պետական խորհուրդ
- 14-25.01 - Ուխտագնացություն Տերունական Սրբավայրեր

Փետրվար 2000 թ.

- 1.02 - ՂՂ վարչապետ Արամ Սարգսյանին
- 4.02 - ՂՂ նախագահ Ռոբերտ Քոչարյանին
- 4.02 - ՂՂ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանին

14-19.02 - Շվեյցարիա

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հնգօրյա այցով մեկնեց Ժնև

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

26-28 հոկտեմբեր 1999 թ. - Ազգային - նկեղեցական ժողով

Հայոց 132-րդ Հայրապետի օծումը

4 նոյեմբեր 1999 թ. - Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի օծման սրբազան սրաւորողությունը

Մարգալտների և թեմակալ առաջնորդների խորհրդակցական ժողով Մայր Աթոռում

3 և 14 դեկտեմբեր 1999 թ. - Ամանորյա ցրտակատարությունների համալսող ծրագրեր կազմելու նպատակով Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ փնդի ունեցավ Տարածքային կառավարման նախարար խոսքով Հարությունյանի գլխավորությամբ ՀՀ մարգալտների և թեմակալ առաջնորդների համալսող ժողով:

Եպիսկոպոսական ձեռնադրություն

19 դեկտեմբեր 1999 թ. - Ձևոմբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եպիսկոպոսներ ձեռնադրվեցին և օծվեցին Երուսաղեմի Արքեպիսկոպոսական տառարապետ Տ. Նուրհան ծ. վրդ. Մանուկյանը և Կ. Պոլսի Կրտսեական ժողովի արքեպիսկոպոս Տ. Արամ ծ. վրդ. Աթեշյանը:

Սպիտակի եկեղեցու օծումը

23 դեկտեմբեր 1999 թ. - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ փնդի ունեցավ Սպիտակի Ս. Հարություն եկեղեցու օծումը: Ներկա էր ՀՀ նախագահ Ռոբերտ Զոհարյանը:

Այցելություն Եղեգնաձոր

27 դեկտեմբեր 1999 թ. - Եղեգնաձորում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ բացվեց ուսուցիչների վերապատրաստման Վայոց ձորի կենտրոնը: Ներկա էր ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանը:

Նունվար 2000 թ.

Սուրբ Ծնունդ

6.01 - Ս. Ծննդյան և Աստվածախայրության Ս. Պատարագին ներկա էին ՆՆ նախագահ Ռոբերտ Ջոչարյանը, ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, վարչապետ Արամ Սարգսյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, նախարարներ, Հայաստանում հավապարմագրված օտարերկրյա դիվանագետներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում միջազգային, բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր:

Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում

31.01 - Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հինգ ճեմարանավարների ավարտաճառերի պաշտպանություն: «Գերագանց» գնահատականներ ստացան Թորգոմ արք. Տոնիկյանը՝ «Գևորգ Զ Չորեքյան, կյանքն ու գործունեությունը», և Վահան սրկ. Զաքարյանը՝ «Ս. Գրիգոր Տաթևացու «Մեկնություն Հովհաննու Ավետարանի» աշխատության մասին» թեզերի համար: «Քաջալավ» գնահատականի արժանացան Արարատ սրկ. Գափույանի՝ «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն», Մուշեղ սրկ. Հովհաննիսյանի՝ «Արդի բնագիտության և Աստվածաբանության փոխհարաբերությունները», Արա սրկ. Նալչաշյանի՝ «Հայոց Եկեղեցին» ավարտաճառերը:

Անդրանիկ կոնդակ

6.02 - Հրապարակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՐՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռ

Տ. Արշակ արեղա Խաչատրյան - Միջթեմական հարաբերությունների բաժնի տնօրեն

Գևորգյան Հոգևոր ճեմարան

Տ. Բառեեն արքեղա Սալրիյան - Տեսչի պաշտոնակատար

Տ. Հայկագուն ծ. վրդ. Նաջարյան - Վեպարվել է Կոստյի պաշտոնից՝ իր
դիմումի համաձայն

Ֆինանսա-տնտեսական բաժին

Ներսես Կարամանուկյան - Վեհափառ Հայրապետի վարչակառավարման
պծով խորհրդական

Մարինե Ղազարյան - Ֆինանսական բաժնի տնօրեն

Գնել Նաչատրյան - Տնտեսական բաժնի տնօրեն

Ռուբեն Ազատյան - Գլխավոր ճարտարապետ

«Էջմիածին» ամսագիր

Անդրանիկ Զեյթունյան - Գլխավոր խմբագիր

«Շողակաթ» սփռույթ

Մանյա Ղազարյան - Տնօրեն

Համակարգչային բաժին

Սմբատ Մարգարյան - Տնօրեն

Տեղեկատվական համակարգ

Արշավիր Գաբունյան - Տնօրեն



ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՏԻԱՐ ԼԱՅՆԸՆ ԿՈՒՍԹՈՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՌ ՄԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՆՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԻԱՐ ԼԱՅՆԸՆ ԿՈՒՍԹՈՆՆ,
ՈՐ Ի ՆԻՒ-ԵՈՐՔ, ԱՄՆ**

Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանից ուրախութեամբ փեղեկացանք, որ Դուք երկար փարիներ անդամակցելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի Ս. Գէորգ եւ Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցիների ծխական խորհուրդներին ու Առաջնորդարանի փարքեր յանձնախմբերին, Ձեր անսակարկ եւ օգտաշատ ծառայութիւնն էք բերում Տիրախնամ թեմին եւ Առաքելառաստապար մեր Սուրբ Եկեղեցուն:

Ձեր անկեղծ նուիրումի եւ երախտարժան վաստակի բարձր գնահատանքով Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնը եւ, ընդառաջելով բարեջան առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Մեր Կոնդակով շնորհում ենք Ձեզ Մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

բարձր շքանշանը:

Հստակ ենք, որ, Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով քաջայեր, Դուք առաւել խանդավառութեամբ եւ առաւել կորովաշատութեամբ պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն:

Այս ուրախ առիթով Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հաւնապազ գօրալիզ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընդանեաց անդամներին՝ պարգեւելով

քաջատույզ երկար կեանք, լիապրումն երջանկություն և գործող մշտանորոգ յաջողություններ:

Ողջ լըրուք ի Տէր, գորացեալ շնորհք Սրբոյ Հոգոյն, և յաւեր սրինսոյ ի Մէնք. ամէն:

(Դիկնութեամբ)

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Էտեղակս ի 7-ն Փետրուարի

ի թուին Տեսան 2000

և ի թուին հայոց ՌՆՆՏԹ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ 2

**ԽՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՏ
ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՆԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՀՔՄՆՀՄՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԻՍԻՆ**

**ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, ԱՄՆ**

Սրբի խոր գոեունակությամբ տեղեկացանք Ղուսիսային Ամերիկայի հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից, որ այս փարի հանդիսատրապէս նշուելու է Ձեր ծննդեան 85 եւ գրական գործունէութեան 65-ամեակը:

Մեծարժէք է Ձեր աւանդը հայութեան կեանքում: Դուք, աւելի քան կէս դար, Ձեր ստեղծագործութիւնների միջոցով ծննդավայրից ժառանգած նուիրումի ու գոհողութեան Ձեր ոգին փոխանցում էք մեր ժողովրդի աշխարհասփիւռ գաւակաց՝ նրանց ամենուր կոչելով հաւաքարքիմ մնալ հայոց ազգային նկարագրին եւ Առաքելաւաստարար մեր Սուրբ Եկեղեցուն:

Ուրախ ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որին «ողջ ազգն հայոց կապեալ կայ», Մեր օրհնութիւնը եւ սրտաբառի շնորհատրանքները յղելու Ձեր յոբելեանների առիթով եւ, ընդամաջ Տիրախնամ թեմի բարեջան առաջնորդի խնդրանքին, Նայրապետական Կոնդակով Ձեզ շնորհելու մեր Եկեղեցու:

Ս. ՍԱՆԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ

պարտույ շքանշանը՝ ի գնահատումն Ձեր հայրենանուէր գործունէութեան եւ գրական վաստակի:

Ի խորոց սրբի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Տէրը պարգևի Ձեզ քաջամոռջ արեւշարութիւն եւ ամենայն բարիք, որպէսզի Դուք շարունակէք Ձեր

նպատարը ընդել Հայոց դպրոցներ, եկեղեցուն եւ հայապահպանութեան նուիրական գործին:

Ողջ լըրոյք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն, եւ յսուկ օրհնեալ ի Մեր ամէն:

(Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ր

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Էռնդակս ի 7-ն Փետրուարի

ի թուին Տնտոն 2000

եւ ի թուին հայոց ՌՆՆԻՏԻ

ի Մայրապետս Արքայ Էջմիածնի

Ընդ համարաւ 3

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԷՏՎԸՐՏ ԵՎ ՊԱՐՊԸՐԱ
ՓԻԹԸՐԶՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎԱՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ
ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԷՏՈՒԸՐՏ ԵՒ ՊԱՐՊԸՐԱ ՓԻԹԸՐԶ,
ՈՐ Ի ՆԻՒ-ԵՈՐՔ, ՄՍՆ**

Փառք Երկնաւորին, որ արթուն և արարող է պահել հայութեան մէջ բարեգործութեան ոգին ի սփիւռս աշխարհի՝ յանուն ազգային հասարակական մեր կեանքի շինութեան և մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան:

Հոգու բերկրանքով Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից Կեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմում ազգօգուր ու եկեղեցաշէն Ձեր բազմաթիւ ձեռնարկումների մասին, որոնք բարի համբաւ են բերում Ձեզ և վարձք ամբարում երկնքում:

Ուրախ ենք անչափ, որ Դուք սիրով յանձն էք առել Ս. Պարարագի գրքի հրատարակման հովանաւորութիւնը, որը մեծարժէք ընծայ է մեր ժողովրդի հաւատարմութեան: Արդարեւ, երանեալ էք Դուք, քանզի բազում հայորդիք այսօր և ընդմիշտ երայխագէտ հոգով ու բարի մաղթանքով պիտի յիշեն Ձեզ և բիր աղօթք առ Աստուած բարձրացնեն՝ յանուն յարգարժան բարեդարներդ:

Համայն Հայոց Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը և խորին գնահատանքն ենք յղում Ձեզ և, ընդառաջելով Տիրախնամ թեմի բարեջան առաջնորդի խնդրանքին, սոյն Կոնդակով սիրով Ձեզ ենք շնորհում Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎԱՐԻՉ

բարձրագոյն աստիճանի շքանշանը:

Սրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած Իր հանապազօրհնութեան ներքոյ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը և զօրավիզ լինի

Ձեզ լարի ու հայրենասուրբ թուր իրագործումներում պարգևնւթով նրկնարուր չիւր
րարիքներ և յարանորոց յաջողութիւններ:

Շնորհք Տնտն մերոյ Յիսուսի Զրիարութի ընդ ձեզ ամենեսեան. ամէն:

(Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳՈՐ

ԿԱՌԱՐԱՆՈՒՄԱՐԽՆԱՅՆ ՎԱՅՈՅ

**Տուտ Կոնդակս ի 7-ն փնպրուարի
Յամի Տնտն 2000**

**և ի թալիս հայոց ՌՆԼՏԹ-
ի Մայրավանս Արորդ Էջմիածնի
Ընդ համարու 4**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ԽԱՉԱՏՈՒՐ ՅԱՏԸԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

**ԱՌ ՍԻՐԵՑԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆԻ
ՏԻԱՐ ԹՐԻՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԵԱՏԸԶԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, ԱՄՆ**

Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից գոեունակութեամբ Կեղեկացանք, որ Դուք երկար տարիներ, որպէս հարազատ զաւակ մեր Մայր Եկեղեցու, ազգօգուտ ու եկեղեցաշէն բազմաթիւ ձեռնարկումներով մեծարժան ծառայութիւն էք մատուցում ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմին, ի մասնաւորի Ս. Պեպրոս եկեղեցուն, որի բազմամեայ բարեբարն ու ծխական խորհրդի արեւնապետն էք:

Մեր հաւաքի նուիրական Կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Մեր սրտաբուխ աղօթքն ու բարեմաղթանքներն ենք միահիւսում Ս. Պեպրոս եկեղեցու բոլոր հաւաքացեալների առ Աստուած բարձրացուող աղօթքին՝ Ամենախնամ Տիրոջից երկնառաջ վարձարութիւն հայցելով նուիրեալ հայորդոյ: Մեր Հայրական օրհնութիւնը և խորին գնահատանքն ենք յղում Ձեզ եւ, Հայրապետական այսու Կոնդակով սիրով ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուով շքանշանը:

Մեր աղօթքն է առ Բարին Աստուած, որ Տէրը զօրավիզ եւ ապաւէն լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով բաջառողջ ու երջանիկ բազում օրեր եւ

յաջորդութիւններ հայրենասիրէր ևորակոր իրագործումներում: Թող Հեր կեանքի ողջ
րեքացքը օրինակ լինի իբր բարիքներով և ևրկնարուր շնորհներով:

Հնորիք Տեսուն մկրդ Յիսուսի Հգիսարոսի րեղ ծեղ ամենևնաւ, ամեն:

(Օրհնութեամբ՝

ԳՐԻԳՐԻՆ Ռ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՆԿՆԱՅՆ, ՏՈՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ն փնարուարի

Բամբ Տեսուն 2000

և ի քուին հայոց ՌԵԼԻԳԻՅԱ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ 5

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ
Տ. ԲԱԲԳԵՆ ԱՎԱԳ ՔԱՎԱՆԱ ՄԱԳՍՈՒՏԵԱՆԻՆ՝
ԾՆՆԴՅԱՆ 90 ԵՎ ՔԱՎԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ԱՌ ՄԻՐԵՑԵԱՄ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱՋԱՆՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ ԲԱԲԳԵՆ Ա. ՔՆՆ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆԻՆ,
ՈՐ Ի ՊՈՍԹՈՆ, ԱՄՆ**

Սիրելի Տեր Նայր.

Ուրախութեամբ փեղեկացանք Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի առաջնորդ, Գեղարշնորի Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից, որ այս փարի իանդիսատրապէս նշուելու է Ձեր ծննդեան 90-ի քահանայական գործունէութեան 50-ամեակը:

Ծանօթ ենք հայրենի կեանքում եւ հոգեւոր ասպարէզում Ձեր մեծարժան վաստակին: Կէս դար Դուք քաջ և բարի հովուի անխոնջ նուիրումով անձնդիր ծառայում էք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ բարեպաշտ ժողովրդին՝ հոգեւորականի Ձեր կեանքն՝ իմաստաւորելով ազգաշահ ու եկեղեցաշէն գործերով:

Ազնիւ ծառայ բարի եւ հաւատարմ:

ՆԱՅԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՅՍ ԳՐՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր ժրհետութիւնն ու խորին գնահատանքը: Յանուն Գերագոյն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան ընդունեցէք Մեր սրտաբուխ շնորհատրանքներն ու լաւագոյն բարեմաղթանքները պատուաբեր գոյզ յոբելեանների բերկրայի առիթով: Թող Ամենակարող Տէրը պսակի ու պահպանի Ձեզ առողջ եւ կենսուրախ, պարգեւի լիազգաց երջանկով:

թեան բազում առիթներ, հունապաշտ օրհնի Ձեր կեանքը զործոյց յաջողութիւններով ու երկնատուր թիւ պարգեւներով:

Ողջ լինուք ի Տէր, զօրացնալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւեր օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳՈՐԻՑԻՆ Բ

ԿԱԹՈՂՈՍԿՈՍ ԱՄԵՆԱԿՆ ՀԱՅՈՑ

Տոաւ Օրհնութեան Կիրս
 ի 11-ն Փետրուարի
 ի թուին Տեառն 2000
 եւ ի թուին հայոց ՌՆԼՆԸ-
 ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի
 Ընդ համարաւ 4

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳՐՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ
ՏԻԱՐ ՓԱՅՆԱԿ ԱՆԱՐՈՆՅԱՆԻՆ՝
ԱԶԳԱՅԻՆ - ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՏԻԱՐ ՓԱՅՆԱԿ ԱՆԱՐՈՆՅԱՆԻՆ,
ՈՐ Ի ՔԱՒԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ**

Լուսոյ հոորան Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր ողջոյնը, գնահատանքն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ ազգային-հասարակական կեանքում ամբողջանալու ծառայութեան 50-ամեայ գործունէութեան Ձեր Ոսկէ Յոբելանի առիթով, որի մասին խորը գոհունակութեամբ տեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի քարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից:

Տարիներ ի վեր մանկավարժի ազնիւ ու շնորհակալ կոչումով, անսակարկ նուիրումով Դուք ուսուցանել եւ հայեցի կրթութիւն էք տուել բազում հայ զաւակներին՝ սերմանելով ու գորացնելով նրանց մէջ հայրենապաշտ ոգին եւ ծառայութեան սէրը: Նշանակալի է Ձեր հասարակական գործունէութիւնը, ներդրումը նաեւ գրական-հրատարակչական, մշակութային ասպարեզներում ինչպէս Լիբանանի հայ կեանքում, այնպէս եւ ԱՄՆ փոխադրուելուց յետոյ:

Ի գնահատութիւն կենդարեայ անձնուէր ու արդիւնաշատ Ձեր ծառայութեանց՝ սիրով շնորհում ենք Ձեզ

ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԳԻՐԸ՝

աղօթքով առ Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջատոգչութեամբ ու կորովով լեցուն երկար կեանք, որպէսզի նոյն նոսրով, սիրով ու նուիրումով շարունակէք մասնակցութիւն բերել ազգային-հասարակական կեանքում: Թող Տէրը օրհնի եւ առաջ-

տորդի Ձևը ջանքերը՝ ի շինության Զուլիֆորնիայի հայ ազգային կնանքի և ի
 Եկեղեցու Մարտիրոսյան մեր Մարտիրոսյան Եկեղեցու:

*Ողջ լիցիք ի Տէր, զօրացնայր շնորհօր Մարտիրոսյան, և յաւեր օրհնեալ ի
 Լէւր. ամեն:*

(Օրհնութեամբ)

Գ.Մ.Բ.Բ.Բ.

ԵԶՄԻԱՇԻՆ ԵԶՄԻԱՇԻՆ ԵԶՄԻԱՇԻՆ

Տուա Օրհնութեան Գիրք

ի 7-ն Փետրուարի 2000 թ.

ի Մայրաթանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ 5





ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

**ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ,
ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ**

*«Աստուածային եւ երկնատը շնորհ,
որ միշտ լնու գպէրս սրբոյ սպասատորութեան
Մտաքեկական Եկեղեցոյ»
(Շարական)*

Այս փարի, փեփրվարի 29-ին, Սրբոց Ղևոնդանց քահանայից Կոնին մարուց-ված Ս. Պարարագի ընթացքում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ կարարվեց քահանայական ձեռնադրություն և օծում: Օրվա պարարագիչն էր Հոգեշնորհ Տ. Արարիկ վրդ. Տիգրանյանը: Աստուածային շնորհը կոչեց քահանայական ձեռնադրության չորս նվիրյալ սարկավագների, որոնք «յանձն առան կարարել զամենայն հրամանս սրբոց առաքելոց եւ հայրապետաց, եւ կալ ըստ կանոնաց նոցա... ամենայն պարաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ...»:

Ձեռնադրության նախորդ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, Կեղի ունեցավ Արթուր, Հրաչ, Վահան և Արարատ սարկավագների քահանայական կոչման արարողությունը: «Նայեաց ի մեզ» հոգեպարար շարականի երգեցողության

ներքո ընծայացուները ծնկեցին Մայր Տաճարի Ավագ դռան մոտ և աստիճանաբար, տաղմոտասացների ու դպիրների երգեցողության ներքո, խարտավիլակ, Հոգեշնորհ Տ. Արշեն արեղա Մանուսյանի ուղեկցությամբ, առաջացան դեպի Իջման Սուրբ Սեղանի առջև բազմած ձեռնադրող Սրբազանը՝ Գերաշնորհ Տ. Շահն արքեպս. Աճեմյանը, որը, ըստ Զեռնադրության Մաշտոցի, հարցեր ուղղեց խարտավիլակ Աճեմյանը, որը, ըստ Զեռնադրության Մաշտոցի, հարցեր ուղղեց խարտավիլակ Նայր Սուրբին և քահանայապետներին: Տեղի ունեցավ վկայություն ընծայացուների հավաքին, կյանքի, կրթության և գիտության մասին: Հարց ու պատասխաններին տեղեկացրեց հաջորդեցին Ավետարանում ստված Տիրոջ խոսքերը առաքյալներին այս կամ այն առիթով, որ արգաստեղծ Սրբազան Նայրը. «Այսպիսի ասե՛, Տեղեկ Բիսուս Բրիարոս, Ամենայն, որ եթող գլուխ կամ գեղարս... իտսպումս ամենակային Աստուծոյ Բիսուսի Բրիսպոսի արժանացուցել, գեղեց անճառ խնդութեան...»:

Այնուհետև կատարվեց Սուրբ Դրոբդրության մասին ուղղափառ հավաքի և դավանության, Դրիսպոսի մարդեղության մասին քննություն և խոստովանություն: Մեկ առ մեկ մերժվեցին և եզոժվեցին այն բոլոր հերքիչներն ու հերձվածողները՝ Արիստիս մինչև Եվրիստես և Արթուրիս, որոնք ուրացան Դրիսպոսին իրեն Աստված և մարդ «և ոչ Աստուածածին գնուրը՝ տյսն Մարիամ», չխոստովանեցին Սուրբ Հոգուն համագոյակից հորը և Որդուն, այսպես շարունակ մինչև «գլխուն և գլուխուն իր, գոր գրեաց գմին յերկուս բաժանեալ»: Հետո Սրբազան Նայրը հարցրեց. «Աշակերտի՛ր և հեղինի՛ր արդյո՞ւն Դիսնիսիսի Արիսպազացույն և հոնթեաի վարդապետին»՝ մեկ առ մեկ տալով այն բոլոր հայրապետներն ու վարդապետներն անունները, որոնք պահեցին ուղղափառ դավանանքն ու հավաքը, սահմանեցին Ուղղափառ Եկեղեցու կարգն ու կանոնը՝ մինչև Հովհան Որդեմեղի և Գրիգոր Տաթևացի: Վերջում ընծայացուներն առաջին անգամ բարձրաձայն կարդացին հավաքի խոստովանությունը՝ միասին արտասանելով «Խոստովանիմք և հաւարամք ամենակալար սրբի՛ւ զՆայրն Աստուած անեղ, անծին և անսկիզբն...»:

«Նայր մեր» և «Պահպանիչ» աղոթքներով ավարտվեց կոյման կարգը:

Հաջորդ օրը, փետրվարի 29-ին՝ տոն սրբոց Ղևոնդեանց քահանայիցն, հընթացս Ս. Պարարագի կատարվեցին Արթուր, Հրաչ, Վահան և Արարատ սարկավագների քահանայական ձեռնադրությունն ու օծումը՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահն արքեպս. Աճեմյանի և խարտավիլակությամբ Հոգեշնորհ Տ. Արշեն արեղա Մանուսյանի:

Պարարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած...»: Ընծայացուները արյանում ծունկի եկած, սաղմոսների և շարականների երգեցողության ներքո, մոտենալով բարձրացան Ա. խորան, որտեղ կատարվեց ձեռնադրության բուն մասը: Ընթերցվեցին բարոգներ, աղոթքներ ըստ Մաշտոցի, որոնց հաջորդեց հրաժարման պահը: Քահանայացու սարկավագները դառնալով արեմուրք, ձեռքերը վեր բարձրացրած, «Աստուածային և երկնաւոր շնորհ» երգի ներքո հրաժարվեցին աշխարհից և աշխարհայինից: Այնուհետև Սրբազան Նայրն իր աջը դնելով եպիսկոպոսների վրա՝ ասաց. «Ես դենն գծեոս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան

աղօթս արարեք, զի արժանի լիցին սոքա զաստիճան քահանայության՝ անարար պահել առաջի սեղանոյն Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև աղոթքներով և շարականներով փառաբանվեց Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձը, հայցվեց Սուրբ Հոգու շնորհը «առ ի մերժել եւ հեռացուցանել զամենայն ախտս չարաչարս եւ զայսս պիղծս ի մարդկանէ...»: Ուրարը, որ մինչ այդ սարկավազները կրում էին ձախ ուսին՝ իբրև Ջրիստոսի լուծի կիսով չափ կրողներ, Սրբազանն անցկացրեց յուրաքանչյուրի պարանոցով՝ այդպիսով խորհրդանշելով Տիրոջ ամբողջական լուծը:

Այնուհետև Չեռնադրության Մաշտոցից կարդացվեցին օրվա ճաշու ընթերցվածքները, և Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»: Այսպեղ ընդհատվեց Պատարագը, և դաիրները շարունակեցին երգել Չեռնադրության շարականները: Հաջորդաբար, աղոթքների ընթերցմամբ փոփոխվեցին քահանայական հանդերձանքը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը: Այսպես, Սրբազանը նախ զգեստավորեց փիլոնով՝ ասելով «Յիսուս Ջրիստոս հայեաց ի ծառայս ք...» աղոթքը, որից հետո սաղավարտը դնելով գլուխներին ասաց. «Ա՜մ քեզ սաղաւարտ փրկութեան...» աղոթքը, հետո փոփոխեց շուրջաւոր և վերջապես՝ գոտին, որով Սուրբ Հոգուց իշխանություն ստացան «կապելոյ եւ արծակելոյ», ինչպես ասաց Հիսուս Իր աշակերտներին: Այսպեղ փակվեց վարագույրը, և ընծայացուները «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո առաջին անգամ զգեստավորվեցին պատարագի հանդերձանքով: Վարագույրը բացվեց, և, հանդիսավորապես, Հոգեշնորհ Տ. Արքեպիսկոպոսն անդամակցեց իր ժողովին, որով Սուրբ Հոգուց իշխանություն ստացան «կապելոյ եւ արծակելոյ», ինչպես ասաց Հիսուս Իր աշակերտներին: Այսպեղ փակվեց վարագույրը, և ընծայացուները «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո մկրտության սուրբ ավագանից վերջերեց Սրբալույս Մյուռոնի աղավնին և ձախակողմյան աստիճաններով բարձրանալով՝ փոփոխեց Սրբազան Հորը: Սրբազանը երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականը՝ հեղեց Սուրբ Մյուռոնը բթնոցի (փաթեթի բաժակ) մեջ, որից հետո «Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի...» ասելով՝ դրոշմեց նրանց ճակատը, աջ և ձախ ձեռքերը՝ փայլով նրանց քահանայական անունները հետևյալ հերթականությամբ. Արթուր սարկավազը վերանվանվեց Տ. Մարթնոս, Հրաչ սարկավազը՝ Տ. Մարկոս, Վահան սարկավազը՝ Տ. Ղուկաս, Արարապ սարկավազը՝ Տ. Ղևոնդ: Հետո Սրբազանը նրանց հանձնեց Սուրբ Սկիի, մաղգման «հանդերձ կենարար Մարմնով եւ Արեամբ»՝ փայլով Սուրբ Պատարագ մատուցելու իշխանություն:

Վերջապես օծյալները փոփոխեցին քահանայական իրենց անդրանիկ օրհնությունը բազմաթիվ ներկա հավատացյալներին: «Պահպանիչ» աղոթքով ավարտվեցին Չեռնադրությունն ու Օծումը, և Սրբազան Հայրը նորընծաներին ուղղեց իր հայրական պարգամը՝ հիշեցնելով փոխ խորհուրդը, Ղևոնդյանց քահանայից անձնագրությունը: Այնուհետև ներկա բոլոր հոգևորականները մեկ առ մեկ բարձրացան Սուրբ Խորան և այդ օրվա ողջույնը առան նորած քահանաներից: Մ. Պատարագի

ավարտին երանց շնորհավորեցին նաև ղազմաթիվ հավաքագյալներ՝ համալուրելով երանց մյուտուևած աջերը:

Նույն օրը, երեկոյան, փնդի ունեցավ նորընծա Տ. Մաքթնոս, Տ. Մարկոս և Տ. Ղուկաս քահանաների արեղայից օրհնության կանոնը: Ձեռնադրող Շահն արքեպիսկոպոսը կարդալով Մաքթոցից աղոթքներ՝ իր օծյալ աջը հերթով դրեց նորընծաների գլուխներին՝ հայցելով Տիրոջ օգնությունը, Մուրր Նոգու էջքը և շնորհը: Մորազան Նայրն ընթերցեց նաև Մուրր Էբրտողության յուրաքանչյուր Մեծին ուղղոված աղոթքները, որոնցով երիցս օրհնվեցին արեղաները:

Արարողության վերջում կարարվեց վեղաղի օրհնության կարգ: Վեղաղները դրվեցին նորընծաների գլուխներին՝ իբրև կոաակրոն քահանայության խորհրդանիշ:

Աղոթքներ առ Աստված, որ Տերը հասարար պահի նորընծաներին իրենց կարգի մեջ և արժանացնի՝ լինել մշակ առանց ամոթո. ամեն:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄՍՅԻԼՅԱՆ

Գևորգյան Նոգևոր Ճնարանի

Զլսարանի սան





Տ. ՄԱՏԹԵՈՍ ԱՐԵՂԱ

ՊՈՂՈՍՅԱՆ

(ավագամի ամուսնը՝ Արթուր)

Ծնվել է 1968 թ. հոկտեմբերի 2-ին, Էրևանում:

1975-85 թթ. սովորել և ավարտել է Կուրայքի մարզի Գեղարդի գյուղի միջնակարգ դպրոցը:

1985 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1991 թ. Սուրբ Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսպոլյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1991 թ. սեպտեմբեր ամսից մինչև 1992 թ. եղել է վերակացու Էջմիածնի Հոգևոր ճեմարանում:

Րանում, այնուհետև Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի հրավերով ծառայության է անցել Շիրակի թեմում:

1997 թ. հոկտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտպանել է ավարտաճառ «Հատիճավանքը և նրա վանական դպրոցը» թեմայով՝ արժանանալով «լավ» գնահատականի:

Շիրակի թեմում Արթուր սրկ. Պողոսյանն իր ծառայությունը շարունակել է մինչև 1998 թ. սեպտեմբեր ամիսը՝ կատարելով Հոգևոր ընծայարանի տեսչի և ավագ վերակացուի պարտականությունները:

1998 թ. դեկտեմբեր ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից (կաթողիկոսական փոխանորդության շրջանում) հրավիրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և նշանակվել Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում որպես վերակացու, ուր ծառայում է մինչև այսօր:





Տ. ԵՄԵԳՅԱՆ ԱԲԵՂԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ավագամի ամուսնը՝ Հրաչ)

Ծնվել է 1973 թ. հունվարի 17-ին, Ասիի շրջանի Բարձրաշեն գյուղում:

1979-1990 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի համար 5 միջնակարգ դպրոցը:

1990-1996 թթ. ուսանել և ավարտել է Ա. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1996 թվականին, ձեռամբ Դերաշնորի Տ. Անանիա արքեպս. Արարաքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1996-1998 թթ. աշխատել է Ալեք և Մարի Անուկյանների անվան գանձարանը:

1997 թ. պաշտպանել է ավագության «Առաքյալապետի դպրոցը 17-րդ դարում» թեմայով՝ արժանանալով «Բացալավ» գնահատականի:

1998 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ մեկնել է Ազգային Բանակ՝ հոգևոր ծառայության:





Տ. ՂՈՒԿԱՍ ԱՐԵՂԱ

ՋԱԲԱՐՅԱՆ

(ավագանի ամուսնը՝ Վահագն)

Ծնվել է 1973 թ. նոյեմբերի 9-ին, Երևանում:
1980-1988 թթ. սովորել է Երևանի
Հովհաննես Հովհաննիսյանի անվան համար
52 միջնակարգ դպրոցում:

1988-1990 թթ. ուսումը շարունակել է
Խրիմյան Հայրիկի անվան համար 10 հա-
յագիտական թեքումով դպրոցում:

1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգե-
վոր ճեմարան և 1993 թ. վերցնելով փա-
կետում մեկնել է Հայոց Ազգային բանակ,
որի ժամանակ մասնակցել է Արցախյան
ազատագրման պայքարին, ի մասնավոր՝

Ջելաջարի ազատագրմանը:

1994 թ. վերադառնալով Էջմիածին՝ շարունակել է իր ուսումը Ս. Էջմիածնի
Հոգևոր ճեմարանում:

1996 թ. Սուրբ Ստեփաննոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս.
Սանթրուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1997 թ. ճեմարանն ավարտելուց հետո անցել է ծառայության Մայր Աթոռին կից
ԶԴԶ-ում որպես հրապարակչական բաժնի աշխատակից, միաժամանակ մաս-
նակցել կրոնի, ուսուցիչների պատրաստման գործընթացին՝ որպես դասախոս:

1999 թ. աշնանը ստանձնել է ԶԴԶ-ի ռադիո-հեռուստաեադրորդումների բաժնի
պատասխանատվությունը:

2000 թ. հունվարի 31-ին պաշտպանել է Սուրբ Գրիգոր Տաթևացու «Մեկնություն
Յովհաննու Անիարանին» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց»
գնահատականի:





Տ. ՂԵՎՈՆԻ ԶԱՆՈՒՄ

ԳԱՓՈՅԼՆ

(ավագամի ամուսնը՝ Արարատ)

Ծնվել է 1973 թ. սպրիլի 14-ին, Արարատի մարզի Ավշար գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում (1979-1990 թթ.): Միջնակարգ կրթության հետ համալրել (1985-1990) թշ. քնդունվել և ավարտել է Արարատի երաժշտական արվեստի դպրոցը:

1990-1997 թթ. ուսանել և ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:


1996 թ. Սուրբ Ստեփաննոսի տոնին, ձնամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է տարկավագ:

1997-1999 թթ. աշխատել է ԶԴԶԿ-ում որպես «Քրիստոնեայ Հայաստան» թերթի լրագրող՝ միաժամանակ լինելով փոփոխական բաժնի պատասխանատու:

1999 թ. հունիսի 15-ին ամուսնացել է և նույն ամսի 25-ին գորակոչվել Ազգային բանակ և այժմ ծառայում է Արմավիրի Մոտոհրսովձգային ուսումնական բրիգադում որպես հոգևոր խորհրդական:

2000 թ. հունվարի 31-ին պաշտպանել է «Սուրբ Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանությունը» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Զինծառայության ժամկետը լրանալուց հետո հոգևոր ծառայության պետք է անցնի Արագածոտնի թեմում՝ որպես հոգևոր հովիվ:



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 13-ը հիշարժան օր էր Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի համար, քանի որ այդ օրը, ձեռամբ թեմի առաջնորդ Ս. Տիրան արքեպս. Կյուրեղյանի, տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր ճեմարանի շրջանավարտ Գևորգ սարկավազ Վարդանյանի քահանայական ձեռնադրությունը:

Նախորդ օրը, հավարտ կիրակամտից երեկոյան ժամերգության, Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցում կատարվեց ընծայացու Գևորգ սարկավազի «Վեջման քահանայութեան» կարգը՝ խարտավիլականությամբ Ս. Պետրոս քահանայի: Ս. Տիրան Սրբազանը կատարեց ընծայալի հոգևոր իմացական պատրաստության և ուղղափառ դավանության հարցի քննությունը: Առաջադրված բոլոր հարցերին դրական պատասխանեց խարտավիլակ Տեր Հայրը, իսկ ընծայացու սարկավազը հանձն առավ հավատարիմ մնալ իր ուխտին, լինել Հայաստանյայց Եկեղեցու արժանի սպասավորը:

Հաջորդ օրը, առավոտյան, Ս. Պատարագ մատուցվեց: Օրվա պատարագիչն էր ձեռնադրող Սրբազան Հայրը: Մինչ Սուրբգրային ընթերցումները, ընդհատվեց Ս. Պատարագը, և ընծայալը, սաղմոսների փոխասացությամբ և խարտավիլակ Տեր Հոր առաջնորդությամբ, ծնրադիր բարձրացավ Ս. Խորան՝ «առ ոտս» Սրբազան Հոր, և, դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից երաժարման՝ կոչվելու համար «...ի սարկաւազութենէ ի քահանայութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեան»: Այնուհետև «Աստուածային եւ երկնային շնորհ» շարականից հետո նորընծան ծնրադիր մտրեցավ Սրբազան Հորը, որն իր ձեռքը դնելով նրա գլխին՝ աղոթաբար արտասանեց. «Եւ դնեմ զձեռս ի վերայ սորա, եւ դուք ամենեքեան աղօթս արարե՛ք, զի արժանի լիցի սա յաստիճան քահանայութեան՝ անարար պառել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Նորընծային զգեստավորելուց հետո ձեռնադրող Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռոնով օծեց նրա ճակատն ու ձեռքերը՝ վերանվանելով Ս. Գևորգ քահանա:

Հավարտ Ս. Պատարագի ներկա հավատացյալները առաջին Աջախամբույրով և բարի մաղթանքներով շնորհավորեցին նորած Տեր Հորը:

Արժանապատիվ Ս. Գևորգ քահանա Վարդանյանը ծառայելու է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում՝ Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցում:

Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ (սովսովսկի անունը՝ Գաորգ)

Ծնվել է 1976 թ. սեպտեմբերի 26-ին, Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է Կոնի Ռ. Պարկանյանի անվան թիվ 9 միջ-

նակարգ դպրոցը:

1993-1998 թթ. ընդունվել և ավարտել է Սևակ Կազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1998-1999 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Դննսրանի Զ լսարանը:

1999 թ. մայիսի 23-ին, ծնումը Տ. Ասկան Ապս. Գարիարյանի, ձեռնաստրվել է

ստրկավագ:

Նույն թվականի հունիսից ծառայության է անցել Մոսկվայի Ս. Հարություն
Եկեղեցում:



ԼՈՒՐՆԵՐ

Փետրվարի 6-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Ս. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Նայր մեր»-ից առաջ Մայր Տաճարի լուսարարապետ Ս. Նուսիկ արքեպս. Սանթրույանն ընթերցեց Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը (ՏԵՆ էջ 3):

Ս. Պատարագին ներկա էր Վաեափառ Հայրապետը:

Փետրվարի 13-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Ս. Ներսիս արքեպ. Խալաթյանը: «Նայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Փութասցի՛ր գանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ» (Բ Տիմոթ. Բ 15) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վաեափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Տյառնընդառաջի նախապտոնակ կատարվեց: Նախապտոնակի ավարտին Մայր Աթոռի ողջ միաբանությունը՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները և բազմաթիվ հավատացյալներ հավաքվեցին Ճեմարանի մարգաղաշքում Տյառնընդառաջի խարույկը վառելու և տոնը երգերով ու ասմունքներով դիմավորելու համար: Տոնախմբության ընթացքում եկեղեցու կանթեդներից վերցված կրակով Վեհափառ Հայրապետը վառեց ավանդական խարույկը:

Փետրվարի 14-ին, երկուշաբթի.- Ա. օր Առաջադրաց պահոց: Տեսունընդամաս: Տոն քառասունօրեայ գապտեանն Բրիսպոսի ի Տաճարն:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը հնգօրյա այցով մեկնեց Ժնև:

Նույն օրը Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Ս. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Նայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Արդ արձակես զժառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ գփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդաց» (Ղուկ. Բ 29-31) բնաբանով:

Փետրվարի 19-ին, շաբաթ.- Մորոցն Մարգսի գորավարին և ողորոյ և որա Մարտիրոսին և չորեքրասան զինուորացն:

Այսօր, երեկոյան ժամը 22.30-ին, Ժնևից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը:

Փետրվարի 20-ին, կիրակի.- Զ. կիր. զկնի ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ա. Պատարագ մատուցեց Տ. Ան-
պոսի եպս. Չուլջանը: Ա. Պատարագի սկզբում Մայր Տաճար բերվեց (Մեղրանիկ Զո-
րավարի աճյունը: «Հայր մեր»-ից առաջ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գաբրեղին Բ Մմենայն Հայոց
Կաթողիկոսի բարձր ևսխազահությամբ Կրեդի ունեցավ հոգևորականության արարո-
ղություն, որից հետո գորավարի հիշարանին հմիրված քարոզ խոսեց «Լեհափառ
Հայրապետը՝ «Մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշարակ կթող» բնարանով (ՏՆՏ
ԼՁ 10): Դնարով ավարտին գորավարի աճյունը դուրս հանվեց Մայր Տաճարից և
շքախմբի ուղեկցությամբ տարվեց Երևան՝ հռչակելու համար:


Փետրվարի 27-ին, կիրակի.- Է. կիր. զկնի ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ա. Պատարագ մատուցեց Մայր
Աթոռի միաբան Տ. Թադևոս վրդ. Զիրնկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագից
Հայր (Սուրբ) քարոզ խոսեց՝ «Եւ եղև հերձուած ի մէջ ժողովրդեանս վասն նորա»
(Հովհ. Է 43) բնարանով:

Ա. Պատարագին ներկա էր «Լեհափառ Հայրապետը:

Փետրվարի 29-ին, երեքշաբթի.- Սրբոց Առնողեանց քահանայիցն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ա. Պատարագ մատուցեց Մայր
Աթոռի միաբան Տ. Շահն արքեպս. Աճմյանը: Հրեթացս Պատարագի Կրեդի ունե-
ցավ քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրությունից հետո Տ. Շահն արքեպս.
Աճմյանը քարոզ խոսեց՝ «Աստուածային և երկնատուր շնորհ, որ միշտ լնա զպէտս
սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ» (Մաշտոց ձեռնադրության)
բնարանով:



ԽՕՍՔ

ԳԻՒՏ ԱՐՔԵՊՍ. ՆԱԳԳԱՇԵԱՆԻ՝

ԿԱՐԴԱՅՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ

ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻՆ ՄԷԶ

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆԵԱՆԻ ԱԺԻԻՆԻՆ

ԱՌՋԵԻ, ԱՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՌԹԻԻ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԻ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

(Փառիզ, 15 փետրուար, 2000 թ.)

Սիրելի Զօրավար.

Քաճաճալք եւ ժողովուրդք վերստին Ձեր շուրջն են այստեղ, այն Մայր Տաճարին մէջ, ուր դէպի հայրենեաց երկիր, դէպի հայրենի Ռոդ՝ հայրենի տուն Ձեր ուղեորութեան ճամապարհին կանգ առիք ասկէ 72 տարիներ առաջ:

Այսօր Ձեր ուղեգնացութեան վերջին հանգրուանն է: Համայն ազգն Հայոց կ'ողջունէ Ձեզ Վարդանանց ճակատամարտի յիշատակով. զօրակամք եւ ժողովուրդք իրենց՝ առաջնորդին շուրջ համախմբուած՝ հսկումով կ'աղօթեն հաղորդուելու եւ վերանորոգուելու իրենց Հերոսին շունչով՝ վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց:

Այս վերանորոգ ապրումով նորէն կը տեսնենք Ձեզ «իբրեւ արծիւ սաւառնում էք լեռ ու ծայր, Թմրացնում էք երկինք, երկիր տեղաշարժ» եւ հաւատքով կ'աղօթէք՝ «Տէր, կեցո՛ր դու զՀայս եւ արա՛ զնոսա պայծառ, Զազգ մեր համայն փրկեա՛ր ի թշնամեաց» եւ վերջապէս կը հայցէք՝ «Զողորմութիւնդ վերին հաճեա՛ ձօնել նոցին»:

Հայրենասիրութեան քացարձակ հաւատքը եւ ազգին ու Եկեղեցւոյ ծառայութեան ուխտը որպէս «հաւատամք» մեր կեանքին, կը փոխանցէիք մեզի:

Սիրելի Զօրավար, «Ազգի՛ն ծառայ, քարի եւ հաւատարիմ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո», յարգանքով կը խոնարհիմք քու վաստակիդ առջեւ եւ կը հաւատարմանք Ձեզ, թէ «Հայոց կուսանք դափնեայ պսակ կը Քիւսեն» եւ «Քեզ երանեն մեծնայն ազինք»:

Սիրելի հարազատներ.

Վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ ծառայելու ւաւանդն է, որ կը ստանանք Զօրավարէն որպէս «ծառանգ». զայն ապրելով՝ յաւիտենական իր բնակարանին մէջ պարտինք ուրախացնել զինք՝ անվերապա հօրէն Քեռեղելով իրեն, որպէս զի օր մը պատմիչը չգոհանայ միայն արձանագրելէ «Իշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» ինքնագոհութեան խաբկանքը:

Սիրելի Քայրեմակիցներ,
 Եկեք ձայնակցի՞մք Երջանկայիշատակ Եղիշէ Պատրիարքի՞ն, որ իրապէս
 ամենուս զվարցումները կը քանաձնուի, երբ կ'իսէ:

«Այո դեռ կ'ուզեմ՝
 Հազարատու Ռերոսներու
 Արիւմտ արդար, իւրես մելամ,
 Դրելու երգմ յիշատակի՞մ՝
 Մահուամբ մահը կոխողի՞ն,
 Սիրտը որում՝
 Տրոփելէն դեռ չէ դադրած
 Կուրծքերում տակ մեր բայորի՞մ»:

Ու տակաւի՞ն՝

«Ալիքներուն մէջէն ամոռց,
 Կրակ թնով կը սաւառցի,
 Միմչես այսօր,
 Գրոհներու խորհրդանիշ,
 Մեր դարերու անմահ ոգի՞ն,
 Հայելիին մէջ անցնալի՞մ՝
 Կ'արտացոլայ
 Բանակն ահա Աւարայրի,
 Զիւն վրայ իր սպիտակ,
 Ու դաշտերը Քայրեմիքի՞ն,
 Տրոփելէն կը սարսռան
 Երկաթազէն ու կատաղի,
 Իջած ձունկի՝
 Խարոյկի՞ն շուրջ, որ կը վառի
 Զերթ Մորեմի՞ն,
 Ոսկորներէն Ռերոսներուն
 Ու Սուրբերուն,
 Պաշտամունքի յանձնակա՞ն
 Հայրեմիքի՞ն»:

Բարի ճանապարհ Զեզ, յաւիտեան երախտաւոր, աննման Զօրավար:





ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՉԻՖԹՄԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԴԷՄ ԱՌ ԴԷՄ

ԻՆՉՈ՞Ւ Է ՆՆՋԵՑԵԼՈՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Հիմ ժամանակներէն մինչև այսօր շատեր հարց տուած են ու տակաւին կը շարունակեն տալ, թէ ինչո՞ւ հոգեհաճոյստ կը կատարենք: Առանց նկատի ունենալու կրօնական դաստիարակութեամբ ամոքող ունեցած ենթահողը, եկեղեցական կանոններու ըմբռնում չունեցողն ու հաւատացեալ մարդը նոյն հարցումը կրճաւ ուղղել: Ամշուշտ իրենց նկատողութեամբ մէջ կը տարբերին երկու տեսակի հարցադրողները, սակայն հարցումը գրեթէ նոյնն է թովածդակութեամբ իմաստով. «Ինչո՞ւ է հոգեհաճոյստը, երբ անձը իր կեանքը այս կամ այն ձևով ապրած է ու մամաւանդ՝ այժմ մեռած»:

Ամսահոյսեամբ գաղափարը մախաքրիստոնէական հիմք ունի, ինչպէս պատմութիւնը կը վկայէ, և հմայուզութիւնը կը հաստատէ՝ ցոյց տալով հիմ մարդոց հաւատալիքները մեռած ամօքորու վերստին ողջացման մասին: Հիմ եզիպտացիներ և այլ ցեղեր մեռող ամօքի հետ թաղած են ոչ միայն իր գոյքերը իբրև յիշատակ, այլ նոյնիսկ իր զէնքերը՝ գործածութեամբ համար...: Բրիստոնէութիւնը ամսահոյսեամբ գաղափարին տուաւ մոր տարագատում մը՝ լուսաւորելով այն խաւարը, որ դարձելով պատած էր մարդկային միտքը անդեմական կեանքին մասին: Բրիստոնէութեամբ այս ըմբռնումն էր, որ հաւատացեալներու մտքին մէջ շեշտադրեց այն իսկական յարգանքը, որ ներկայիս ունինք մեր մզեցեալներու յիշատակին նկատ-

տուծոյ. «Ով Տէր Աստուած, քու օծեալէդ երես մի՛ դարձներ, և քու ողորմութեամբդ յիշէ՛ քու ծառադ՝ Գաիթը» (Բ. Մնաց. Զ. 42): Եբրայեցիներ նոյնիսկ ծով կը պահէին մեջեցեալներու յիշատակին, իբրև սուգ: Սատուդի համար Գաղապդի Յաքիսի բնակիչները եօթ օր ծով կը պահեն (Ա. Թագ. ԼԱ. 13):

Մայրեմի մեր Եկեղեցին մեջեցեալներու ընծայուած աղօթքը կը կատարէ՝ խրմորելով Աստուծմէ՝ ներել ամոնց ներելի և անգիտակցաբար գործած յանցանքները: Հոգեհամզատեան այս աղօթքը առնչութիւն չունի անշուշտ Հոռմի Կաթողիկ Եկեղեցւոյ 7-րդ դարու վերջաւորութեան բանաձևած «Քաւարան»-ի վարդապետութեան հետ: Սոյն վարդապետութեան համաձայն, մարմինէն զատուած հոգին ամփջապէս կը դատուի իր գործերուն համաձայն և կ'անցնի արքայութիւն կամ կ'ոտարկուի դժոխք: Իսկ եթէ փոքր մեղքեր ունի և չէ կրցած քաւել զամոնք իր կեանքի ընթացքին, Քաւարանի մէջ կը մնայ և ի վերջոյ արդարացած ու սրբուած կ'անցնի արքայութիւն: Ասոր պիտի յաջորդէ անշուշտ Վերջին Դատաստանը:

Մասնակի այս դատաստանը չէ ընդունուած Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կողմէ և ամոր փոխարէն, Տիեզերական առաջին երեք ժողովներու ոգիով, մեր Եկեղեցին կը հաւատայ միայն Վերջին Դատաստանին: Մինչ այդ, մեջեցելոց հոգիները կ'երթան տեղ մը, որ մեր աստուածաբանութեան մէջ կը կոչուի «Հոգիներու Կայան», ուր կը սպասեն ամոնք մինչև Վերջին Դատաստան: Արդարեւորում հոգիները միախտմբ կը հրճուին ապագայ երանութեան տեսիլքով, իսկ մեղատուներուն հոգիները՝ ապագայ տանջանքի սարսափով:

Թէ մեր հոգեհամզատեան աղօթքը տարբեր մօտեցում ունի՝ ասոր փաստը կարելի է գտնել նաև մեր Պատարագին մէջ: Պատարագիչ քահանան այնպիսի մեջեցեալներու համար կ'աղօթէ իր ծածուկ աղօթքներուն մէջ, որոնցմէ մի քանիսն սրբութիւնը և արդարութիւնը Ս. Գիրքով հաստատուած են արդէն: Այսպէս, «Աստուածածնին Սրբոյ Կուսին Մարիամու և Յովհաննու Մկրտչին, Սրբոյն Ստեփանոսի Նախավկային...» և դարաց դասը եկեղեցիին փոխարէն կ'երգէ. «Յիշեա՛, Տէր, և ողորմեա՛: Կրճա՛մք ըսել, թէ Ս. Աստուածածնի հոգին այսինչ կամ այնինչ տեղ է, կամ արդարացա՛ծ է, թէ ոչ: Բնական է, որ արդար է: Բայց և այնպէս տակաւին կ'աղօթենք ամոնց հոգիին համար: Ուրեմն, հոգեհամզատեան պաշտօնը Աստուծոյ ուղղութեամբ գութ հայցելու աղօթք մըն է մեր քոյր մեջեցեալներուն հոգիներուն համար և ոչ թէ միայն մեղատուներուն կամ քաւուելու ընթացքի մէջ եղողներու համար: Մեր հայրերու գրած հանգստեան շարականն ալ ընդհանուր գութ հայցելու նոյն մտածումը կ'արտայայտէ. «Գթա՛, Տէր, մեր մեջեցեալներու հոգիներուն, և քու ողորմութեամբդ յիշէ զամոնք, որովհետև քու սուրբ արեանդ գինն ենք...» (Ծարական):

Ներկայիս այս արարողութիւնը՝ հոգեհամզատեան պաշտօնը, մեջեցեալին համար աղօթք մատուցելէ աւելի ամոր պարագաները յարգելու ձևականութեան ճանքուն մէջ մտած է: Այնքան մը, որ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ բարեպաշտներու ներկայութեան քանակը կարելի է ճշդել հոգեհամզատի համար կատարուած խնդրանքներու թիւէն դատելով...

Տարօրինակ է մոլմիսկ լսել, ոո ոմամք Ռոզենհամզիստ ըսելով կը Ռասկըմամ Ռոզենհաշը միայն: Ընաշարամներու սրահներում մէջ կատարուող «Ռոզենհամզիստ-մերու» մասին կ'իմամանք, որոնք մոլմիսկ, առանց առաւօտում եկեղեցւոյ մէջ կատարուած Ռոզենհամզիստին պաշտօնին, և ոչ ալ տեղւոյն վրայ մըմումք մը աղօթքի՝ սոսկ կերակուրով և խմիչքով կը կատարուին... Հոգենհամզիստը կերակուր ըլլալէ առաջ և վեր. Ա՛ՂՕԹՔ է: Իսկ այդ աղօթքը մեր քրիստոնէական պարտականութիւնն է՝ ամբողջ եկեղեցւոյ Ռամար կատարուած:

Յարգէ՛ մեքեցեալներդ աղօթքով, որպէսզի անոնք ալ քեզի Ռամար քարեխօս ըլլամ Աստուծոյ՝ Արդար Դատաւորին մօտ:



ԲԱԲԿԵՆ ՍՐԿ. ՆԱՆՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Մեր Տեր Հիսուս Քրիստոս մարմնամալով, մարդամալով ու ճնշվելով Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնից՝ իր երկրային կյանքով, հարությանը ու համբարձմանը եկավ մարդկանց հրաշափառապես փաստելու, որ մարդկության համար իղձ ու օվիորական ցանկություն դարձած Փրկությունն ու Ամնափրությունը անհրաժեշտապես և մտացածին բաներ չեն։ Դրանք գոյություն ունեն և հասանելի են բոլորին՝ առանց որևէ խտրականության։ Իր աստվածային առաքելությունը իրագործելով՝ Ամնաստեղծ Փրկիչը հաշտության միջնորդ ու զոհ դարձավ մարդկանց և Աստծո միջև։

Միջնորդության հայտնությունակա համգամաճքն ի սկզբանե իսկ ներկա է եղել մարդկության պատմության մեջ։ Հիմ Ուխտից սկսած դրա ի հայտ գալը պայմանավորված էր արարչաստեղծ բարձրությունից ու դրախտային մաքրությունից զրկված մարդու՝ իր Արարչի հետ ամբողջական հաղորդակցության անկարողությանը։ Առաջին անկումը, սակայն, չդարձավ մարդկության վերջին անկումը...

Աստված մշտապես մարդկությանը միջնորդաբար ընդառաջ է եղել.

ա. Նոյ արդարով,

բ. Նահապետներով - օրենք,

գ. Դատավորներով - օրենք,

դ. Մարգարեներով - մարգարեություն։

Աստվածային սերը մարդկությանն նկատմամբ չսահմանափակվեց միայն սրանով, մասնավորապես եթե նկատի ունենանք, որ բոլորը, սկսած առաջին ճահապետից և վերջացրած «վերջին մարգարե» Հովհաննես Մկրտիչով, մարդկությանը ճապատորապես էին Աստվածային ամոքախաղեպ օվիորաբերությամբ. «Ձի այնպես սիրեաց Աստուած զաշխարհ, միմչև զՈրդին իւր միածին ետ, զի ամենայն, որ հաւատայ ի մա, մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտեանականս» (Հովհ. Գ 16)։ Այսպիսով, Հիսուս Քրիստոս՝ Որդին Աստծո, դարձավ միակ, ճշմարիտ և ամփոխարինելի Միջնորդը մարդ արարածի և Արարիչ Աստծո միջև¹։

Քրիստոսի հետ և Քրիստոսից հետո մարդու և Աստծո միջև միակ Միջնորդը դարձավ Սուրբ Հոգով (Գործք. Ի 28) առաքնորդվող և Քրիստոսի խորհրդավոր մարմին եղող Եկեղեցին (Եփես. Ե 28, Կողոս. Ա 18, 24)։

¹ Հարկ է հիշել նաև, որ Քրիստոսի Ծնունդը հայրերի կողմից ընկալվել է որպես Հայտնություն՝ Աստվածախայտություն - *Εποφάνεια*, *Θεοφάνεια*, *Epiphania*, *Theophania*.

Պատմությունը եկավ փաստելու, որ Եկեղեցու ճամապարհն իր վարդապետի խաչի ճամապարտի կրթնօրհնակն էր, իսկ պատկը՝ պատրաստված էր մուլմ փշե-
րից: Բրիստոնեության Ռիմադրումից ի վեր տարբեր մոլորությունները մի պահ
ամզամ չեմ դադարել Եկեղեցում ճնշելուց ու Ռալաձելուց: Ժամանակի ընթացքին
ամհրաժնշտ է եղել պաշտպանել՝ Բրիստոսի ուղղափառ Ռավատքն ամադարտ և
սուրբ պահելու Ռամար: Լճարդկային սահմանափակ միտքը, սակայն, ամեմ ամզամ
չէ, որ կարողացել է պատշաճ պատասխաններ պտմել. չէ՞ որ «իմացողը իմացու-
թյամբ իմացարար իմանում է իմանալի իմացումը»², քայք ոչ երբեք՝ ամիմամալին,
որն Աստծուց տակավին չի Ռայտմվել մարդուն:

Ահա Ռեմց այսպիսի դժվարին կացություններում ու ճգնաժամային վիճակներում
է, որ տեղի է ունենում Աստվածային Հայտնությունը³:

Իմչալե՞ս ճամաչել, սակայն, ճշմարիտ Աստվածային Հայտնությունը: Այս Ռար-
ցը որքան դժվարին, մուլմքան էլ կարևոր է եղել: Այդ իսկ պատճառով ժամանակի
ընթացքում մշակվել են Ռամապատասխան չափանիշներ, որի բավարարման դեպ-
քում միայն որևիցե Ռայտնություն կարող էր Ռավակմել որպես Աստվածային Ռը-
չակվելու և ԸնդՌամրական Եկեղեցու կողմից ընդունելության արժանամալու:
Դրամք են.

1. Հայտնութեմական ճշմարտության թովանդակությունը.
2. ԸնդՌամրական Եկեղեցու ընդունումը:

Ա. ՀԱՅՏՏՆՈՒԹԵՆԱԿԱՆ ԺՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր Ռայտնություն մախ և առաջ մամրագնին քննում են Եկեղեցու
վարդապետները: Այն իր Ռերթին պետք է Ռամապատասխանի Ռիմնական երկու
չափանիշների.

² Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հայոց Պատմություն, Երևան, 1982, էջ 243:

³ Մեր Ռողվաճը բնավ նպատակ չուցի ընդդրկելու աստվածաբանության մեջ «Աստ-
վածային Հայտնություն» վերնագրի տակ Ռայտնի բավականին տարրողունակ բնագավառը:

Ինչ վերաբերում է այլադավան կրոններին, ապա մեզ ծանոթ Հայտնությունը
Ռանդիպում է միայն մովսիսականության և մահմեդականության մեջ: Այլ կրոններում
գերագույն գոյության ընկալումն այնպիսին է, որ կարծես քացառում է Ռայտնությունը՝ իր
չափազանց շեղվածության (բրահմանիզմ, բուդդիզմ, դաոսիզմ) և իր չափից ավելի
նյութականության Ռամար (այդպիսին են բոլոր նատուրալիստական և միֆոլոգիական
կրոնները): Տե՛ս Энциклопедический Словарь (Брохгауз и Эфрон), том 22, С. —
Петербург, 1897, стр. 424.

ա. Համաձայնություն Սուրբ Գրքի հետ

Նորահայտ հայտնությունը, որը համոզեց է գալիս տեսական ուսմունքի տեսքով, պետք է ամբողջովին համահունչ լինի Սուրբ Գրքի հետ, որը «Հայտնության բառացի արտահայտությունն է»⁴: Այն, որ մի խնդրի շուրջ Աստվածաշունչ մատյանը հստակ տեղեկություններ չի հաղորդում, և կամ որևէ եզր առհասարակ բացակայում է Սուրբ Գրքից, դեռևս վերջնական և վճռորոշ փաստարկներ չեն հոգուտ հայտնության ժխտմանը: Որևէ հարցի կապակցությամբ սուրբգրային լուծությունը ամենևին էլ անհամաձայնություն չի նշանակում⁵: Պարզապես մոյմ Սուրբ Գրքում առկա են այնպիսի հատվածներ, որոնց անուղղակիորեն գալիս են փաստելու և վավերացնելու խնդրո առարկայի ճշմարտացիությունը: Անշուշտ, բոլորովին այլ և նախնական բարդություններ չհարուցող պարագա է, երբ Աստվածաշունչը տվյալ հարցի վերաբերյալ ուղղակի վկայություններ է պարունակում:

Այդուհանդերձ, սրանով հարցն իր վերջնական պատասխանում ու միանշանակ լուծումը չի ստանում: Բամբ այն է, որ հատկապես Նոր Կտակարանում առկա են այնպիսի հատվածներ, որոնք առաջին հայացքից կարող են միմյանց ոչ միայն չհամապատասխանող, այլև բացառող և իրարամերձ թվալ: Դրա ամենացայտուն օրինակը Զիթենյաց լեռան վրա, Գեթսեմանի պարտեզում, Քրիստոսի արտասանած աղոթքն է. «Հայ՛ր, եթե կամիս, անցո՛ւ՝ զբաժակս զայս յինչն. բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին» (Ղուկ. ԻԲ 42): Ոմանց համար սա ամհասկանալի և անբացատրելի էր թվում. «Իմչպե՞ս «Ես և Հայր իմ մի ենք» ասող Քրիստոս կարող էր տարորոշել իր կամքը Հորից», - տարակուսում էին մրանք: Եթե Հոր կամքը մի բան է, Որդու կամքը՝ մեկ այլ, հետևաբար տրամաբանորեն բխում է, որ Սուրբ Երրորդության երրորդ Անձը՝ Սուրբ Հոգին ևս պետք է ունենա իր անկախ կամքը, որն էլ իր հերթին կլինի մեկ ուրիշ բան: Այսպիսով կունենանք եռականյա մեկ Աստվածություն:

Նման հերձվածներն այնքան պատվեցին ուղղափառ աստվածաբանության շուրջը, մինչև որ Եկեղեցին ընդունեց «Համակամության վարդապետությունը»:

Այստեղից կարելի է հետևեցնել, որ մույնիսկ Նոր Կտակարանում կան այնպիսի հատվածներ, որոնք կարիք ունեն հավելյալ մեկնաբանության և համապատասխան վերլուծության: Սա է ենթադրում մահ (չափավոր) կրիտիցիզմով հագեցած բողոքական աստվածաբանությունը, որի հետքերով գնաց մահ կաթոլիկ աստվածաբանությունը, որն իր «Instruction on the Historical Truth of the Gospels» (Roman Pontifical Biblical Commission-1964)-ով հայտարարեց, թե Ավետարանները

⁴ Вл. Лосский, Мистическое Богословие (= МБ), Киев, 1991, стр. 102.

⁵ Այսպես, կաթոլիկ աստվածաբանները, շահարկելով այս հանգամանքը, գտնում են, որ Սուրբ Գրքում չկա ոչ մի ուղիղ վկայություն Սուրբ Հոգու՝ Որդուց ելնելու մասին, որը դեռևս չի ճշմանակում, թե Սուրբ Գիրքը բացառում է այդ: Նրանք պնդում են, որ կան համարներ, որոնք պարզորոշ կերպով ծանուցում են Քրիստոսի Հոգու՝ Քրիստոսից բխելու մասին: Տե՛ս Յ. Եփանովիչ, Записки по общительному богословию, Новочеркасск, 1891 г., стр. 18 - 19, ինչպես նաև Георгий Титов, Уроки по пространному христианскому катехизису, Православная Кафолическая Восточная Церковь, Тифлис, 1877 г., стр. 12.

Օրթոդոքս եկեղեցին ևս «Առաքելական Սրբազան Ավանդության» տակ հասկանում է այն Ավանդությունը, որը գալիս է առաքելական շրջանից և որը 1-4-րդ դդ. այդպես էլ անվանվել է՝ «Առաքելական Ավանդություն»⁸:

Հռոմեական եկեղեցին, սակայն, Ավանդության իր ընկալումն ունի: Արդեն Տրիտենոյան XIX ժողովը (1545-1563) Ավանդությունն ավելի բարձր դասն է միայն տվյալ ժողովից, այլև ընդհանրապես Սուրբ Գրքից: Վերջին որոշումը, ինչպես կոտենենց քիչ հետո, ժխտվեց Կաթոլիկ եկեղեցու հետագա դավանաբանական որոշումներով: Տրիտենոյան ժողովի մասնակից Կոռնելիոս Մուսսը հայտարարում էր, որ հավատքի հարցերում նա Պապին ավելի է վստահում, քան հազարավոր Օգոստինոսների և Հերոնիմոսների: Ահա հենց այս ենթահողի վրա էլ Հռոմի մեծահամբավ Պիոս IX Պապը հայտարարեց. «Ինքը եկեղեցին կենդանի Ավանդություն է, իսկ եկեղեցին՝ Պապն է, հետևաբար՝ Պապը Ավանդություն է»⁹, և իբրև աստվածային հայտնությամբ իր եկեղեցուն տրված մոր դոգմաներ ընդունեց «Սուրբ Կույս Մարիամի անարատ հղության» (1856) և «Պապի (ex oethedra) անսխալականության» (1870) վարդապետությունները, որով Պապը բարձր դասվեց նաև Ավանդությունից:

Բ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Աստվածային Հայտնության քննության ենթարկելու երկրորդ ճիմնական և վերջին փուլն է Տիեզերական ժողովի ատյանը: Ամմիջապես հարց է առաջանում. ինչո՞ւ էր պայմանավորված իր ճշմարիտ լինելը գրեթե ապացուցած հայտնության այս հանգրվանի մեջ մտնելը:

Տիեզերական ժողովը, որպես այդպիսին, Աստծուց օծված էր այնպիսի իշխանությամբ, որը լիազորում էր նրան քրիստոնեական հավատքի մեքենան և էական հավատալիքները բարձրացնել դոգմայի աստիճանի, որպեսզի այդպիսով նախ մի տեսակ պատճեջ ստեղծվեր ուղղափառության և նրան կրճակակոխ հետապնդող հերետիկոսությունների միջև, և որպեսզի տվյալ խնդիրները զերծ մնային հետագա մասնավոր մեկնաբանություններից ու հավելումներից, որոնց հետևանքով շատ հնարավոր, եթե չասենք՝ հավանական կլինեին (և պատմությունից գիտենք, որ այդպես էլ եղել է) նաև տարաբնույթ շեղումները:

Սրա հետ մեկտեղ Տիեզերական ժողովը նաև վերստուգիչ մարմնի պաշտոնն էր կատարում: Միայն այս ժողովի վերջնական հաստատումն ու վավերացումն էր, որ Աստվածային Հայտնությունը կիրառական և ընդունելի էր դարձնում ողջ Ընդհանրական եկեղեցու համար:

⁸ Протосвятер Михаил Помозанский, Православное Догматическое Богословие (в сжатом изложении) Новосибирск, 1993, стр. 67.

⁹ Адольф Гарнак, История Догматов (Общая история европейской культуры"). С. - Петербург, том 6, стр. 447.

Այս առումով հետաքրքրական է Տիեզերական ժողովների հետագա ճակատագիրը: Ինչպես վերո Ծժվեց, Տիեզերաժողովը օժտված էր բացառիկ իշխանությամբ, որով զրա հռչակած կանոններն ու դոգմաներն ընդունելի էին դառնում քրիստոսի աշխարհասփյուռ հոտի համար: Սա ուժի մեջ էր այնքան ժամանակ, որքան ժողովը Տիեզերական էր, իսկ նկեղեցին՝ Բնդհանրական: Այն պահից ի վեր, երբ դոգմը Տիեզերական էր, իսկ նկեղեցին՝ և քույր նկեղեցիներն իրենց սկզբունքային ամրամաշայտանքի վատնառով խզեցին իրենց կապը մի նկեղեցու հետ, որի տեսակետաբանության վատնառով խզեցին իրենց կապը մի նկեղեցու հետ, որի տեսակետաբաններն ու մոտեցումներն զրա մը այլևս չէին կիսում, ըստ Բնդհանրական նկեղեցին, որպես այդպիսին, դադարեց գոյություն ունենալուց¹⁰:

Բնդհանրայն այլ հարց է, թե ի՞նչու՝ և ի՞նչպե՞ս ամրամաշայտությունը մերթափանցեց Տիեզերաժողովի ամրակուր պարիսպներից մերս: Բնդհանրական տեսանկյունից 451 թվականից սկսած Տիեզերական ժողովը ըստ վերածվեց տեղական ժողովի, որը «Տիեզերական» անվան տակ գոմարվում էր իրեն Բնդհանրական ճանաչող մի նկեղեցու կողմից: Բանաճումից հետո Հայոց նկեղեցին երբեք իրեն իրավունք չվերապահեց սեփականացնելու «Բնդհանրական» տիտղոսը և, դիցուք,

¹⁰ Ո՛ր Հռոմեական նկեղեցին, որ սեփականացրեց Բնդհանրական (Catholique), ո՛չ էլ Արևելյան Ուղղափառ նկեղեցին, որ յուրացրեց Տիեզերական (Cosmétique) մեծահիմն չին անունները: (Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Հայոց նկեղեցին, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 139), այդպես էլ չընկալեցին «Բնդհանրական» եզրի ճշմարիտ և վավերական իմաստը: Այսպես, Օրթոդոքս նկեղեցու մեծագույն աստվածաբան Վ. Լուսակին, խոսելով Կաթողիկ նկեղեցու ոչ պակաս աստվածաբանի համարվ ունեցող Հայոց կոնգարի մասին, ասում է. «...не смотря на все его старания дать объективизм, (он) осужден тем не менее таинством от действительности известных воззрений...» (Տե՛ս ՄԵ, էջ 102): Նա ևս չի կարողանում, սակայն, գերծ մնալ այդ հույն կանխակալությունից, որի մեջ մեղադրում է կոնգարին, երբ խոսում է իր նկեղեցու՝ Տիեզերական ժողովի ունեցած ըմբռնման մասին: Ըստ նրա, Տիեզերական - Բնդհանրական եզրը խարսխված է ոչ այլ բանի վրա, եթե ոչ աշխարհագրական չափանիշների, այն է՝ Բյուզանդական Կայսրության տարածքի վրա (հույն տեղում, էջ 103), թեև նա ստիպված է հպանցիկ կերպով խոստովանել, որ Բնդհանրականությունը պահանջում է ողջ քրիստոնեական ուղղափառ նկեղեցիների մերկայությունը: Բնդհանրականության հույն ընկալումն ունի նաև Կաթողիկ նկեղեցին, որը, սակայն, երկրի ընդարձակությանն ավելացնում է մարդկային թվաքանակի քաղցրությունը, որով դարձյալ «չկրնար նա ըստիլ կաթողիկէ կամ Բնդհանրական նկեղեցի» (Տե՛ս Գաբրիել արքեպիսկոպոս Այվազեան, Թե ի՞նչպե՞ս Հռոմեական նկեղեցին ոչ ևս է Կաթողիկէ նկեղեցի: Վաղարշապատ, 1878, էջ 87): Միշտև, Հայաստանյայց Առաքելական նկեղեցու ըմբռնմամբ, որը սքանչելիորեն արտահայտում է Օրմանյան Պատրիարքը, «ճշմարիտ Բնդհանրականությունը կճշմարտվի քոլոր այն նկեղեցիներու համախմբության մեջ, որոնց կհամաձայնին Միություն ի կարևորս մեծ կանոնին շուրջը, և հավասարապես կընդունին և կդավանին այն ճշմարտությունները, որոնց քրիստոնեության հիմնականները կկազմեն» («Հայոց նկեղեցին», էջ 159): Արանով կարծես մեկ անգամ ևս փաստվում է Բնդհանրականության այն ճշմարիտ ըմբռնումը, որի մասին Վիկենցիտոս Լիրիցանցի գրել է. «Բնդհանրական նկեղեցին այն է, որ կհավատա այսօրվան օրս այն բանին, որում հավատացող իմ ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն մարդիկ (Quod ubique, quod semper, quod ab omnibus creditum est)»:

Դվինի ժողովներին «Տիեզերական» մակդիրը չավելացվեց: Այն երբեք չփորձեց ասել, թե ինքը փրկեց Բրիտանոսի Եկեղեցու ուղղափառությունը և անբաժան Եկեղեցուց իր հետ դուրս բերեց Եկեղեցու ընդհանրականությունը, թեև կարող էր այդպես վարվել: Ընդհակառակը, Հայոց Եկեղեցին դառնությամբ տարավ այդ քաժանումն ու դրան հաջորդող դարավոր մեկուսացումը:


Եփեսոսի Տիեզերածոողովից հետո Հայոց Եկեղեցին այլևս չընդունեց ո՛չ մի Տիեզերական ժողովի որոշումներ՝ ամկախ այն բանից, թե դրանք որևիցե կերպով վերաբերու՞մ էին իրեն, թե՛ ոչ: Բավականին ուշ մույն քայլին դիմեց ճան օրթոդոքս Եկեղեցին, որը Կ. Պոլսի Դ ժողովից հետո, որը հայտնի է «8-րդ Տիեզերածոողով» անվամբ, հրաժարվեց, այսպես կոչված, «Տիեզերածոողովների» հեղինակությունը ճանաչելուց: Դժբախտաբար, այն չկարողացավ գերծ մնալ իր Եկեղեցու գումարած ժողովին «Տիեզերական» մակդիրն ավելացնելու գայթակությունից: Այսպես, 1054 թ. հուլիսի 20-ին Միջայելի նախագահությամբ Կ. Պոլսում գումարված ժողովի առիթով Հովսեփի Պատրիարքը Միջայել 8-րդ Պալեոլոց կայսրին նամակ է գրում, ուր ժողովը «Տիեզերական» է անվանում՝ համեմատելով այն երրորդ Տիեզերածոողովի հետ¹¹:

•
•

Այն, որ Հայ Եկեղեցին դադարեց Բաղկերեցական Եկեղեցու Տիեզերածոողովների հեղինակությունը ճանաչելուց, դեռ չի նշանակում, որ դադարեց ճան Եկեղեցու մերքին կյանքում Աստվածային Հայտնության մերկայությունն ընդունելուց: Ընդհատ է, 3-րդ Տիեզերական ժողովից հետո փակվեց դավանաբանական աստվածաբանության ուսումնասիրության և ամմիշական խնդրո առարկա հանդիսացող դոգմաների «արտադրումը», սակայն այդպիսով ընդարձակ ասպարեզ քացվեց վարդապետական աստվածաբանության համար:

Ամփոփելով մեր շարադրամքը՝ բերեմք Եկեղեցու կյանքում Աստվածային Հայտնության ամենացայտուն և բնորոշ օրինակը, որ է՝ Նիկիո Տիեզերածոողովում ընդունված «Համագոյության (ὁμοούσια) վարդապետությունը», որը դարձավ քրիստոնեական աստվածաբանության հիմնական և անփոխարինելի խարիսխներից

¹¹ М. Э. Поснов, История Христианской Церкви (до разделения Церквей). Брюссель, 1964, стр. 552.



1700-ԱՄՅԱԿ

ՏՈՔՏ. ԼԵԻՐՆ ՄՈՄԺԵԱՆ

ԵԿՄԱԼԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, ԹԷ ՈՉ

Այս տարուայ՝ 1997-ի սկիզբը, Եկմալեան մշակումով Պատարագի նոր CD սալ մը՝ հոյակապօրէն երգութեամբ է Հայաստանի Հանրապետութեան Ակադեմական երգ-չախումբին կողմէ, ղեկավարութեամբ Օ. Չէքիճեանի, զիւսկը միւլէ մէշտեղ հիւսնել այն գոտիինը, զոր պատրաստած էի 1956-ին, վերի խորագրով:

Ո՞ր եզիպտաճաշը չի յիշեր Երջանկայիշատակ Մամբրէ Արքեպս. Սիրունեանի, Արմաշի ղարեվանքէն, «ծանր» Պատարագները, համգոյցեալ երաժիշտ-ղպրապետ Պրմ Ղազարոս Ղազարոսեանի ղեկավարութեամբ Եկմալեան մշակումով Պատարագը, տօնական օրերու առտուան ժամը 6-էն սկսեալ ժամերգութիւնն ու Պատարագին շարունակութիւնը մինչև կ.վ. ժամը 1 ամբ: Մամբրէ Արքեպան ծանոթ էր Հայ Առաքելական Եկեղեցւոյ դասէն իր հօգօր ստեղծօրեան ձայնով և Էջմիածնին խարտավիյակի պաշտօններով:

Կը յիշեմ մամանաւանդ այդ չափազանց դանդաղ մեկնաբանութեամբ Եկմալեանի մշակումով քառաձայն Պատարագը, զգոնեցուցիչ, յոգնեցուցիչ երգողին համար, անհրապօր ու միօրինակ երգեցողութիւնը, որ կը ստիպէր մեզ փախուստ տալ «Հայր Մեր»-էն յետոյ:

Երբ 1954-ին սկսայ իմ մասնակցութիւնս բերել Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Տաճարին մէջ, Պրմ Արա Պարթեւեանի ղեկավարած երգչախումբին, Եկմալեանի նոր մշակումով Պատարագին, սկսայ խանդավառուիլ և մեծ հաճոյք ստանալ:

Քանի մը տարի առաջ երբ կարդացի երաժիշտ Տիկին Էմմա Ծատուրեանի (այժմ մահացած) յօդուածը Եկմալեանի մշակումով Պատարագի չափազանցութեամբ գովասանքը, իմ բարեկամական յարաբերութիւններս թոյլ տուին ինձ, որ իրեն յայտնեմ իմ քանի մը բացասական խորհրդածութիւններս:

Մշմարիտ է, որ Եկմալեան եղած է առաջին հայ երաժիշտը, որ քաջութիւնը կամ յանդգնութիւնը ունեցած է այդ ժամանակ, հակառակ եկեղեցական դատուն կամքին, մէշտեղ հիւսնել իր մշակումը և գրել առաջին քառաձայն Պատարագ մը:

Ընչդ է, որ Եկմալեան մկատի պէտք է առած ըլլար նաև այդ ժամանակուայ Թիֆլիսի մէջ կամ այլուր չափազանց համեստ երգչախումբերու գոյութիւնը և անոնց

Բամեմատ գրած ըլլար բազմաձայն մշակումը: Հետևաբար, այս քոլոր տունայնորով պէտք չէ մոռնալ Եկմալեանի մշակած Պատարագին պատմական արժէքը:

Ահաւասիկ թէ ինչպէս արտայայտուած էի 42 տարիներ առաջ.

«Հայ եկեղեցական երաժշտութեան երգացանկը այնքան ճոխ չէ, ինչպէս լատինական և բողոքական եկեղեցիներու երաժշտութիւնը, ուր այնքան պէսպիսի կտորներ յղացած են ինչ և նորագոյն հեղինակները իբր հոգևոր երաժշտութիւն: Ինչպէս որ Հայ Առաքելական եկեղեցին մէջ ամէն կիրակի առտու ժամերգութեանց «օրուան ձայնին» Բամաձայն կը կնորդացուին տարբեր շարականներ, նոյնպէս ալ լատինական եկեղեցին ունի այլազան Պատարագներ և հոգևոր երաժշտութեան ուրիշ կտորներ:

Իբր բազմաձայնութիւն ունի՞նք Պատարագի երկու մշակումներ: Մի՞ն՝ Եկմալեանի, և միւր՝ Կոմիտաս վարդապետի ձեռքով: Քանի մը տասնեակ տարիներ է Վերանցը կը կիրարկենք իբր Պատարագի երգեցողութիւն:

Առաջինը՝ Եկմալեանի մշակումը միայն արական ձայներու Բամար եռաձայն խմբագրուած է, պատշաճ, քայն շատ միօրինակ դաշնամուրով մը: Օրինակի Բամար պարիթոն կամ պաս ձայները կը բաւականաճան տեղ-տեղ միմիայն «թեմ»-քոներով (Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ ազդեցութիւն), իսկ ամոր երկսեռ ձայներու վերարտադրութիւնը ալ աւելի պարզ՝ քայն իբր քառաձայն երկսեռ երգեցողութիւն, իր կոչումը ունենալէ շատ հետո՛ւ է իր միօրինակութեան պատճառաւ:

1913-ի շրջանին Կոմիտաս վարդապետ տարբեր մշակում մը կատարած է Պատարագի, նոյնպէս արական ձայներու Բամար: Երկու Պատարագներու միայն արական ձայներու Բամար դաստորոտած ըլլալու պարագան թերևս կը բացատրուի այն պատճառաւ, որ ժամանակին Բաւանականաբար կնոջական ձայներու մոտքը եկեղեցիէն ներս սովորութիւն չէր, կամ ընդհանրապէս չէր:

Եկմալեանի մշակումը անպայման գոհացում չէ տուած կարգ մը երաժիշտներու ճաշակին, և սակայն ամոնք ստիպուած են ձեռք չդպցնել այդ մշակումին՝ վաւերականութիւնը յարգած ըլլալու Բամար:

Փարիզի Մայր եկեղեցւոյ խմբավար-երաժիշտ Պրն Արա Պարթևեան, որ ծանօթ է երաժշտական իր ծաւալուն գործունէութեամբ և զանազան ստեղծագործութիւններով, իր պաշտօնի կոչումէն յետոյ առաջին անգամ փորձեց վերամշակել Եկմալեան դաշնամուրով, գոր թերի և տկար նկատելով, ըստ ներկայ երաժշտական ըմբռնումներուն, մանաւանդ ճախարհայնութեան արտայայտութեան տեսակէտով աչքառու թերութիւններ և սխալներ գտնելով: Այսուհանդերձ յարգած ըլլալու Բամար իր ժամանակին յաջողութիւն գտած այդ գործին տպատրական հանգամանքը, ջանացած էր ըստ կարելոյն պահել իրմանական մթնոլորտը:

Այս փոփոխութեանց և վերամշակման պատճառը, սակայն, ուրիշ տեղ ալ պէտք է փնտռել:

Պատարագի դաշնամուրով Եկմալեանի կողմէ կատարուած է առանց երգեհոնի գործածութեան, ինչ որ կը պահանջէ բազմաթիւ երգիչներէ կազմուած խումբ մը, ներկայիս անկարելի մանաւանդ արևմտեան երկիրներու մէջ:

Պարթևեանի մոր մշակութային գործունեությունը նման է ներկայիս խոսքի և արվեստի համար: Իր մոր ոճը ժամանակին կարգի մը տրտունջներու տեղի տուած է, սակայն հետզհետեւ հեշտալուր դարձած ևս անոնք:

Միջամենայ յիշեմ, թէ ուշադիր քննութեամբ մը կարելի է ստուգել, որ Կոմիտաս իր դաշնաորումն աշխատանքի շրջանին հաւանականաբար հարկ եղած ժամանակը չէ ունեցած անվիճելի գործ մը երեսն քերելու՝ առաջին ընդհանուր պատեմաբան միաստեանի: Իր բնագիտի վաւերականութիւնն ալ խնդրական է, ինչպէս բազմր Եփեսոսեանի: Իր բնագիտի վաւերականութիւնն ալ խնդրական է, ինչպէս Կոմիտասի: Կարողան Սարգիսեանի ձեռնարկ յոյս տեսած հատորի լաւաշարանը:

Հոս է տես, որ հիմնական և վիճելի հարց մը կը ծագի, թէ: Քաջ ուրիշ երաժիշտներ ևս իրաւունք ունին մեր դաշնաորութեան կատարելու իրենց հաւելցողութեամբ, իսկ եթէ իրաւունք չունին, չն՞՞ք կրնար սրբագրութիւններ կամ բարելաւումներ կատարել, արդե՞հ իսկ կատարուած դաշնաորութիւններ քիչ շատ փոխելով:

Օփորթութիւն ստեղծող զիստոր կէտը հետեւեալն է.

Բոլորովին սխալ է ըսել՝ «Եկամտեանի Պատարագ», որովհետեւ եկամտեանը չունի անձնական Պատարագ՝ իր ստեղծագործութիւն, ինքնագիր եղանակ, ինչպէս երոպական իմաստով պիտի ըստինք. «Բոլորովին կամ Պախի Պատարագներ»:

Ինքն Պատարագներու մայր եղանակները կը պատկանին Հայ Առաքելական Եկեղեցւոյ, ամենք հեղինակները անանուն երաժիշտներ ևս, դժբախտաբար տարիներու շրջաններ անձնաւոր մնացած կամ մոռցուած:

Խնդրով միայն երաժիշտը այդ մայր եղանակներուն վրայ դաշնաորութեան կատարելով՝ բազմաձայնի վերածելու զանազան ձևեր յղացած է. և այսքան:

Այս աշխատանքը երբեք իրաւունք չի տար, որ հասարակութիւնը զինքը նկատէ որպէս բարոյական տէրը այդ երաժշտութեան, ինչ որ իրականութեան մէջ՝ ամբողջ ցեղի մը սեփականութիւնն է իր ծիսական երաժշտութիւն:

Իրաւական տեսակէտով բանի որ այսպէս է, տրամաբանական է հետեւաբար, որ ուրիշ երաժիշտներ ալ իրենց ապրած ժամանակներու ըմբռնումներով մեր մշակութեան կատարեն:

Հարցը շատ պարզ և անվիճելի պիտի ըլլար, եթէ մեր եկեղեցական օրենքները թոյլատրէին, որ քաղմապիսի եղանակներով ու այլ և այլ երաժիշտներէ պատրաստուած Պատարագներ ունենայինք: Ընդունուած սովորութիւն մը կը մախընտրէ, որ մայր եղանակները մնան միշտ մոյմը: Հոս է, որ մերօրեայ երաժիշտները ստիպուած կ'ըլլան սրբագրութիւններ կատարելու, երբ ազատութիւն չունին բոլորովին մեր մը շարադրելու:

Ահաւասիկ այսպէս արտայայտուած էի 42 տարիներ առաջ և հարցը բերած էի մեր Պատարագներու ստեղծագործութեան մասին:

Եւ եղև յո՛յս:

1971-ին, շնորհիւ մաէսթրօ Օհաննէս Չէքիճեանի, ծանօթացայ այն ժամանակուայ պետական երգչախումբի փոխընկալար՝ Խորէն Լիւիսանճեանին (այժմ՝ Նիւ Եորքի Ս. Վարդան Տաճարին երգչախումբի ղեկավար): Սերտ եղաւ մեր բարեկամութիւնը: Կը յիշեմ, անգամ մը (1982-83), Էջմիածնի Վեհաբանի բակին մէջ, մեր խօսակցութիւնը եղաւ - ինքը այն ժամանակ ղեկավարն էր մահ Ս. Էջմիածնի Տաճարի երգչախումբին - թէ ինչպէս Երջանկայիշատակ Վեհափառ Վազգէն Ա. զինքը խրախուսած, քաջալերած և ոգևորիչ խօսքերով մղած էր, որ մեր Պատարագի մը ստեղծման ձեռնարկէ: Այդ պատարագին մասին - Խորէնեան Պատարագ - պիտի

անդրադառնամ գրությանը մը՝ իր իսկ - յօրինող խորեն Մելխանեհեանի - ինքի համար երիզի վրայ արձանագրած բացատրություններով:

Այսպես կը շարունակէի յօդուածս, գրուած 1956-ին.

«Անդրադառնալով Արա Պարթեանի աշխատանքին, արդարացուցիչ բազմաթիւ պատճառներ կը գտնեմք:

Նախ՝ երգեհոնի գործածությունը՝ անհրաժեշտ մասերգանքներ յօրինելու կամ երգերու մէջ կապ մը ստեղծելու այլ և այլ հնարամտությունները:

Պարթեան կատարած է հոս հոյակապ աշխատանք մը: Ան հայ ծիսական երաժշտութեան մէջ, կրնամ ըսել, առաջին երաժիշտն է, որ իսկապէս իբր ընկերակցութիւն, մօթագրած է մեծ ուսումնասիրութեամբ մեր եկեղեցական բոլոր շարականներու համար յատուկ երգեհոնի բաժին մը: Անոր ընկերակցությունը չի կայանար, ինչպէս գաղթաշխարհի մեր բոլոր եկեղեցիներում մէջ՝ միայն *conduce* ձայնը շեշտելով, այլ մտածուած երաժշտութիւն մըն է:

Երկրորդ՝ արական ձայներու համար պատրաստուած գործ մը՝ երկսեռ ձայներով վերարտադրելու ստիպողականությունը:

Ջոր օրինակ, երբ մայր եղանակը, փոխանակ թեւորներու, սօրհմօցներ երգեն, շատ քնական է, որ թեւորներու մօր բաժին մը ստեղծել հարկ ըլլայ, ուրկէ՝ դաշնատրաման փոփոխությունը:

Երրորդ՝ վանկաբանական (*prosodique*) և մախադասություններու արտայայտութեան պարագան (որը ակներև սխալներով լեցուն է) կը ստիպէ երաժիշտը անհրաժեշտ սորագրություններ կատարելու:

Պէտք է անվարան ընդունիլ, որ Պարթեան այս աշխատանքը կատարած է ծայրայեղ խղճամտութեամբ: Այն է՝ դաշնատրաման նկարագրիչ և մթնոլորտը պահել եկմալեանի ոճին մէջ:

Նոր դաշնատրաման մէջ, երգերու թօները և ընդհանուր դասաւորումը այնպիսի ճարտարութեամբ կատարուած են, որ երգչախումբը, սարկաւազ և պատարագիչ, իրենց բաժինները ի մի թերելով կը կազմեն ամբողջություն մը: Երբեք հարկ չկայ ձայնառութեան և ոչ ալ ձայնափոխման: Պատարագիչը կրնայ իր ուզած ձևով երգել, ոչինչ կը փոխուի ընդհանուր երգեցողութենէն, շնորհիւ երգեհոնի պարտադրիչ ընկերակցութեան և առաջնորդութեան:

Պարթեանի վերամշակած եկմալեան Պատարագի գործին մէջ որոշ նկատելի կրկնություններ չկան համեմատաբար մասկին դաշնատրաման, այլ պարզապէս ճոխ է՝ *contre-point*-ի գործածութեամբ, այսինքն մեղեդիակերտ բազմաձայնություն - բազմաձայնություն մը, որ կազմուած է երկու և ւեղի մեղեդիական հորիզոնական անկախ գիծերէ - և յոգնեցուցիչ չէ թէ՛ ունկնդրողին, և թէ՛ երգիչին համար:

Այս տեսակէտով Փարիզի եկեղեցւոյ երգեցողությունը կրնայ օրինակ ծառայել իր կանոնաւորութեամբ, ինչ որ մեծապէս գնահատուեցաւ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին կողմէ այս տարի, 1956-ին, իր՝ Փարիզ տուած այցելութեան ընթացքին:

Կ'ուզեմ հոս նշել, որ Երջանկայիշատակ Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոս, քանի մը տարիներ յետոյ 1963-ին, իր անձնական հրաւերով և անձնական առանձնատուը տրամադրած էր Պարթեանին, որպէսզի Հայաստանի մէջ ղեկավարէ իր (Պարթեանի) իսկ յօրինած Պատարագ - *օրաթօրիօ ԵՈՒ ԲԱ ՄԻՆԵՍ* գործը, գոր յետագային ձօնեց ի յիշատակ հայկական ցեղասպանութեան մահատակներուն:

Կը շարունակէի այսպէս - «Երբեք երաժշտութեան մշակման հանդէպ թոյլք եւ երևակայութիւն ունի Պարթևեանը:

Երբ մկատի ունենանք, որ միջազգային երաժշտութեան մէջ գործադրուած յայտագիրներու մէկ քառորդը կը հազմէ հոգևոր երաժշտութիւնը - որ ըստ մեզի ամենէն վեր ու բարձր երաժշտութիւնն է, մարդկային ծայններու և երաժշտական զործիքներու միաձուլումով - պիտի անդրադառնանք, որ շատ ետ մնացել ենք այս մարտին մէջ. թերեւս զործադրութեան դժուարութիւնները թոյլ չեն տուած երաժիշտներուն ընդլայնելու իրենց գործունէութիւնը, առանց մկատի առնելով կոնքրետական դասուն առ այս ցոյց տուած ոչ քաջալերական ընթացքը և սեղմումները:

Մեր ընդգծած սկզբունքներուն վրայ հոխացած են Եկմալեան Պատարագին արդի դաշմաւորները, և որուն շնորհիւ երաժշտութիւնը անկի օգտուած է առանց ալլափոխելու առանդութիւնը:

Իբր ընդլայնում եկեղեցական երաժշտութեան, Արա Պարթևեան ունի քանի մը կտորներ, սովորական: Երբեք կառուցուածքով: Ատոնցմէ մին «Դուպա», Երուսաղէմ-ն է, իսկ երկրորդը՝ անձնական լոյսնում մը՝ «Էջ Միածինն ի Հօրէ» ծանօթ տաղին: Այս վերջինը՝ բամաստեղծութեան ներկայացուցած պատկերին համապատասխան երաժշտութիւն մը, որ կարծես կը լսուի զանգակներուն հնչիւնը, և «Վե՛ն լուսին» տեսիլը հզօր կառուցուածքով, ահեղագոյշ, միանգամայն եկեղեցական նկարագրով:

Իսկ անկի լուրջ աշխատութիւն մըն է իր անձնական լոյսնումով հեղինակուած Պատարագը, սեմֆոնիք մեծ նուագախումբի ընկերակցութեամբ, որ կառուցուած է յոյնական ազատ ներշնչումով, օրաթօրիոյ ձևին տակ:

Ուրեմն մեր անձնական համեստ կարծիքին համաձայն, երաժիշտ-երգահան Պրմ Պարթևեան կարելի է մկատել հայ ժամանակակից երաժիշտներէն ամենէն բեղմնաւոր երգահանը, մամամաւանդ եկեղեցական և հոգևոր երաժշտութեան մէջ, որ ամենակարևոր ազդակներէն մէկն է հայապահպանման:

Պարթևեան այդ ջախկիրներէն միմ է:

Անգամ մը զինք տեսայ իմ համերգի մը փորձին, իր կարծիքը ունենալու համար, իր տան մէջ, առամաքոյծ Արման Սեմֆոնեանին հետ: Պրմ Պարթևեանի մէկ սեմեակին կէսը լեցուած էր իր ստեղծագործութիւններով: Մտածեցիք՝ ի՞նչ ընել, ինչպէ՞ս փրկել այդ գործերը:

Առ այժմ իր երաժշտական հեղինակութիւններու մեծ մասը կը գտնուի իր զարմիկին՝ Պրմ Միհրան Հիւրքեանի մօտ, սակայն պէտք է լրջօրէն զբաղուիլ անոր ժառանգով՝ «զայն կորուստէ» փրկելու համար:

Վերջին անգամ զինք տեսայ նախքան իր մահը՝ Փարիզի THENON հիւանդանոցին մէջ:

Այո՛, քրիստոնէութեան Հայաստանի Պետական կրօն հոշակման 1700-ամեակը առիթը թող ըլլայ, իր «հոգևոր» արտայայտութիւններէն մին, ուկտազնացութեան զաղափարին և զարգացումին վերածնունդը, ինչպէս կը թելադրեն մեր երկու ուստուտում, օղակայաններու սիրահար, ժրաջան մեղուներու նմանող սրբազանները:

Սակայն թող «հօշակ» կերպով և լրջօրէն մեր համազգային երաժիշտները մնալուն գործեր, Պատարագներ յօրինեն՝ հրամանաւ մեր Ամենայն Հայոց իմաստուն Գարեգին Ա. Հայրապետին:

ԽՈՐԷՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Քրիստոնեության Հայաստանի պետական կրոն հռչակման 1700-ամեակը պատմառ կ'ըլլայ թե՛ Հայաստանի, և թե՛ արտասահմանի մէջ, որ տեղի ունենան զանազան ձեռնարկներ, ինչպէս՝ եկեղեցաշինութիւն, պատմական վանքերու կամ եկեղեցիներու վերանորոգում, գիտական համաժողովներ, ուխտագնացութիւն, սալերու և գիրքերու հրատարակութիւն, մշակութային և գեղարուեստական համդիսութիւններ, համաշխարհային ցուցահանդէսներ և այլն և այլն:

Կը խորհիմ, որ կրօնական այս դարադարձը ըլլայ մաքուր խթանող ուժը հայկական սրբազան և հոգևոր երաժշտութեան պողոթնում, տեսակ մը երկնում, մորաստեղծ ու ինքնածին Պատարագներու կատարմանը, որոնք կը կազմեն մեր ազգային հարստութիւնը:

1956-ին, երբ գրութեամբ մը կ'արտայայտուէի եկմալեանի մշակումով Պատարագին մասին, կ'ըսէի. «Հարցը շատ պարզ և անփոփոխ պիտի ըլլար. եթէ մեր եկեղեցական օրէնքները թոյլատրէին, որ քաղմապիսի եղանակներով, այլ և այլ երաժիշտներէ պատրաստուած պատարագներ ունենայինք... երբ ազատութիւն չունին (երաժիշտները) բոլորովին մոռ մը շարադրելու...», աւելի հետո, «կը երական դասում առ այս ցոյց տուած ոչ քաջալերական ընթացքը և սեղմումները»:

Երջանկայիշատակ Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա, որ ոչ միայն Օհմարար էր, այլև գեղագէտ, գեղապաշտ, երաժշտասէր, իսկական երաժիշտ և, եթէ չեմ սխալիր՝ երաժշտանոցէ վկայեալ, մեծապէս գնահատեց Պարթևեանի վերամշակած եկմալեանի Պատարագը՝ 1956-ին իր առաջին հովուապետական այցելութեան ընթացքին Փարիզ և նոյնպէս անոր յօրինած Պատարագ-օրաթօրիօն en Fa Mineur, և իր իսկ հրաւերով, իր հովանաւորութեան տակ մեկնաբանուեցաւ Երևանի մէջ 24 Նոյեմբեր 1963-ին:

Հետևաբար, Վեհափառ Հայրապետը սիրեց երաժշտական մոտիվները, ծիսական թէ սրբազան, հաւաքեց Ս. Էջմիածնի շուրջ՝ լաւ ձայնով իզակաւ և արական մեծակատարներ, ունկնդիր եղաւ, քաջալերեց, ճամբայ բացաւ մոր յօրինումներու, ինչպէս «ԽՈՐԷՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ»-ին:

Խորէնեան Պատարագը, գրուած 1984-ին, երրորդ և վերջինն է եկմալեան և Կոմիտասեան մշակումով հանրածանօթ Պատարագներուն:

Շատ հետաքրքրական է, երբ յօրինող երաժիշտ մը ինքն իսկ կը քացատրէ, կը պատմէ իր ստեղծագործութեան զանազան ներշնչումներուն փուլերը: Դժբախտաբար մոյմ առիթը չունինք գիտնալու, այս վերջիններէն զատ, թէ ինչպէ՞ս, թէ ի՞նչ պայմաններու տակ, Զիլիկկիրեան մը, Այտինեան մը, Աթմաճեան մը կամ Մանաս մը յօրինած են իրենց գործերը:

Որպէս վկայութիւն կամ երաժշտասէր որոշ խաւերու հասցեագրուած ու հոգևոր երաժշտութեան պատմութեան համար, կը խորհիմ, թէ հետաքրքրական կրնայ ըլլալ արձանագրել երաժիշտ-երգահան Խորէն Մելիքեանի ինքի ուղարկած երկդի վրայ արձանագրած իր անկեղծ ու զգացական քանի մը քացատրութիւնները, որոնք մէջ պատմականը կ'ընէ մեր մորաստեղծ «ԽՈՐԷՆԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ»-ին:

Առատասիկ այսպես կ'արտայայտուի, որ ԼՂՀ-ում, ճեմում 1985-ից.

«Քարե, սիրելի եղբայր Տոքո, ԼՂՀ-ում.

Կարպիսի միջոցով տեղակայված, որ ցամաքային ուժեր իմ գրած Պատարագի երկը (պատկեր) ունենալ: Ռազմական դժուարություններով կարողացալ ձևով մի գրել այն: Թեև շատ յաջող չէ: ստացուել արտատպած տարրերակը, սակայն կարծում եմ, որ զուգահեռ մի կու տալ գրած աշխատանքիս մասին:

Յաջողություն էմ մի ընդհանուր ասել այդ մասին, լատիպալիս Պատարագի ստեղծման աշխատանքների, իմպակ: ման աճոր ամֆրաժեշտություն մասին:

Տարիների ընթացքում երազել էի, որ ԼՂՀ-ում երգուի կամ կատարուի Պատարագ մը, որ ստեղծուած լինի Քայ գեղջուկ երգի ակումբներից սերուած, Պատարագ մը, որ կարող է, որ երկ գիտական մկանստ բերել երաժշտական կեարին մէջ:

Եւ ահա իմպակ ստեղծուեց այս գործը:

Այսօրու շարքը, որ սօխստներէն մէկը դաճող կ'երգէ, Վազգէն Վեհափառ Հայրապետը կարգադրեց, որ թիչ մը յորդոր երգէ: Այսօրու բացատրելուց յետոյ մա ճորից շարունակեց դաճող երգեցողությունը: Այս խանգարիչ Քանգամանքը ճշգրտելու համար, փոքրիկ մշակում մը կատարեցի և սովորեցուցի եզրախումբին: Վեհափառ Հայրապետը շատ բարձր գնահատեց այն և կարգադրեց, որ ստեղծած այդ գործին մախորդ համարմ ալ փոխեմ և կատարեմ Պատարագի ընացքին: Եւ այսպէս, գրեցի ման ճախորդող համարը: Վեհափառ Հայրապետը ճորից տուալ իր հաւանությունը և ասաց Քեռե՛սայր. «Խորէ՛ն, Աստուած երրորդություն կը սիրէ. եթէ քեզ յաջողուի ասոր յաջորդ մասն ալ գրել, Սուրբ Պատարագի երգեցողութեան մէջ պիտի ստացուի գեղեցիկ երրորդություն մը, որը կը շարունակէ մէկը միւսին»:

Այդ մոյմպէս գրեցի, որմ էր՝ «Տէր, ողորմեա՛-ն, և այսպէս, երբ յաջողեցաւ այդ գործը մոյմպէս, Վեհափառը կանչեց իր մօտ, յաճմադարեց, որ ստեղծեմ Պատարագ մը այս ոճով, Քայ գեղջուկ երգի ոճով, և մանաւանդ շարականատիպ: Վազգէն Վեհափառն ասաց այն մասին, որ շտապել պէտք չէ, դա կարող է տեւել մէկ տարի, երկու տարի, երեք տարի և մոյմիսկ աւելի:

Եւ ասացի Վեհափառ Հայրապետին, «Վեհափառ Տէր, մեճ ունեճ Կոմիտասեան Պատարագ, Եկմալեան Պատարագ, ամֆրաժեշտություն կա՞լ արդեօք, որ երրորդը ստեղծուի»: Վեհափառ Հայրապետը պատասխանեց, «Խորէ՛ն, դուն երաժիշտ ես, շատ լալ գիտես, որ օտարներ ունեմ բազմաթիւ Պատարագներ՝ տասը, տասնհինգ, քսան, գուցէ և աւելին. *Ի՞նչ կը լինի, որ հայ ազգը ունենայ երրորդ Պատարագ մը ևս, որեւէ մէկը մեղք չի գործեր այդ բանին համար*: Եւ այսպիսի ոգևորիչ խօսքերից յետոյ ես անցալ տեճաջան աշխատանքի 1980 թուականի Հոկտեմբեր ամսին:

Բոլոր կտորները, որոնք մէկ առ մէկ կը գրուէին իմ կողմէ, կը սորվեցնէի երգչախումբին, կը տաճէի էջմիածնի Մայր Տաճար և Կիրակի օրերը Պատարագի ընթացքին կը ցուցադրէի Վեհափառ Հայրապետին:

Պատարագէն յետոյ, Հայրապետը միշտ կը կանչէր ինձ իր քովը և կու տար իր տպատրուրությունները լսած կտորներուն մասին. «Խորէ՛ն, այստեղ այսինչ կտորը քիչ մը այլապէս ըլլալու է, այսինչ կտորը քիչ մը տեղը չէ մտած»: Եւ ճորից կ'աշխատէի այդ գործին վրայ, այդ դիտողություններին և վերջապէս անոնց բաւարա-

րութիւն տալէ ետք, Վեհափառը երբ կը հաւանէր, կ'ըսէր. «Խորէն, կատարեալ է, անցի՛ր առաջ»։ Եւ կը ստեղծուէր յաջորդ գործը։ Եւ այսպէս, եւ յիշում եմ *«Սուրբ, Սուրբ»*-ի ստեղծագործութեան ընթացքը։ Երբ եկաւ *«Ովսաննա»*-ներու քառերու քաժիմը՝ Վեհափառ Հայրապետը ինձ յանձնարարեց և ասաց. *«Ովսաննա»*-ները թող առանձի՛ն-առանձի՛ն ձայներում ընդմէջէն բխին, գաղափար մը, որ հետաքրքիր էր ինձի համար։ Ես եկայ, հիմնովին փոխեցի գրածս և *«Ովսաննա»*-ները տալով մէկ պասօներում, մէկ ալթօներում, մէկ թէնօներում, մէկ սօփրամօներում, ստեղծուեց բօլիֆօմիք ոճով գործ մը, որը յաջողուած կարելի է համարել։

Հետաքրքրական է նաև *«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»* գործի ստեղծումը։ Վեհափառ Հայրապետը տուաւ ինձ այն գաղափարը, որ Քրիստոսի մեր մէջ յայտնուելը հաւատացեալ մեր ժողովուրդին համար մեծ գաղափար մըն է, և ըսաւ ինձի. «Խորէն, այս համարը պէտք է լինի կատարեալ, վերին աստիճանի ոգևորող և ուրախ»։

Նստեցի և ստեղծագործեցի *«Քրիստոս ի մէջ»* և *«Ողջոյն»* համարները, որոնք մոյնպէս բօլիֆօմիք ոճով գրուած գործեր են և կարծում եմ, որ շատ հեշտ է սորվեցնել երգչախումբերում, չնայած այն բանին, որ բարդ կը թուի։ Զայնատարութիւնները առ հասարակ ողջ Պատարագի ընթացքին եւ կատարել եմ այնպէս, որ բոլոր սիրողական երգիչները կարողանան կատարել, բոլորը գրուած են շարականային երգեցողութեան սկզբունքներով։

Մեղեդիները ստեղծուած են հմադարեան ոճով։ Ես կարող էի մոյնպէս գուսանական, աշուղական Սայաթ-Նովայի ժամանակաշրջանի երգեցողութեան ոճը օգտագործել, բայց ես ուզեցի գեղջուկ երգեցողութիւնը ընտրել իբրև առաջնորդող ոճ ինձ համար, և միշտ հարազատ մնալ ուզեցի այդ ոճին։ Կարծում եմ, որ ինձ յաջողուել է այդ անել։

Գալով ստեղծագործութեան բովանդակութեան սիւժէին, դեքսդի հետ առնչուող հարցերին, աշխատեցի հարազատ մնալ դեքսդիմ բովանդակութեանը, յատկապէս հայկական շեշտադրութեան սկզբունքին։ Գաղտնիք չէ, որ հայերէն շեշտը միշտ համընկնում է բառի վերջին վանկի ձայնաւորին վրայ, և որ երաժշտութեան շեշտը անպայման պէտք է մոյնպէս խօսի դեքսդի շեշտի հետ։ Զոր օրինակ, բարեխօսութեան մը, մօր քո և կուսի՛, ընկալ գաղաչա՛մս քոց պաշտօնէի՛ց, ինչպէս շեշտադրութիւնը եմ վերջին վանկերը բառերի վերջում, պէտք է շեշտ ունենայ նաև երաժշտութիւնը որևէ ձևով, տևողութեան երկարացման սկզբունքով և կամ փոքրիկ *թօրդա-մէթօ*ներով (իմա՝ մէկ հնչիւնէն միւսը սահմանօրէն անցնելու կերպ - Լ. Մ.) կամ նաև ինչու՞ չէ, *աքսէնդ*ներով (շեշտ), և միշտ այս *մոմենդը* (պահը) պէտք է նկատի ունենայ ստեղծագործողը։ Ես ջանացել եմ այդ անել, այդ սկզբունքը պաշտպանել Պատարագի սկզբից մինչև վերջը, բոլոր համարների մէջ։

Թատկանշական մէկ ուրիշ կողմ՝ ստեղծագործութեանց շարքի մէջ։ Ասեմ, որ նախադասութիւններ կան, որոնք պատմողական են։ Զոր օրինակ՝ *«Որ հանապազկերպ կրես զմեզ»* այսպիսի պատմողական նախադասութիւնների մէջ, աշխատեցի մտածել, այնպէս անել, որ երաժշտութիւնը մոյնպէս լինի պատմողական բնոյթի։ Երբ պատմողական նախադասութիւնը վերջանալուց յետոյ գալիս է աղաչական, խնդրողական մէկ ուրիշ նախադասութիւն, զոր օրինակ՝ *«առաքեա՛ ի մեզ գինգևոր քո զօրհմութիւն»*, այստեղ, ինչպէս տեսնում եմք, կան խնդրողական, աղաչական

եթե չենք անում այդ դա չի կարող մերել իմքը՝ Աստուած: Այս սկզբունքն է իմն առաջնորդում ամենից առաջ, ո՛չ թե փառքը, ո՛չ թե իմ անուան տարածումը և այլն:

Իմ խորին շնորհակալություններն են յայտնում ձեր բոլորին, բոլոր մրանց, ովքեր կարող են իմն ունկնդրել»:

Հարկ է ընդունիլ, որ Խորեն Մելխանեճեան, զուտ երաժշտական տեսակետով կամ իմաստով, բացառիկ և արտասովոր պայմաններու մէջ սկսած է ստեղծագործել իր Պատարագը: Ունենալով իր տրամադրութեան տակ արհեստավարժ երգչախումբ, եկեղեցական հզօր մթնոլորտ և միանգամայն հոգեկան զօրաւոր մղիչ ոյժ ու քաջալերանք երջանկայիշատակ Վեհափառ Հօր՝ Վազգէմ Ա-ի և, վերջապէս, իր maître de chapelle-ի համագամանքը և առաւելութիւնը, ինչպէս եղած են ընդհանրապէս 16-րդ, 17-րդ դարերու երոպական սրբազան երաժշտութեան տիտանները:

Այս ազդակները ամկասկած իրեն մեծապէս օգնած են, սակայն պէտք չէ մոռնալ, որ դժուար կրնայ եղած ըլլալ ձերբազատուիլ ուրիշ Պատարագի մը երաժշտութենէն և թէ իր ենթագիտակցութեան մէջ՝ ազդուած չըլլալ Եկմախեանի մշակումով Պատարագէն և «արդէն իմացած»-ի տպաւորութիւն չտալու համար:

Կայ նաև մետալիմ հակառակ երեսը և կարևոր է նկատի ունենալ այդ ժամանակուան պայմանները, զորս Մայր Աթոռի միաբանութեան իր աշակերտներէն մէկը, այսօր Զենոբ ԲԲՑ, Նալպանտեան կ'արտայայտէ հետևեալ խօսքերով.

«Համայնավարութիւնը իր աղէտաբեր ծնունդէն մինչև իր արժանի վախճանը՝ շատ ծանր կշռեց հայութեան վրայ: Զանգուածային սուր ու անդուլ հալածանքներու շարան մը շղթայազերծուեցաւ կրօնքի դէմ: Առ հետևանս այս ամնպաստ ու վտանգաւոր դիրքաւորումին՝ դժոխաբար ու աննկարագիր մարդիկը անտեղի աքսորներ կազմակերպեցին ու հազարաւոր ամենդունակ կեանքներ հնձեցին: Հայոց սուրբ կրօնը կատաղիօրէն հալածուեցաւ, իր բանիմաց սպասաւորները՝ կրօնաւորներն իրենց այքերը փակեցին մութ գնդաւաններու և կամ սառնամանիքներու մէջ: Այս անիրաւ հալածանքէն ոչ ոք զերծ մնաց, ո՛չ բարի ու շինարար հաւատացեալը, ո՛չ խոնարհ ու ծառայալէր քահանան, և ո՛չ .այ ազգիս մոլորեալ. Վազգէմ Վահագնաւ Հայրապետը: Այսպիսի դժնդակ ու անբաղձալի տարիներում էր, որ Պարոն Խորենը լծուած էր սուրբ օւ մոլորական աշխատանքի մը, Պատարագի յօրինման: Պատարագ գրելը յանդգնութիւն էր այդ տարիներին: Ան ի գիմ ամէն զոհողութեան, վճռած էր գլուխ հանել անկարելին, ապաւինելով Նախախնամութեան պարգևած ոյժին ու պաշտպանութեան, արհամարհած էր խոչընդոտներն ու ՍՊԱՌԻԱԼԻ-Քները. ծամն էր ցուցադրելու հոգեկան արիւնքեան և պատասխանատուութեան զգացումին»:

Խորեն Մելխանեճեանի ստեղծագործութեան մէջ կայ զանազանութիւն առանց տափակութեան ու խուսափում կրկնութիւններէ: Կայ ճաշակ, մուրք զգայնութիւն և դաշնաւորման սխրանք:

«Բարեխօսութեամբ»-ը հանդիսաւոր և վեհ երաժշտութիւն մըն է, թէ՛ մեղեդիական, և թէ՛ դաշնաւորման իմաստով յաջող հիւստածք մը:

Նորութիւն է «Քրիստոս ծնաւ» կամ «Թարեաւ»-ը իր յաջորդական, հետևողական և պարտադրիչ, բազմիցս մույն յատկանշական «երկու բառերում» կրկնութիւններով, ինքնատիպ ճարտարապետութեամբ ալիք առ ալիք կը տարածուի, կը հեռանայ ի փառս աշխարհի՝ մեծ Աւետիսը ծանուցանելով:

Չափազանց կը սիրեմ իր «*Հրիստոսի մէջ*»-ը, ուր ժողովուրդը յոտմկայս իրարու կը փոխանակէ: Իրեւն տուած «*Ողջոյն*»-ը, երաժշտական հսկա-ի յաջող կառուցով և յաջորդական խաղերով կը ստեղծուի շարժում, իրարանցում, փոխանցում, իրարա-յաջորդական խաղերով կը ստեղծուի շարժում, իրարանցում, փոխանցում, իրարա-յաջորդ մոտոք թողարկող ձայնական խմբաւորումներու և դեռ մէկ չամբողջացած մեղե-դիւն կը յայտնուի յաջորդիւն մէջ՝ տալով երաժշտական կենդանի պատկեր մը:

Արդեւ իմքն ալ մասնաւորապէս կը ծանրանայ այս «*Քամարիմ*» և Քոս կը գործածէ: *բոլիֆոնի*, բազմաձայնութիւն բառը, այսինքն թէ երկու և աւելի ինքնուրոյն մկարագրի մեղեդիական գիծերու միատեղ գործածութիւն - *conterpoint* - և թէ հսկա-ի բազմաձայն երաժշտական երկ, երեք կամ չորս ձայնով, Ռիմնուած մմանակումի վրայ: «*Սուրբ, Սուրբ*» լուգիչ, զգայուն, երկմայիւն և «*Սկսանալ*»-ներու նոյնպէս յաջորդա-րար կրկնուած չորս ձայնախումբերէն, աղաղակներու մման կը բարձրանան երկինք:

Առանց մանրամասնութեամբ մէջ մտնելու, «*Նամենայնի օրհնայ*»-էն «*Հոգի Աս-տուծոյ*» շարքը ՌեզասաՒ է, Ռաճեյի և Ռեշտալուր:

«*Ամէն*, և *ընդ Ռոգոյոյ քում*» դարձեալ զգայուն, աղերսական, մեղեդիական լղացում մըն է, գոր «*Լեռնափառ*» Վազգէն Ա կը սիրէր իմանալ զանազան Ռամէիսու-թեամբ ընթացքիւ, ինչպէս մաս Լիւա Պարթեանի «*Մայր և կոյս*»-ը՝ երգուած Ռամզուցեալ Լուսինէ Զաքարեանի կողմէ:

Մնացեալ շարքիւ մէջ չափազանց քիչ կը գտնեմ ինծի մոտութիւն չբերող Ռատ-ուածներ: Իսկ «*Տէր, ողորմեա*»-ն թախանձագիւծ, ունի թոհչք, և վերջապէս «*Եղի-ցի*»-ն ուրախ է, փայլուն, կեանքոտ և ճոխ:

Խորէն Մէլիխանէճեան քանի մը տարիէ ի վեր Նիւ Եորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարիմ *maître de chapelle*-ն է և մեծ աշխատանք կը տանի Միացեալ Նահանգ-ներու արևելեան ափին վրայ, ի բաց առեալ Պոսթոնի շրջանը:

Կը յուսամ, թէ կարողացայ զաղափար մը տալ ու ծանօթացնել սոյն Պատարա-զը, որպէսզի աւելի զանազանութիւն, ճոխութիւն ու Ռարստութիւն բերենք Հայաս-տանեայց Առաքելական Եկեղեցիէն ներս: Կը խորհիմ, որ պէտք չէ վախճալ մորու-թիւններ բերել, կարծելով որ կրնայ խրտչեցնել մաս մը Ռատաւացեալներ: Կարկո-րը՝ ապագան ու երիտասարդութիւնն է, որ կարելի պիտի լլլայ մոր սերունդը մո-տեցնել Եկեղեցիին և անոր ընդմէջէն՝ Ռոզնոր երաժշտութեան:

Ուրեմն, 1700-ամեակը թող ըլլայ 21-րդ դարու սեմին Հայ Արքազան Ռոզնոր և եկեղեցական երաժշտութեան մոր Ոսկեդարի մը սկիզբը:

Փարիզ, Փետրուար 1998

Ծանօթ. Երաժշտական քառերու, եզրերու հայերէն թարգմանութիւններու և սահմանումներու համար օգտագործած եմ Փարիզի Մայր Տաճարի երգչախումբի ղեկավար Կոմիտաս Գեորգեանի «Երաժշտական քառարան»-ը:





ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՎԱՐԴԱՎԱՌԻ» ՏԱՂԸ

Շուրջ տասը դար է, ինչ հայ միտքը սրբազան երկյուղածությամբ խոսում է Գրիգոր Նարեկացու «Մատենա» մասին, որն, ամտարակույս, մնում է հեղինակի և հայ բանաստեղծության ամհաս բարձունքը: Պակաս կարևոր չեն ման Գր. Նարեկացու քնարերգության փոքր ձևերը՝ տաղերը, մեղեդիները, հորդորակները և գանձերը, որոնք էական մշամակություն ունեն հայ միջնադարի աշխարհականացման մտավոր շարժման գործում: Ընդհատ այդպես է խնդրիմ մոտեցել Մատենոս Զուղայեցին (ԺԴ-ԺԵ դդ.), երբ գրել է. «Մի փոխ Նարեկացի լաւ է, քան զամենայն Սաղմոսս Դաթի...»: Նարեկացիագիտությունն, անշուշտ, ըստ արժանվույն է գնահատել բանաստեղծի տաղերը՝ գտնելով, որ «երբեք հայ միտքը ինքզինք այնչափ մրրորեն բանաստեղծ, այնչափ էականապես արվեստագետ չէր հայտնաւծ, որչափ այդ տաղերում քանի մը տողին մեջ»¹: Այս բնորոշումը պիտի վերագրել ման «Վարդապառի» տաղին, որն, իրավամբ, արժանացել է հատուկ ուշադրության: Մ. Արեղյանից սկսած, որը «բացի վերնագրից և վերջին երկու տողից՝ ոչինչ կրոնական» չի տեսնում, տաղը ներկայացնում են միակողմանիորեն՝ ամոտնելով հոգևոր իմաստը, բացարձակացնելով «մրա աշխարհիկ ոգին»: «Նարեկացու լավագույն տաղերը թեպէտ արտաքուստ դեռ որոշ կրոնական թեմաներ են ակնարկում, բայց դրանք իրենց գաղափարական էութամբ հոգևոր բանաստեղ-

¹ Ա. Չոպանյան, Երկեր: Ե., 1988, էջ 319:

ծնություններ չեն», - գրում է Մ. Մկրյանը² ելակետ ընդունելով Մ. Արեղյանի վերո-
հիշյալ դիտարկումը: Ինչպես արդեն ցկատված է, Մ. Արեղյանը Գր. Նարեկացու
ստեղծագործությունը քննությունը տանում էր «աշխարհիկ միտումների ծայրահեղ
ընդգծման և րևակացման ուղիով, մի մոտեցում, որ, ամշուշտ, չէր արտահայտում
բուն ճշմարտությունը Գր. Նարեկացու մասին, միակողմանի էր, բայց պարտա-
դրված էր 1930-40-ական թթ. քաղաքական-գաղափարական խեղդիչ մթնոլոր-
տով»³: Այս առումով «Լարդավառի» տաղը կարոտ է մոր մոտեցման՝ Ռոզևորի վեր-
ծանունով և աշխարհիկ ոգու հաշտեցումով:

Տասներորդ դարում հայ քնարերգությունում իր թիկունքին ուներ կոմական քո-
վանդակությամբ, կաղապարված պատկերներով Ռոզևոր շարականներ, սակայն
չպիտի ամոտեսել այն համալամանը, որ աշխարհիկ քնարերգությունը մշտապես
հնչել է գուսանների շուրթերին, և վերջիններիս ազդեցությունը մեծ է Գր.
Նարեկացու և՛ տաղերի, և՛ «Լատեան ողբերգութեան» պոեմի վրա: Պիտի ասել, որ
Գր. Նարեկացին փոխել է Ռոզևոր երգերի պատկերային համակարգը, սակայն
քովանդակությունը եղել և մնում է Ռոզևոր, այլ ոչ աշխարհիկ, ինչպես կարծում էին:

Այդո աստվածուհի Աստղիկին ծաղիկներ են ցվիրաբերել և շուր ցողել Վարդա-
վառի հեթանոսական տոնի ժամանակ, և այս սովորությոը պահպանվել է մեզանում,
իսկ քրիստոնեությունում այն յուրացրել է՝ կապելով Բրիստոսի այլակերպության
հետ⁴: Այսպես, երբ Բրիստոսը Պետրոսի, Հակոբի և Հովհաննեսի հետ քարծրանում
է Թարթու լեռ, «մորանց առաջին կերպարամափոխություն, և մորա երեսը փայլեց
իմպես արեգակը, և մորա համդերմերը լուսի պես սպիտակ եղան»⁵: Տաղում
արեգակնափայլ դեմքը գոհար վարդի կերպ է առել, իսկ սպիտակ համդերմերը՝
շուշանի: Տեսիլքի պահին «երևեցան մորանց մոպսեղ և Եղիան, որ մորա հետ
խօսում էին»⁶: Տաղում մարգարեները ևս այլաբանորեն համդես են գալիս ծառերի և
ծաղիկների կերպարանքով:

Այդ սաւս ու տաւսախ ծառերոյ
Վարդագոյմ ոստս արծակեցից,
Այդ մոն ու բողբոջ արաւոյ
Զայդ առեալ վարդըն շուշանից:

² Մկրյան Մ., Երկեր, երկու հատորով. հ. 1. Երեւան, 1987, էջ 456:

³ Գ. Խայատրյան, Գրիգոր Նարեկացի և հայ միջնադարը. Էջմիածին, 1996, էջ 6:

⁴ Տե՛ս մատենա ժէ 1-9, մարկոս Թ 1-10, Ղուկաս Թ 26-37 (Այս և մոթկտակարանյան հետագա
մոթքերումները Աստվածաշնչի 1995 թ. հրատարակությունից):

⁵ մատենա ժէ 2:

⁶ մատենա ժէ 3:

Ավետարանում պատումը շարունակվում է. «Եւ ցա տակալիմ խօսելիս, ահա մի լուսաւոր ամպ հովանի եղաւ նորանց վերայ. և ահա մի ծայն եղաւ այն ամպիցը և ասաց. Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանել եմ. դուրան լսեցէք»⁷: Տաղում ևս, ինչպես Ավետարանում, ամպը Սուրբ Հոգու խորհուրդն ունի, որն անմիջականորեն կապված է Երկնային Հոր հետ. վերջինս այլաբանված է իբրև Արեգակ.

Ծաղկումը ամեն շաղ առին,

Ծաղմ' յամպէն, ամպմ' յարեգակնէն:

Ուրեմն՝ Սուրբ Երրորդությունը՝ Արեգակը, վարդը և ամպը, գտնվում են Թափառական կապի մեջ: Այլ կերպ՝ ողջ բնությունը ողողված է աստվածային լույսով, որն էլ կենդանություն է տալիս ծառ ու ծաղկին, աստղ ու լուսնին, հով ու շաղին: Անտեսանելի Աստված տեսանելի է դառնում բնության միջոցով. այս է միասին Գր. Նարեկացու աշխարհայացքային երկերը: Հետևաբար բնության փառաբանությունը հասցեագրվում է Աստծուն, և առաջնայինը Գր. Նարեկացու համար հոգևոր իմաստն է:

Բնության պատկերներն, ինչ խոսք, հայտնություն էին մեր պոեզիայում և ունեցան մեծ նշանակություն հետագայում Կոստանդինի և այլոց՝ բնության երգերի ստեղծման գործում: Գր. Նարեկացու հաճախեղ միտքը տիեզերական ներդաշնակությամբ է պատկերել բնությունը, և պատահական չէ, որ տաղն արտաքուստ ընկալվում է որպես բնության երգ: Թեև տաղը «Վարդավառին» է նվիրված, սակայն իրապես Քրիստոսին ձոնված մի ներքող է, և մեր Մատենադարանի թիվ 427 ձեռագրի գրիչ Ստեփաննոսը (ԺԵ դ.) տաղը խորագրում է «Գովեստ», որը համարվում է միջնադարյան տաղի ժանրային տեսակ, ինչպես զանգատը, ողբը, աղերսանքը, խրատը, պարսավը:

Ավելորդ համարելով քաղմիցս ուշադրության արժանացած քաղաձայնություններին և առձայնություններին անդադադա՞նալ՝ կանգ առնենք տաղի տաղաչափական առանձնահատկությունների վրա, մի քան, որ մեզանում, ցավոք, հաճախ անտեսվում է:

Նկատենք, որ մեր գրավոր քերթության մեջ առաջին անգամ այս տաղում կիրառվում է հայրենի կարգը, որը 15 վանկանի ոտանավոր է՝ կազմված 7(2-3-2) և 8(3-2-3) վանկանի կիսատողերից, որոնք իրարից բաժանվում են մեծ հատածով (ցեզուրա. կիսատողերը գիտակցվում են նաև որպես ամբողջական տող) և ունի կանոնավոր շեշտադրություն 2, 5, 7, 10, 12, 15 վանկերի վրա: Այսինքն՝ տողն ստանում է յամբ-անապեստյան կազմություն: Սակայն այս օրինաչափությունը երբեմն-

⁷ Մատթեոս ԺԷ 5:

երբեմն խախտվում է, և սա բնորոշ է առհասարակ Ռայրենցներին, ուստի գերադասելի է մեջ բերել տաղն ամբողջությամբ՝ որոշ բնագրային ճշտումներ կատարելով և չափն ակնհայտ դարձնելով: Իրեն բնագիր՝ ընդունել ենք Ա. Քյոշկերյանի կազմած պիտաքննակամ բնագիրը⁸:

Դոճա՛ր /վարդըմ վա՛ր/ առեա՛ր/
 Ի վեճի՛ց /վարսի՛ցձ/ արփեմի՛ց.//
 Ի վե՛ր /ի վերա՛յ/ վարսի՛ց/
 Ծառալէ՛ր /ծաղի՛կ/ ծովալի՛ց.//
 Ի Ռա՛մատարա՛ծ/ ծովէ՛ց/
 Պղպջէ՛ր /զոյմը՛ձ/ այձ ծաղկի՛ց.//
 Նրփի՛ձ /Նրփմուձա՛կ/ ծաղկի՛ց/
 Յողջողէ՛ր /պրտու՛ղձ/ ի ճղի՛ձ.//
 Քրքու՛մ /վակասի՛ր/ պտու՛ղն/
 Ամաճէ՛ր /խոտը՛ց/ տերևո՛վ.//
 Տերե՛/ւձ տափ՛ղ /տուողի՛ց/
 Ջոր երգէ՛ր /Դափ՛թ/ Ռաշալի՛ց.//
 Ի փու՛նջ /խուռներա՛մ/ վարդի՛ց/
 Գոյնզգո՛յն /ծաղկու՛նք/ ծաղկեցա՛ց.//
 Այդ սա՛ւս /ու տաւսա՛խ/ ծառե՛րդ/
 Վարդազո՛յն /ոստ⁹ ա՛ր/ ծակեցի՛ց.//
 Այդ մո՛ճ/ ու բողբո՛ջ/ արա՛ւս¹⁰/
 Ջարդ առեա՛լ /վարդը՛ց/ շուշանի՛ց.//
 Ծուշան/ը՛ն շողէ՛ր/ Ռովտի՛ձ/
 Ծողջողէ՛ր /ղէմ ա՛ր/ եզակա՛ցն.//
 Այն Ռի՛ս/ սիսալիձ /Ռաւէ՛ց/
 Հո՛վ Ռարեա՛լ /զոճա՛ր/ շուշանի՛ց.//
 Եայն Ռա՛ր/ ալալի՛ց/ լեռնէ՛ց/

⁸ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և պոեմեր, աշխ. Ա. Քյոշկերյանի: Ե., 1981:

⁹ Բնագրում՝ ոստ: Ուղղում ենք տաղաչափության պահանջով, մանավանդ որ տաղի 9 ձեռագրերից 6-ում Ռամդիպում ենք «ոստ» ձևին:

¹⁰ Բնագրում՝ «արատը»: Մ. Աբելյանն ուղղում է «արատը»: Տաղը մեզ է հասել ԺԵ դարի ձեռագրերով, որոնցում այս բառը ներկայացվում է զանազան ձևերով, իսկ թիվ 5423 ձեռագրեր գրիչ Մաթևոսյանի «աստաւստ» ձևը ճիշտ չհամարելով՝ ուղղում է «աստաւստ», որը ևս ճիշտ չէ. սակայն վստահեցնում է, որ բառը լի հասկացվել մաս միջնադարում: Կարծում ենք՝ Մ. Աբելյանի ուղղումը ճիշտ է և՛ տաղաչափության, և՛ բառիմաստի (ծառի տեսակ էլ առումով):

Բաղըր աղո՛վ /ցաղէ՛ր/ շուշանի՛ն://
 Օռւշա՛ն/ըն շաղո՛վ/ լցեա՛լ/
 Օող շաղո՛վ/ և շա՛ր/ մարգարտո՛վ//
 Մաղկո՛ւնք¹¹ /ամէ՛ն շա՛ղ/ առի՛ն/
 Օաղժ՝ յամպէ՛ն/ ամպժ՝ յա՛րեցակցէ՛ն://
 Աստե՛ղք¹² /ամէ՛ն շու՛րջ/ առի՛ն/
 Դէմ լուսնի՛ն /գումդ-գու՛նդ/ բոլորի՛ն//
 Գումդ-գու՛նդ /խաչաձև՛/ գնդա՛լ/
 Յարիցուա՛ծ /երկնից/ շրջանակ://
 Փա՛ռք Հաւ՛ր / և Որդւո՛յն/ յաւէ՛տ/
 Սուրբ Հոգւո՛յն/ այժմ և՛/ յաիտեանս://

Ինչպես նկատելի է, տաղում հանդիպող 102 շեշտերից միայն 9-ն է խախտումով, այսինքն՝ խախտումը կազմում է 8,8%: Ընդ որում՝ բառային շեշտի խախտում է նկատվում երեք անգամ 12-րդ վանկում: Մնացած դեպքերում ուղղակի հատածներով կարգավորվում է շեշտադրությունը, իսկ գոյներն, խոտըն, վարդըն բառերի բառային շեշտը գրավոր խոսքում գիտակցվում է իբրև խախտում, սակայն ուղղակի շեշտը ի հայտ է գալիս երգվելիս, մի երևույթ, որ նկատելի է անգամ Սայաթ-Նովայի խաղերում:

Հայրենի չափը հայ գուսանական արվեստից առաջին անգամ անցել է մեր գրավոր քանարվեստին «Վարդավառի» տաղում, թեև հայրենների հանգավորումը նկատելիորեն տարբեր է այս տաղի հանգավորումից, իսկ վերջինս էլ քացատրվում է հանգի՝ իբրև գործող ուղղակի կրկնության միջոցի մոր առաջացումով, որը ևս կապվում է Գր. Նարեկացու անվան հետ:

¹¹ Բնագրում՝ Մաղկունքը, իսկ թիվ 5423 ձեռագրում՝ ճաղկունք:

¹² Բնագրում՝ աստղունքը: Չորս ձեռագրերում՝ աստեղքը, երկուսում՝ աստեղքն: Տաղաչափության պահանջով ուղղում ենք աստեղք:



ԵՂԻԾԵ ԲԱԶՈՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐՈՆ

Մարդկության պատմության հմայուն ժամանակներից ի վեր իրավունքը միակ գործոնն է, որ կարգավորում է հասարակական փոխադարձ հարաբերությունները, մարդկային համրակեցության մեջ ծագող թե՛ անհատական, և թե՛ խմբակային շահերի ռախումը մեղմացնում, իր նորմերով որոշ սահմանների է քաժանում որոշակի շրջանակների մեջ դնելով այդ շահերի փոխադարձ հարաբերությունները: Մարդկային ցեղի զարգացման առաջին աստիճաններում հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերը կրել են միանգամայն այլ բնույթ: Աստվածային կամքի գաղափարը, շնորհիվ աստվածապետական հզոր տիրապետության, եղել է միակ գործոնը, որն իր անհաղթահարելի ազդեցությունը տարածել է հին մարդու ամբողջ աշխարհայացքի, նրա բոլոր կենսական կողմերի վրա: Հասարակական կյանքի կարգավորությունը հիմնված էր կրոնով, ուր աստվածային կամքը համարվում էր իրավունքի, օրենքների միակ հնարավոր աղբյուրը, մի կամք, որը ժողովրդի հավատի համաձայն արտահայտվում էր կա՛մ անմիջապես, կա՛մ էլ հոգևոր դասի մերկայացուցիչների միջոցով: Մենք տեսնում ենք, թե ինչպես ամբողջ երբայական իրավունքը տոգորված է ահեղ ու անողոք Եհովայի ոգով, Եհովայի, որի ամուսին էին խոսում մարգարեները և որի ամուսին էին օրենքներ սահմանում իսրայելի ժողովրդի համար: Մովսես մարգարեի տասը պատգամները, հրեական իրավունքի այդ հիմնական օրենքները, Աստվածայինից տրված, Եհովայից բխած էին համարվում իսրայելի ժողովրդի աշխարհայացքի մեջ:

Կանոնական իրավունքը, հիմնված լինելով քրիստոնեական սկզբունքների վրա, իր զարգացման սկզբնական աստիճաններում, տակավին այն ժամանակներում, երբ քրիստոնեական համայնքները չէին հետապնդում քաղաքական իդեալներ, երբ Եկեղեցիները չէին հետապնդում պետական-քաղաքական գերիշխանության նպատակ, ահա այդ կանոնական իրավունքն իր համար աղբյուր ունեւր միայն առաքյալների սահմանած կանոնները: Այդ առաքելական կանոնները բխում էին Քրիստոսի քարոզած մտքերից ու խրատներից և ուրեմն տոգորված էին աստվածային-կրոնական ոգով: Հապա Ղուրանը՝ մուսուլմանների իրավաբանական կարգերի ու նորմերի այդ ժողովածուն, որ կազմել է Մուհամմեդն իր հավատացյալների համար, արդյո՞ք մուսլ աստվածային բնավորությունը չի կրում իր մեջ: Ավելի՞մ իսլամի հաստատվելու ժամանակներից մինչ օրս ճշմարիտ մահմեդականն ապրում է շարիաթի կանոններով և չի ճանաչում որևիցե քաղաքացիական օրենք: Մահմեդական իրավունքի

առաջնակարգ աղբյուրը Յենց շարիաթն է՝ օրենքների միակցությունը, որի մեջ է մտնում մահմեդական աշխարհի սրբությունը սրբոցը՝ Ղուրանը, իր 114 սուրահներով¹:

Ի դեպ, արաբները շարիա-ճամապարթ քառով էին կոչում նաև Մուհամմեդին, որպես օրենսդրի և «իսկական ճամապարթը» նախաճշողի:

Մահմեդական աշխարհը, որ մինչև օրս այնպես հավատարիմ ու ամրոդդողղ հետևում է իր մեծ մարգարեի սահմանած կանոններին ու օրենքներին, չէ՞ որ այդ բոլորը համարում է Ալլահի կամք, հավատում՝ իբրև Ալլահից իր մեծ մարգարեի միջոցով ստացած կանոններ:

Նույնն է նկատվում նաև հեթանոսական կանոնների աշխարհայացքներում: Ամբողջ հին հնդկական իրավունքն արծարծվել է մի շարք կրոնական երգերում ու տաղերում, մարմնացել սրբազան գրքերի մեջ, որտեղ օրենքներն ու իրավաբանական կանոններն ընդունվում էին իբրև աստվածային սահմանած հրամաններ, աստվածային կամքի արտահայտություններ: Այդպիսին են գոնե Վիշնուի, Մանույի օրենքները, Այաստամբա և Արտաշաստրա ժողովածուները և այլ օրենքներ, որոնք իբր թե Բուդդայի անձնավորության էությունից են բխում, նրա աստվածային գերագույն իշխանության գաղափարով են կարգավորում մարդկային փոխադարձ հարաբերությունները:

Ջրադաշտական կրոնի վարդապետության քովից դուրս եկած Զենդ-Ավեստան արդյոք իր իրավաբանական նորմերով չի՞ մերկայացնում Ահուրամազդայի հզոր կամքը, որով ղեկավարվել են հին պարսիկներն իրենց առօրյա սոցիալ-իրավական հարաբերություններում²: Իսկ թե ինչ աստիճանի փոխկապակցված են եղել իրավունքն ու կրոնը Հին եգիպտոսում, կարելի է կարծիք կազմել այդ երկրի աստվածների պանթեոնը հպանցիկ ուսումնասիրելով: Այստեղ ամեն ինչ և ամեն բան կապված է եղել որևէ աստծու հետ, և նույնիսկ երկրի ամուրը «Այկապտա» - «Պտաֆի ոգու պալատ», կապված է եղել դարբինների հովանավոր աստված Պտաֆի ողորմածության և մեծահոգության հետ: Ավելին. եգիպտացիներն արդարության և օրենքների առանձին աստված են ունեցել Տոտ անունով, որը զբաղեցրել է Հին եգիպտոսի գերագույն աստված Ռաի վեզիրի պաշտոնը³:

Հին աշխարհի մեծագույն քաղաքակրթություններից մեկը ստեղծողները՝ շումերները, երկրի վրա և նրա ընդերքում գտնվող ամեն ինչի սկիզբ համարում էին իրենց երկրի աստվածներին, որոնք կյանք են պարգևել մարդկանց և օժտել բանականությամբ: Նրանց հրամանով և օգնությամբ ստեղծվում են մարդկությանը հայտնի ամենահին գրավոր օրենքները Ուրում և Հագաշում, որոնց հիման վրա էլ մ.թ.ա. XVIII դ. ծնվում է հին աշխարհի իրավական մտքի անգուցական հուշարձանը՝ Համմուրաբիի օրենսգիրքը: Դրա նախաբանում ասվում է. «Այնժամ ինձ՝ Համմուրաբիին, փառավոր, աստվածավախ թագավորին, որպեսզի շողալու հնարավորություն տամ արդարությանը երկրում, որպեսզի կործանեն անօրենքներին ու

¹ История государства и права зарубежных стран под ред. Галаанзы. Москва, 1963, стр. 557.

² Ավելի մանրամասն տե՛ս Ա. Գ. Սուքիասյան, Հին իրանական իրավունքը ըստ Սասանյան դատաբանագրի: Երևան, 1980 թ.:

³ История государства и права зарубежных стран под ред. Галаанзы. Москва, 1963, стр. 54.

չարագործներին, որպեսզի ուժեղը չճշի թույլին, որպեսզի ես, ինչպես Ռամադը, ծագեմ սևագլուխների վրա և լուսավորեմ երկիրը, Ամուս ու Լ:Աիլը կոչեցին ի րարօրություն մարդկանց»⁴։ Այժմ այն օրենսդիրքն աչքի է զարնում իր ընդգծված «աշխարհիկության»⁵ լայն Համաժողովին ի յուր աշխարհի հալտարարում է իր Գրեյքների աստվածային սահմանման մասին։

Օրենքների ու աստվածային կամքի փոխկապակցվածության մի շատ ուշագրավ տեղեկություն կա Հերոդոտի մոտ՝ կապված պելասգների սովորությունների հետ։ Պատմաբանը վկայությամբ, պելասգները գոհնր մատուցելիս ոչ մի աստծո անուն չէին տալիս, քանի որ նրանք դեռ չէին իմանում այդ անունները։ Պելասգները նրանց «աստվածներ» կոչեցին այն պատճառով, որ նրանք եղել են աշխարհի կարգ ու կանոնը և յուրոր սովորություններ հաստատողները⁶։ Այսինքն ստացվում է, որ «աստված» և «կարգ-օրենք» բառերը մույն նշանակությունն են ունեցել և հավասարազոր հասկացություններ եղել հին հույների մոտ։

Կրոնի և իրավունքի այդ ամրաժանելի հասկացությունը, հոմանիշ նշանակությամբ ըմբռնումն իրեն աստվածային կամքի արտահայտություն, մի բնորոշ, ընդհանրացած երևույթ է՝ մարդկության մշակութային պատմության մեջ։ Այնքա շատ հետոն կգնայինք, եթե այստեղ փորձեինք մեկ առ մեկ թվել կամ աչքի անցկացնել յուրոր քաղմարիվ այն փաստերը, որոնք ապացուցում են զանազան ժողովուրդների մեջ գոյություն ունեցած աշխարհայացքները կրոնի և իրավունքի հոմանիշ նշանակության ու միատեսակ ըմբռնման մասին։

Ինքնըստիմքյան ակներև է, որ եթե իրավունքի այն նորմերը, որոնցով կարգավորվում են հասարակական փոխադարձ հարաբերությունները, աստվածային կամքից բխած էին ճանաչվում և կրոնական զադափարներով սրբազործվում, այն ժամանակ այդ տեսակ իրավունքի միակ պաշտպանողն ու գործադրողը, այդ տեսակ իրավունքի միակ ստեղծագործողներն ու խմբագրողները կարող էին լինել միայն հոգևորականները՝ լինեն նրանք հեթանոսական, քրիստոնեական, լինեն մահմեդական կամ բուդդայական կրոնների։ Իրավունքի զարգացման պատմության մեջ մշտապես նկատում ենք, թե ինչպես ամենուրեք հոգևոր դասի ազդեցությունը շեշտակի աչքի է ընկնում բոլոր իրավական հարաբերությունների կարգավորման ոլորտում՝ որոշ բնույթ մերձեցելով իրավաբանական աշխարհայացքների ամրապնդման գործընթացին։ Այդ ազդեցությունը իրականացնում էր ոչ միայն տեսականորեն, այլև գործնական կերպով, թեև զանազան տեղերում իր ուրույն ձևերով։

Հին Հնդկաստանում քրմերը՝ բրահմանները, հանդես էին գալիս դատարաններում իբրև թագավորների անպայման ու անհրաժեշտ դատավորակիցներ, այդ քրմերի դատարանները շատ անգամ փոխարինում էին թագավորականին։ Նույնիսկ ավելի լին. ըստ հին հնդկական հասարակության կաստայական կառուցվածքի, քրահմանների դասն առաջինն ու բարձրագույնն էր մնացած դասերի համեմատ, քանի որ Բուդդան նրանց ստեղծել էր իր գլխից։ Բրահմանները միայն, ըստ հին հնդկական իրավունքի,

⁴ Законн Хаммурапи, Пер И. М. Дяконова, Вестник древней истории, 1952, №3, стр. 225.

⁵ Հերոդոտոս, Պատմություն զրջից, քարգ. Ա. Կրկյաշարյանի։ Երևան, 1988 թ., էջ 109.

տիրապետում էին օրենքների մեկնաբանման բացառիկ շնորհին, իսկ թագավորները պատկանում էին քառորդների դասին և այդ իրավունքից չէին օգտվում:

Հին եգիպտոսում ու Բաբելոնում քրմական դասը տիրապետություն էր անում պետական և հասարակական կյանքի թուր ոլորտներում՝ չմոռացալ մահ իր հիմնական կրոնական պարտականությունների մասին: Բաբելոնում դատավորների մեծ մասը նշանակվում էր քրմերի դասից, իսկ դատավորն ինքը համարվում էր երկրի գերագույն քուրմն ու արդարության երաշխավորը և բարձրաքանդակներում հաճախ պատկերվում կշեռքը ձեռքին⁶, արևի աստված Շամաշի հետ:

Հին գերմանների մոտ քրմերը ղեկավարել են ժողովրդական ժողովները, ուր օրենքներ ու իրավական կարգեր էին մշակվում: Այդ քրմերը, ինչպես վկայում է I-II դդ. հռոմեական պատմագիր Կոռնելիոս Տակիտոսը, ծագումով Գալլիայից է եղել և քաջատեղյակ իրենց ժողովրդի մեջ տիրող սովորություններին: Հին Գալլիայում քրմերը, որոնք կոչված էին դատավորական պարտականությունների՝ իրենց դատաստանի իրավասությանը ենթարկելով թուր քաղաքացիական ու քրեական երևույթները, սահմանում էին օրենքներ, դատավճիռներ ու որոշումներ հատուկ խորհրդավոր բանաձևերով, որոնց ուժ էին տալիս և սրբազնացնում զանազան կրոնական ծեսերով ու ողջակեզներով:

Հին Հռոմում մուլնպես քրմերին էր վերապահված իրավաբանական երևույթների ու օրենքների մեկնաբանությունն ու բացատրությունը: Այդ պարտականությունը կատարում էր պոնտիֆիկների կոլեգիան, որի տված մեկնաբանություններն այս կամ այն օրենքի վերաբերյալ պաշտոնապես ընդունվում էին պետության կողմից և դառնում պարտադիր դատավորների համար: Դեռևս թագավորական ժամանակներից պոնտիֆիկների քրմական կոլեգիան մեծ ազդեցություն ուներ երկրում իրավական ամբողջ ոլորտի վրա, և սրա քրմապետը՝ pontifex maximus-ը, համարվում էր մարդկային ու աստվածային գործերի միջնորդ ու հաշտարար դատավոր: Նրան էր պատկանում մահ պատժիչ իշխանությունը սակրալ հանցագործությունների դեպքում, և նա կարող էր, ասենք, կուսության ուխտը խախտելու համար մահապատժի ենթարկել վեստա աստվածուհու քրմուհիներին⁷:

Փոքր Ասիայում, Բյուզանդական կայսրության հպատակ արևելյան ժողովուրդների մեջ, ուրեմն, ի միջի այլոց՝ մահ Հայաստանում, մախնի քրիստոնյաներից ավանդվել էր մի հին սովորություն, այն է՝ իրենց վեճերը, իրավական գործերը լուծելու համար դիմել ոչ թե աշխարհական, այլ հոգևոր դատարաններին: Եվ ահա քրուզանդական կայսրերը մի շարք Novella-ներով այդ սովորությանը իրավական ուժ են տալիս: Կոստանդին Մեծ կայսրը Արևելքի թուր եպիսկոպոսներին տալիս է դատավարության և դատաստանական իրավասության լիազոր իրավունքներ, այսպես կոչված՝ *andientia episcopalis* հիմնարկության հաստատությամբ: Սրա էությունն այն էր, որ դատով, թողողով յուրաքանչյուր կողմը իրավունք ուներ հակառակորդ կողմին, մուլմիսկ վերջինիս կամքին հակառակ, դատաստանի տանել եպիսկոպոսի մոտ, որն այս դեպքում կատարում էր դատավորի դեր: Ավելի ևս

⁶ Ժամանարևոդություն դեպի Հին Բաբելոն, Քլեմենտ-Բրանդտ: Երևան, 1981 թ., էջ 169:

⁷ История государства и права зарубежных стран под ред. Галавны. Москва, 1963, стр. 204.

Ռեստրոքրիական է այն դերը, որ խաղացել է Ռոզնոր դասը Արևմտյան Եվրոպայում միջին դարերում ընդհանրապես իրավունքի և մասնավորապես պատժական իրավունքի զարգացման վրածում: Այն Ռիմնական սկզբունքները, որոնք հառաչում էին Ռոզնոր պատժական իրավունքի համար որպես նյակետ, կայանում էին նրանում, որ ռեռապործության մեջ կարծում էին տեսնել մարդկային ներքին զգացողության արտահայտությունը, մարդու ներքին բնույթից ռիսած մի մեղանչանք դնակի ստեղծանակիմ օրինականությունը: Իրավունքը տիրապետող այդ սկզբունքների համաձայն, իր պատմիչ միջոցներով, պիտի մաքառեր մարդկային մեղսագործության թուր սաղմերի դեմ, պետք է դուրս վաներ մարդու ներքին աշխարհից «չարության» արմատները և այնտեղ հաստատեր խաղաղություն, որպեսզի այդպիսով մարդու և Աստծո միջև իրր հաշտություն առաջանար: Այդ Ռիմնքներն այնքան խոռոմ էին արմատացել միջնադարյան իրավալիտակցության մեջ, որ Ռոզնոր պատմիչ իրավունքը դարեր շարունակ իշխում էր արևմտյան բովանդակ իրավունքի մեջ և մույնիսկ ծնեց դատավարության հատուկ սկզբունքներ ինկվիզիցիայի ժամանակներում:

ԼԴնք տեսնում ենք, թե ինչպես միջնադարյան Անգլիայում և Ֆրանսիայում այդ Ռիմնական սկզբունքների ազդեցության ներքո եկեղեցական օրենսդրությունը զրավել էր հասարակական-պետական կյանքի թուր ոլորտները և իր սահմանած նորմերով կարգավորում է քաղաքացիական իրավական թուր երևույթները:

Նույն փաստերը մշարում ենք նաև հայոց իրավունքի պատմության մեջ: Ուսման է լուկ աչքի անցկացնել հայոց եկեղեցական ժողովների որոշումները, հայոց կանոնական իրավունքի նորմերը, որպեսզի տեսնենք, թե ինչ մեծ դեր են խաղացել Ռոզնորականները հայկական իրավունքի զարգացման պատմության մեջ, թե ինչ ոգի ու կմիք են դրոշմել հայ ժողովրդի իրավական հարաբերությունները կարգավորող նորմերի վրա: Այստեղ արժե կանգ առնել Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վրա, ուր այնքան նախամեծար մշանակություն է տրվում, այսպես կոչված, «Ռոզնոր» կամ «եկեղեցական» դատաստանին: Վերջինիս ենթակա էին մախ այն թուր գործերը, որոնք վերաբերում են եկեղեցուն, «զեկեղեցոյ դատաստան նախկուպոս Ռոզասցե», և ապա՝ այն թուր գործերը, մույնիսկ աշխարհական, եթե այդ տեղերում չկան աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ, «Եւ ի տեղոյ, ուր ոչ իցեն թագաւոր կամ իշխանք, պարտ է յնախկուպոս տալ զայս յաւանդ, զի զամենայն դատաստանս Ռոզասցեն»⁶:

Բացի այդ, հայ քաղաքական կյանքը, մանավանդ միջին դարերում, երբ հայերը իսպառ զրկվել էին սեփական քաղաքական իշխանությունից, այնպես էր կազմակերպվել, որ Ռոզնորականությունը միակ ներգործական ներկայացուցիչը դարձավ իրավաբանական հարաբերությունների կարգավորման մեջ, միակ ղեկավարը դատաստանական ու վարչական Ռիմնարկություններում:

Հոգևորականության՝ կրոնական հաստատությունների այդ սպասավորների այդ տեսակ ազդեցությունը իրավունքի զարգացման վրա միանգամայն բնական

⁶ Վ. Բաստանյանց, Մխիթար Գոշի Դատաստանագիրը հայոց: Վաղարշապատ 1880 թ. Նախադրում, Ե. Վլ., եր. 26:

էր: Հոգևորականներն անցյալում ունեին ավելի լայն հասարակական գործունեության ասպարեզ և աճհամեմատ ավելի մեծ քաղաքական դեր էին խաղում ժողովուրդների պատմության ընթացքում, քան ներկայումս: Հոգևոր դասի ներկայացուցիչները, լիցեիճ նրանք քրմերը թե քահանաները և այլն, վաղեմի ժամանակներից հայտնի էին իբրև բժիշկներ, իրավագետներ, աստղագետներ և ընդհանրապես գիտուններ, որոնք իրենց պարտականությունն էին համարում զբաղվել ոչ միայն դեպի աստվածություններն ու կրոնական-քարոշական հիմնարկությունները մարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերով, այլև ռառմնասիրում, գիտակցում և ըմբռնում էին մարդկանց փոխհարաբերությունները դեպի մարդիկ և դեպի շրջապատող բնությունը:

Վերոհիշյալ բոլոր փաստերը ապացուցում են մի հետաքրքիր երևույթ. որ իրավունքի և կրոնի հասկացողությունները զարմանալի նմանությամբ ամեն տեղ միացած, ձուլված են եղել և կրկնվում են գրեթե բոլոր ժողովուրդների մտավոր-կուլտուրական զարգացման պատմության էջերում: Ինչո՞ւ քացատրել տարբեր ժողովուրդների աշխարհայացքներում տիրապետող այդ երկու հասկացությունների միատեսակությունը, հոմանիշ նշանակություն ունեցող պատճառները: Անշուշտ ամենուրեք հիմքը նույնն է լիցեիճ, եթե մենք պատահում ենք այդ տեսակ մի ընդհանուր երևույթի, ընդհանրացած մի փաստի: Այդ հիմքը պիտի որոնել մախաբայրերի պաշտամունքի մեջ, մի պաշտամունք, որը նույնպես տիեզերական ընդհանրական բնույթ ունի գրեթե բոլոր ժողովուրդների մոտ:

Ամբողջ մախանական կրոնը պարփակված էր ընտանիքում, նրա օջախի շուրջ: Տան մեծը, մահապետը, միակ քուրմը, միակ հոգևոր պետն էր, որ վարում էր ընտանիքի բոլոր կրոնական արարողություններն ու ծեսերը, մախանձախնդիր ու ամշեղորեն հսկում մախաբայրերի պաշտամունքն ու աստվածների երկրպագումը⁹: Նահապետը, իբրև իր ընտանեական կրոնի միակ կատարողն ու մեկնաբանողը, միայն ինքն իրավունք ուներ իր մախաբայրերի կրոնական վարդապետությունը, մախաբայրերի, որոնք նրա կրոնական աշխարհայացքում արդեն աստվածացվել էին, ավանդելու և ուսուցանելու իր անմիջական ժառանգին, որը հետագայում պիտի հաջորդէր նրան: Բայց միևնույն ժամանակ գերդաստանի մահապետը, ինչպես ցույց են տալիս գիտական հետազոտությունները, օժտված էր իր ընտանիքի սահմաններում այնպիսի իրավական դիրքով ու հեղինակությամբ, որը նրան տալիս էր գերդաստանի միակ ներկայացուցչի նշանակության բոլոր իրավական-սոցիալական հարաբերությունների ոլորտում և հասարակական համակեցության մեջ: Նահապետի *pater potestas*-ը տարածվում էր գերդաստանի ամդամների վրա ոչ միայն իր պատերի ներսում, այլև նրանից դուրս, պետական-հասարակական քովանդակ մթնոլորտում: Նրա անձնավորության մեջ միացած էին թե՛ դատավորի, և թե՛ օրենսդրի, թե՛ զինվորական հրամանատարի, և թե՛ գերդաստանի քացարձակ հրամայողի բոլոր իրավունքներն իր ընտանիքի ամբողջ կազմի վրա¹⁰:

⁹ Օջախի մախաբայրերի պաշտամունքի մասին մանրամասն տե՛ս Խ. Սամվելյան, Հայ ընտանեկան պաշտամունքը, Ազգ. հանդես, XII, XIII, XIV:

¹⁰ Արսեն վրդ. Ղլտճյան, Հայոց հիմ իրավունք, ընտանեկան իրավունք: Ալեքսանդրապոլ, 1903, էջ 83:

Որևե՞մ գերդաստանի մահապետի իրավական դրությունը բնորոշվում է ճրագով, որ մահապետական իրավունք է թե՛ հույսը, և թե՛ աշխարհիկ տեր իր ընտանիքի, իր սերնդի: Այսինքն մահապետ մահապետական և՛ քուրմ է, և՛ դատարանի, և՛ բահաճ, և՛ օրենսդիր, և՛ գործադիր-կարգադրող իր ընտանիքի սահմանվոր, և՛ տրամաբանորեն ձևավորվում է, որ մահապետական իրավունքական հանգանակներում: Այսինքն տրամաբանորեն ձևավորվում է, որ մահապետական իրավունքական հանգանակները կարգավորվում էին այն իրավաբանական նորմերով, որոնք գործում, մշակվում էին մահապետական գերդաստանի, տոհմի աշխարհայացքում, կոմպլոմ ու ամբողջացում այն կրոնական մեղուրդում, որտեղ օջախի ու մահապետների պաշտամունքը դարձել էր գերդաստանի գոյության ու ծաղկման հիմքը:

Մտածելով կազմակերպությունը, ընտանիքում ձևավորված պատկերացումները, ինքնով իրավաբանական մտածողության սկզբնական հիմնաքարեր, դառնալով մահապետական իրավունքի գոյացման ու զարգացման առաջին աստիճաններից մեկը, ակնհայտ է, որ ամբողջովին պիտի մարմնավորեն, տեղադրեն ձևավորվող իրավաբանական նորմերի ոգին այն կրոնական աշխարհայացքով, որոնցով դեկավրանական նորմերով, որոնք տակավին չէին ազատված իրենց մահապետական կրոնա-բարոյական աշխարհայացքից: Իրավունքն ու կրոնը կամ, ավելի ճիշտ ասած՝ իրավունքն ու բարոյականությունը ղեկավարվում էին մի ընդհանուր հասկացություն, մի ծուլված գաղափար և հասարակական հարաբերությունների կարգավորման առումով դիտվում մեկ աշխարհայացողությամբ:

Առցիկ-մշակութային կյանքի զարգացման հետևանքով դարերով ապրող մահապետական բարքերն ու սովորությունները, սակայն, հասարակական նոր ազդակների շնորհիվ, սկսում են դուրս գալ իրենց միակերպ գոյությունից և ենթարկվել բաժանման պրոցեսին՝ դիֆերենցիալի, մի հասկացողությունից տարրալուծվում են երկու և ավելի ինքնուրույն հասկացողություններ, գաղափարներ: Այսպիսով, ժամանակի ընթացքում մարդկային միտքն ընդունակ է դառնում առանձին ներույթները տարրալուծելու իրենց բաղկացուցիչ մասերի և, գտնելով, անջատելով առանձին հասկացողությունները, տալ նրանց ինքնուրույն, անկախ դրություն: Մտավոր զարգացման այդ պրոցեսում իրավունքի ու կրոնի կամ բարոյականության հասկացողությունները միմյանցից անջատվում են: Այդ բաժանման պրոցեսը շատ երկար ժամանակամիջոցում էր կատարվում՝ բնորոշվելով մի ամբողջ պատմական շրջան: Այդ երկու անջատված հասկացողությունների միջև, սակայն, տակավին մնում էր մի առնչություն, փոխադարձ մրցում, որի շնորհիվ իրավունքը թեև բաժանվել, անջատվել էր կրոնից, այնուամենայնիվ կրում էր դուալիստական ձև: Մենք դա տեսնում ենք հին հռոմեական և հունական իրավունքների օրինակի վրա, որոնք իրենց զարգացման ամբողջ պատմական շրջանում տեղադրված էին դուալիստական սկզբունքներով, այն է՝ պարփակվում էին մի կողմից իրավունքի մարդկային, քաղաքացիական և մյուս կողմից՝ կրոնական, բարոյական տարրեր: Իրավունքի այդ դուալիզմը շատ բնորոշ դրոշմվել է հին հույների և հռոմեացիների դիցաբանության մեջ, որտեղից

մրա հետքերը շարունակվել են պահպանվել ու փոխանցվել՝ մերմուծվելով մաև մրանց հին օրենսդրության մեջ:

Հին հունական իրավունքի պատմության մեջ այդ դուալիզմն արտահայտվում էր մի կողմից *θέμις*, *θέμις* Թեմիդայով, իբրև ճշմարտության և արդարադատության աստվածուհի, մյուս կողմից՝ *νόμος* բառերով, որ մշանակում է աշխարհական օրենք: Հին հռոմեացիների իրավունքի մեջ մնամապես հիշյալ դուալիզմը քնորոշվում էր երկու հայտնի տերմիններով՝ *fas*, իբրև կրոնական, աստվածային օրենք, և *jus*, իբրև աշխարհական, մարդկանց վարքագծի կանոններ սահմանող օրենք: *Fas lex divina, jus lex humana est* - ասում էին հին հռոմեացիները:

Մտավոր զարգացման պրոցեսը հավասարաչափ չզարգացավ երկիր մոլորակի վրա և, հակառակ այդ ասպարեզում Արևմուտքի ցուցաբերած մեծ առաջընթացին և հաջողություններին, Արևելքում մարդկային մտածողության սահմանները չկարողացան դուրս գալ իրենց անշարժությունից, և մենք նույնիսկ մեր օրերում ականատես ենք լինում մոսուլմանական սաստկացող մոլեռանդության դրսևորումներին, որն անշուշտ ավելի է նպաստում արևելյան ժողովուրդների մտավոր կախվածությանը կրոնափիլիսոփայական գաղափարներից:

Օգտագործված գրականության ցանկ

1. История государства и права зарубежных стран, под общей редакцией П. Н. Галанца. Москва, 1963
2. Ա. Գ. Սուքիասյան, Հին իրանական իրավունքը ըստ Սասանյան դատաստանագրքի: Երևան, 1980
3. Законы Хамурапи, перевод И. М. Дяконова, Вестник древней истории; 1952, стр. № 3
4. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգ. Ս. Կրկյաշարյանի: Երևան, 1986
5. Է. Քլեմգել-Բրանդտ, Մանապարհորդություն դեպի Հին Բաբելոն: Երևան, 1880
6. Վ. Բաստամյան, Միսիթար Գոշի Դատաստանագիրք հայոց: Վաղարշապատ, 1880
7. Խ. Սամվելյան, Հայ ընտանեկան պաշտամունքը: «Ազգագրական հանդես», գիրք XII, XIII, XIV
8. Արսեն վրդ. Ղլտճյան, Հայոց հին իրավունք, ընտանեկան իրավունք: Ալեքսանդրապոլ, 1903
9. Կոռնելիոս Տակիտեայ Տարեգիրք, թարգ. Ե. Հիլմիզեան: Վենետիկ, 1903
10. И. Покровский, История римского права. Петроград, 1919

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՕՐԱԿԱՆԻ 1286 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
«ՔԵԹՈՐԱՐ»
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԸ

Կորյուժի տեղեկությամբ՝ «ամդէմ ի մմիմ ամի (իմա՝ 439-իմ), յետ ամսոց վեցից ամեցելոց վախճամի երամելւոյմ Աաթալայ, լիմէր Քամդերմ սրբով վարդապետան րանակն Հայոց յԱրարատեան ի Նոր քաղաք, և նովիմ Քոցեկրոց վարուց Քասաճէր սրբոյմ քրիստոսակոյ կատարումմ՝ յետ սակաւ իմչ ատուրց Քիւանդութեանմ յերեք-տասներորդում ամսեանմ Մեթեկամի»¹: Հայոց Մեծաց Քաղարապետ Վաթան Ամատուժիմ և Հմայակ Մամիկոնյանը, «Քամդերմ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրթմութեամբ և Քոզկոր ցմծութեամբ, կամթեղօք վառելովք և ջաթիւք քորքոջելովք և խնկօք քորելովք և ամենայմ յուսանանամչ գնդիւմ, և այնու խաչանշան յուսաւոր յառաջախաղաց նշանան յՕշականն ելամէիմ, և ամդ ի մարտիրոսարանմ մատուցեալ, գօրիմաւոր յիշատակմ կատարեալ, ապա մշանմ աներևոյթ լիմէր, և նոքա յիրաքանչիւր դառնայիմ տեղիսմ»²:

Ըստ Վարդի ընդարձակ խմբագրութեամբ, Քուրանկավորութիւնից երեք տարի անց՝ «յաջողեցան Վաթանայ Ամատունւոյ քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն Քանգիստմ յօրիմեալ... և ամենայն սրբովք ի միասիմ գումարելովք զմարմիմ խաչակրօն վկայիմ Քրիստոսի՝ երամելւոյմ Մաշթոցի ի Քանգիստ խորանին փոխէր»³: Վարդի Քամառոտ խմբագրութիւնը (Գ) երեք տարվա փոխարեն տալիս է երեք ամիս, իսկ Ամատունու կառուցածը կոչում «տաճար փառաց անուանմ Աստուծոյ»⁴, ուր՝ «ի տաշածոյ վիմօք սքանչելապէս յարիմեալ խորանս և գեղեցկապէս կազմեալս, և ամդ ի ներքսագոյն խորանին զսրբոյմ Քանգիստմ առնել...»:

Ինքնին Քասկանալի է, «տաճար փառաց»-ը երեք ամսում կառուցելիք չէ, ուստի կա՛մ պիտի սրբագրել ըստ ընդարձակ տարբերակի՝ «յետ երից ամաց անցելոց».

¹ Կորյուժ, Վարդ Մաշտոցի: Բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանուածայր, առաջաբանով և ծանոթագրութիւններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի: Երևան, 1941, էջ 92 (զլ. ԻԶ): Վերջին Քրատ. տն՛ս Կորյուժ, Վարդ Ս. Մեսրոպ Մաշտոցի: Աշխատութեամբ՝ ձեռագրազետ Արտաշես Մաթևոսյանի: Երևան, 1994, էջ 104-105: Այս Քրատարակութեամ մեջ մեզ Քեռագըրդդ դրվալմ ստացել է ԻԼ: Քամարը:

² Ամդ:

³ Նոյմ տեղում:

⁴ Կորյուժ, Վարդ Ս. Մեսրոպ Մաշտոցի, էջ 125:

կա՛մ «տաճար»-ի փոխարեն «խորան»-ը նախընտրել՝ սուրբգրական «վրան» (տաղաար) նշանակությամբ: Բնագրագիտական-տեքստիմաքսմական քննությունն ավելորդ է, որովհետև խոսքը վերաբերում է մինչև Առաքել Դավրիժեցու օրերը պահպանված և Փիլիպոս Կաթողիկոսի (1633-1655) հոգածությամբ մորոգված կառույցին: Ահա Առաքել Դավրիժեցու նկարագրությունը. «Այլ և զհոյակապ և զլայնամհիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Աստուծոյ, զհամգատարան մեծի վարդապետին սրբոյն Մեսրոպայ այնորիկ, որ եզիտ զգիրս Հայոց, որպէս և բանք պատմութեամ մորա ճառեն, թէ տարեայ հաճոցին զնա ի գիւղն, որ անուանի Օշական. արդ այս տաճար համգատարանի սրբոյն Մեսրոպայ վարդապետին ի վաղ ժամանակաց քովանդակ տանիքն փլուզեալ իջեալ էր, և միայն աւագ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթողիկոսութեան իւրոյ սուրբ հայրապետն Փիլիպպոս սկսաւ զայն ևս մորոգել, որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատութեամբ, խրատեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զքովանդակն ի թուականս մերոյ ՌԴԴ, ի փառս Աստուծոյ»⁵:

Լրացուցիչ տեղեկությունների բացակայությամ պատճառով չենք կարող ասել, թե իր հիմնարկությամ օրից մինչև 1645 թ. այս մորոգումը Ամատուճու կառուցած տաճարը (կամ խորանը) ինչ փոփոխություններ է կրել կամ արդյո՞ք ունեցել է Փիլիպոս Կաթողիկոսի մորոգությամբ նախորդած վերականգնման մեկ այլ շրջան: Կարող ենք վստահ լինել սակայն, թե այն հեղինակավոր կենտրոն էր իր գոյության ողջ ընթացքում: 607 թ. Դվինի ժողովի մասնակիցների թվում է Օշականի վանահայր Խոսրովը⁶: Եկեղեցին կանգուն էր և իբրև աղոթարան լիարժեք գործում էր մահ XIII դարում: Այս եզրակացությունը հենվում է կառույցի տարբեր մասերում, մանավանդ մերքուստ, մինչև անցյալ դարի 40-ական թվականները պահպանված և Հովհ. Օսթյաթունյանցի վերծանությամբ հրատարակված հիմք արձանագրության գոյության փաստով, որոնցից չորսը փորագրված են 1285-1295 թվականների միջոցին⁷: Ցավոք, 1875-1879 թվականների արձանական վերամորոգումների ընթացքում պահանջվելիք զգուշավորություն չի ցուցաբերվել, և եղած արձանագրությունները մնացել են ծեփի տակ կամ մույմիսկ՝ ոչնչացել:

Նշված հիմք արձանագրություններից այստեղ մեզ զբաղեցնողը «ի հիսիսային հիման կամարին սեղանոյ յարևմտեան ճակատո» գտնվող ու 1286 թ. գրվածն է: Ահա մրա տեքստն ըստ Հ. Օսթյաթունյանցի վերծանության. «ի թուին եօթմ հարիւր երեսուն և հնգին (1286) ողորմութեամբն Աստուծոյ և հրամանաւ պարոն Սահմարինին (կադդա՛ Սահմադինին), ես՝ Ստեփաննոս ձեռնաւորս և վաճարաւ քեթաբարս... թողաք զՅօշականո քահանայից զինչ, որ հարկ կայր այգւոյ, բամբակի... և ժամհարին՝ յիշատակ Հոգոց մերոց և ամուսնաց: Եւ սոքա խոստացան

⁵ Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց: Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանյարյանի: Երևան, 1990, էջ 284-285:

⁶ Տե՛ս Ուկաումն Եպիսկոպոս, Պատմություն Հայոց: Վաղարշապատ, 1871, էջ 64:

⁷ Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հիմք գաւառացն Արարատայ: Աշխատասիրութեամբ Յովհաննո Եպիսկոպոսի Օսթյաթունյանց Օսթիարցոյ՝ միաբանի սրբոյ Էջմիածնի: Հատ. Բ, Էջմիածին, 1842, էջ 76-81 (§ 398):

ի տարւոյն Կ. ժամ Խառնո ծննդեանն, Բ. Ստեփաննոսա, Ա. Վահրամայ: Ով որ ժամանակաց խափանել չամայ, ՅԺԸ՝ հայրապետացն նշոված է և մեր մեղացն պարտաւորն է»⁸:

Պարոն Ասմմադիմը, որի հրամանն են կատարում ձեռնավոր Ստեփաննոսն ու րեթորար Վահրամը, վիմապիր ու պատմողական թաղում աղբյուրներից քաջ հալտոնի XIII դարի երկրորդ կեսի զործիչ է, մոնղոլ խաների հովանավորությունը շահած Անիի նրք տիրակալներից մեկը, որը 1261 թ. գնաց Մրենը⁹, 1264-ին՝ Երեւանը¹⁰, Անիի ուշ՝ (Նշականն ու այլ բնակավայրեր Այրարատում, Օիրակում, Քաչերերումիւնքում և այլուր: Նորօրյա այս մեծատունը սեփական հողերովածքով պալատ ու պարտնէ է շինել, 10 տարում առ այդ ծախսելով 40.000 դուկատ: Մրենի մեկ այլ՝ 1274 թ. արձանագրությունից տեղեկանում ենք, որ Ասմմադիմը նույն Մրենում ու (Նշականում գտնվող՝ Արքոտոնի վանքին պատկանող այգիները ազատել է Նշականում գտնվող՝ հարկերից (այսինքն հարկէ»)՝¹¹: Ինչպես երևում է, խալայից ու լրացուցիչ հարկերից (այսինքն հարկէ») որ հարկ կայր: Ի դեպ, Նշականի եկեղեցականների շարունակել են վճարել հարկերը և միայն 1286-ին ազատվել այլու, քամրակի ընդիր հարկերից (գին) որ հարկ կայր: Ի դեպ, Նշականի եկեղեցու մյուս երեք արձանագրությունների մեջ են խոսքը հարկերի թրեւացման մասին է: 1288-ին Ասմմադիմը թողել է «գնոշականո գհացի և գղարմանի գշարիատն՝ գլերի և գներքի գամ: Բանդի»¹², ապա նաև պարոնի համաձայնությամբ ամիրա Կենշարդն ու Հավիկ ձեռնավորը գիշել են Նշականի ու Մրենի այգիներից ձեռնավորի օգտին գանձվող հարկը՝ «գին» որ կայր»¹³: Մի քանի տարի անց, 1295-ին, Ասմմադիմի թոռ, պարոն Ամիրբեկի որդի Բեսութան (Նշականն ազատում է (սյուղն ու վանորայք միածամանակ) «դեսարայ» կոչվող հարկից:

Տակափին ճշգրտելիք է, թե այս հարկը ինչ է իրենից ներկայացնում, բնածնեքն՝ վ է գանձվում, թե՛ փոխարժեքով և ի՞նչ հարաբերությամբ¹⁴, բայց հարկերի այս շարունակական թրեւացումը ամենևին քարեկեցությանն ան չի պայմանավորում: Միշտ հակառակը. այդ նշանակում է, թե մոնղոլ Հուլադու (1256-1265), Արադա (1265-1282), Թեգուդար (1282-1284), Արդուն (1284-1291) և Քեյխուտա (1291-1295) իշխանների օրոք տնտեսական ճգնաժամը գնալով խորացել է (հայ-վրացական զորքերը անընդմեջ պատերազմական գործողությունների էին մասնակցում, աշխարհագիրների արդյունքում հարկերը ծանրացել էին, ցանքատարածությունները կրճատվել և այլն)¹⁵:

⁸ Նույն տեղում, էջ 79:

⁹ И. Орбели, *Надписи Мрека*, «Հայագիտական հետազոտություններ», Ա. Երևան, 1974, էջ 41-42:

¹⁰ Կարո Վաֆադարյան, Երևան. միջնադարյան հուշարձաններ: Երևան, 1975, էջ 132:

¹¹ И. Орбели, *Ձվ. աշխ.*, էջ 39:

¹² Ստորագրություն Կարողիկ էջմիածնի... էջ 78:

¹³ Նույն տեղում, էջ 79:

¹⁴ Հմմտ. Հակոբ Մանանդյան, Երկեր, Գ: Երևան, 1977, էջ 295:

¹⁵ Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, Բ. III: Երևան, 1976, էջ 620-664, Նաև՝ Իվ. Զավաթիշվիլի.

Երկեր տասներկու հատորով, Բ. III: Թբիլիսի, 1982, էջ 96-116: վրացերեն:

Օշականի արձանագրություններում Ռիշատակվող վարչական տերմինները հայտնի են այլ աղբյուրներից ևս (ամիրայ, ձեռնատր...) և մասնագետների կողմից հանգամանորեն քննարկված են (Ն. Մառ, Գ. Հովսեփյան, Հ. Մանանդյան, Լ. Խաչիկյան, Ս. Հակոբյան, Բ. Առաքելյան, Ս. Ավագյան)¹⁶: Վկայված են նաև այդ պաշտոնյաների օգտին զանազան հարկերը՝ ամիրախակ, ձեռնավորախակ: Սակայն այդ նույնը ասել չենք կարող «Քեթոբարի» վերաբերմամբ, որ գիտությանը հայտնի է միայն Օշականի 1286 թվականի արձանագրությամբ: Հր. Աճառյանի տված ստուգաբանությամբ այն պարսկերեն *Kutaval*-բերդապահ քառն է¹⁷, որի հետ համաձայն է Ստ. Մալխասյանը¹⁸, մինչդեռ Հ. Մանանդյանը այդ ստուգաբանությունը քիչ հավանական է համարում և առաջարկում է այն թխեցնել արաբերեն «քաթիբ» (գրագիր, քարտուղար) տերմինից¹⁹: Լ. Խաչիկյանը վկայակոչում է Հ. Մանանդյանի մեկնաբանությունը և համաձայնվում նրա հետ²⁰:

Մեր համոզմամբ՝ առկա ստուգաբանություն-բացատրությունները բավարար չափով հիմնավորված չեն:

1) Օշականում XIII դարում գործող բերդ-ամրոց չկար, ուստի և բերդապահի մասին խոսք չպետք է լինի: Եթե անգամ բերդ և բերդապահ լիներ, նա առնչություն չպիտի ունենար եկեղեցու սպանավորների հետ, որ նրանց ազատորեն հարկերից: Ուրեմն՝ *Kutaval*-ից թխեցնելը արդարացված չէ:

2) Հարկացուցակներ կազմող մոնղոլական գրագիր-քարտուղարները, կիրակոս Գանձակեցու և Գրիգոր Ակնեցու (Մաղաքիա արեղայի) վստահելի հաղորդմամբ, ոչ թե քեթոբար, այլ «թիթիկչի» էին կոչվում²¹: Դիվանական և տեղական գրագիրներից տարբերակելու և վերջիններիս «քեթոբար» կոչելու Հ. Մանանդյանի վարկածը հիմնավորված չէ: Ընդ սմին, դարի ու դիվանադարի համար հայկական աղբյուրները գիտեն նաև «ծիկնաւպար, resp. ծիգմոբար» տերմինը²²:

3) Վիժնագիր ու վավերագիր բազմաթիվ աղբյուրներում, ուր այս կամ այն բնակավայրի կապակցությամբ խոսվում է ձեռնավորների մասին, իբրև կանոն

¹⁶ Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, ЗВО, т. III. СПб, 1903, стр. 83; նույնի՝ Ани, Книжная история города и раскопки на месте городища. Л.-д.-М., 1934, стр. 42. Գ. Հովսեփյան, Ձագավանքի ժողովը, «Օռդակաթ»: Էջմիածին, 1913, էջ 34-35, Հակոբ Մանանդյան, Ձշվ. աշխ., էջ 283-323: Լ. Խաչիկյան, XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, թիվ 1, էջ 111-112: Ս. Խ. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Խ. I: Երևան, 1957, էջ 415-418: Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում X-XIII դդ., Թրատ. 2: Երևան, 1964, էջ 130-131: Ս. Ավագյան, Վիժնական արձանագրությունների քառաքնություն: Երևան, 1978, էջ 163-164:

¹⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական քառարան, IV: Երևան, 1979, էջ 568:

¹⁸ Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական քառարան, IV: Երևան, 1945, էջ 568:

¹⁹ Հակոբ Մանանդյան, Ձշվ. աշխ., էջ 262, ծան. 5:

²⁰ Լ. Խաչիկյան, Ձշվ. աշխ., էջ 112:

²¹ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն: Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի: Երևան, 1961, էջ 275, Մաղաքիա Արեղայ, Պատմություն ազգին ձեռնողաց: ՍՊԲ., 1870, էջ 45:

²² Ստ. Օրբելյան, Պատմություն մահաճգին Սիսական: Թիֆլիս, 1910, էջ 354:

Որո՞նց հետ թիշաանկվում են զեղջավազները, որո՞նց իմացությամբ կամ համաձայնությամբ է տեղի ունենում տեղի քնակչության հարկային բեռի թեթևացում-ծանրացումը: Այդ պաշտոնյան (զեղջավազը) աղբյուրներում հիշատակվում է մի քանի անվանումներով՝ տամուտեր, դեմաթար, առաջմորդ, հիշատակվում է մի քանի անվանումներով՝ տամուտեր, դեմաթար, առաջմորդ, ձևավորողի հետ միասին լիաժամդիմի հրամանը կատարող վաճառական քնակչության տամուտերը, ավազի պիտի լիմի: Եվ հիրավի՝ «քեթ»-ը պարսկերեն տերմին է և «տում», «լուդ» է Օջանակում, առկա է հայագիտությանը ծանոթ պարսկերեն «քնեխուդա» (զեղջավազ) տերմինի կազմում: Այն հանգում է պահպանված «քատակ» բառին, որից մեր պարսկերենում ունենք «քադե»-տում, բնակարան, բնակատեղի²³:

«Բեթորար» կազմությամբ կատարելապես «ծիզմորարի» մեմանկն է. «ծիզմի» (զիր) + որա (-ություն) + ար = գրագիր, քարտուղար. քեթ (զլուդ) + որա + ար = զեղջավազ, տամուտեր²⁵:

Այսպիսով, «քեթորար» վարչական տերմինը կազմվել ու գործածվել է վրաց թագավորության ջրջանակում վրացերեն լեզվի մորմերով և արձանագրվել Օջանակի 1286 թ. վիճագրում: Այն լրացնում է հայկական աղբյուրներում գործածված վրացական տերմինների շարքը՝ «Մեղումա» (Ջանաքեռ)²⁶, «Բալախաբակ» (Գառմի)²⁷, «Միզմորար» և «Բեթորար»:

²³ Ա. Գ. Ռաբխուդարյան, Սոցիալ-տնտեսական քաղաքականության արձանագրություններ և դիտողություններ, «Էջնի հայ ժողովրդի պատմության և բանասիրության»: Երևան, 1971, էջ 73-78, Ա. Ա. Ավագյան, Ոջվ. աշխ., էջ 163-164, Լ. Խաչիկյան, Ոջվ. աշխ., էջ 112-115:

²⁴ Գ. Բ. Մոհամմեդ Մոհամմ. Պարսկերեն բառարան, մասն III: Թեհրան, 1985, էջ 4919-4921 (պարսկերեն):

²⁵ -ար վերջածանցի մասին տե՛ս. А. Шанидзе, Два ажно-мегрельских суффикса в грузинском и армянском языках. Сб. «Հնդեվեր» - Վրաց լեզվի կառուցվածքի և պատմության հարցեր» վրացերեն գրքում: Թբիլիսի, 1957, էջ 20-24: Պարսկերեն ճեղ (տում, զլուդ) բառի և ծրանով կազմված բառարարությունների մասին (մեթաթյալ հոմարեմի կոմպանի) տե՛ս Н. Марр, Физическое, СПб., 1904, стр. 76; հմտ. В. Н. Бенетевич, Три античные надписи XI века, СПб., 1921, стр. 27-28:

²⁶ П. М. Мурадян, Грузинский административный термин «мегуна» в армянской надписи из Канакера. (Материалы первого международного картологического симпозиума), Тбилиси, 1988, стр. 167-174:

²⁷ Б. Н. Аракелян, Гарни, II, Ереван, 1951, стр. 84; հմտ. հատ. III. Երևան, 1962, էջ 45:

ԽԱՂԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ

ԿՈՄԻՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Ծննդյան 130 և մահվան 65-ամյակի առթիվ)

*«Սողոմոն, նախախնամության ընծան եղա՝ Սուրբ
Էջմիածնին: Կոմիտաս Վարդապետ Սուրբ Էջմիածնի
ընծան հանդիսացա՝ հայ ժողովուրդին»:*

(Ամենայն Հայոց Կաթողիկոս
Վազգեն Առաքիմի կոմեդակից)

Հայ ժողովրդի ու մեր մշակույթի պատմության մեջ Կոմիտասն իր կայուն ու մշտական տեղն ունի իբրև ազգային երաժշտական արվեստի չգերազանցված գիտակ, բնատուր ու բազմաշնորհ երաժիշտ, մեծատաղանդ կոմպոզիտոր, խոհուն ու պրպտող գիտնական, հրաշալի հրապարակախոս ու ճարտասան, էությանը ու ծնունդով՝ մանկավարժ, տաղանդավոր բանահավաք ու ազգագրագետ, ցան բանաստեղծ:

Ու Կոմիտասը եղավ հայ երգի առաջյալն ու այդ երգի հովիվը. շրջեց հայրենի գյուղերը, մտավ «մթնում կորած խրճիթները», տեսավ այդ խրճիթների անհրապույր սև պատերը, լսեց ու զրի առավ հազարամյա ու հազարավոր գոհարները: Կոմիտասի համճարը թափանցեց շինականի երգերի անհատում խորքերը, ընկալելով մրանց ոգին ու շունչը՝ առավել իմաստավորեց դրանք, զտեց ու մաքրեց, ոսկեզօծեց ու բյուրեղացրեց և «իբրև տաղ երկնարժան» մորից շինականի վերադարձեց:

«Յնաղ կանչող մեծ վարդապետը» (այդպես էին մեր կանչում շինականցիները) իր աստվածաշնորհ տաղանդով Ալազանի ու Արարատի բարձունքների վրա, Լոռու սարերի ու Սիփանի ձյունապատ գագաթների վրա կյանք առած երգերը հավաքեց և, դաշնակելով, մրանց տվեց դասական երաժշտության վայելչություն:

ԾՆՈՒՆԴ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հազար ութ հարյուր վաթսուցիցն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին...

Այս մույն թվականի սեպտեմբերի 26-ին երգի ու երաժշտության մեծ սիրահար, զվարճախոս ու կատակարան, հետազոտ Ս.Ճատոյուի Փյոթաբիա (Կուտիմա) գեղաշուս սաղաքի Ս. Թադևոս եկեղեցու երգիչ դասի ծայնեղ կոշկակար Դեորզ Սողոմոնյանի նորաստեղծ ըմտացիրում ծնվեց անշրտաճիկ և միակ զավակը, որին երեսօտ հետո մկրտեցին մույն եկեղեցում առաքելական ծեսով և ամուր Սողոմոն կոչեցին: Կոթաբայրը հորեղբայրն էր՝ մույն եկեղեցու երգիչ, դպիր Հարություն Սողոմոնյանը, իսկ մկրտող քահանան՝ Տեր Դավաթոսը:

Սողոմոնի մայրը՝ Գրեկազմ ու զեղեցիկ Թադևոսին, հրաշալի ծայնով ու ճազելի պարով, 17-ամյա զորգագործ էր. նա դեռ չէր հասցրել մանկան հիշն ու քաղցրությունը վախկել:

Բարեսիրտ ու որդենար Դեորզն իր որդու համար նաև մայրություն արեց. երեսօտի հիմնական խմամբը մնաց հայրական տատի՝ անչափ բարի ու հոգատար Լարիամի վրա, որի մասին հետագայում Կոմիտասը զրույն է. «Ինչի էլ հեծ համար երկրորդ մայր, իմ ապագայի համար լուրջ հոգ տանող»:

Կոմիտասի մայրն ընտրվել են Լևոն Հայրի Վասպուրական աշխարհի Գողթան գավառից, որի այգեկործ, երկրագործ, շերամապահ, արհեստագործ ու անասնապահ հայրերը, Լուսինա խորենացու վկայությամբ, եղել են նաև երգասեր ու երգաստեղծ: Հեթանոս պապերի այս շնորհքը ժողովել են նաև Կոմիտասի ծնողները, Գրեկազմ էլ՝ իրենց որդին:

Երբ թողնում է մանկան յոթ տարին, ուսման արժեքը քարծր գնահատող հայրը Սողոմոնին սովորելու է տալիս իրենց քաղաքի ազգային շրտստան մարտարանում:

Դպրոցը բարձր գնահատականներով ավարտած Սողոմոնը հորը դնում է հոգսերի տակ. ի՞նչ անել... իր նման կոշկակար դարձնել, տղան մեղք էր՝ սովորել էր ուզում: Իրենց քաղաքում ավելի քարծր վարժարան չկար, ինքն էլ միջոցներ չուներ, որ որդուն Պոլիս ուղարկեր: Հայրը ըմտում է աներոջ զուղի՝ Բուրսայի տարբերակը, որը և՛ մոտ էր, և՛ տղան ապրելու տեղ կունենար: Եվ հայր ու որդի ուղևորվում են այդ փոքրիկ, կիսով չափ հայաբնակ քաղաք: Հայրը տղային թողնում է աներոջ տանը և խոստանում հաճախակի այցի գալ. ի՞նչ իմանար խեղճ հայրը, որ խոստումը չպետք է կարողանար կատարել:

Դժվար օրեր են սկսվում որբուկի համար. նա սկսում է թափառել տնից տուն, թաղից թաղ, շփի է փչում, երգում, պարում՝ իր հիվանդ հորաքրոջ համար մի կտոր հաց վաստակելու համար: «Հողքան ու արտասվախառն մանչուկին»՝ փողոցների թափառական փոքրիկ երգչին» (այդպես էին նրան կոչում Բյոթաբիայի շատ բնակիչներ), հաճախ էին տեսնում հարուստների պատերի տակ կույն եկած, քաղցր հագնելու համար ունեցողների՝ շների, կատուների ու հավերի համար դուրս թափած ուտելիքների մնացորդները քուլուք անելիս: «Ինչ չի պատահել, որ ծանոթները նրան գտել են խանութների դռների ու լվացքատների մի քիչ տաքուկ սալհատակների վրա քնած. արթնացրել ու տուն են ուղարկել»:

Ու Սողոմոնը ճակատագիրը պիտի մնար այսպես անորոշ, ապրած օրերը՝ տխուր ու թափառ, երբ երջանիկ պատահականությունը չիմաստավորեր նրա հետագա կյանքը:

ՈՒ ՃԵՄԱՐԱՆ՝ ՄՏՔԻ ԿԱԺԱՌ

Գևորգ Դ մեծագործ Կաթողիկոսը 1874-ին իր Ռիմնած Հոգևոր ճեմարանում սովորելու համար հատուկ կոմիսիոնով Թուրքիայի և Պարսկաստանի հայաբնակ տարածքներից որք ու կարիքավոր 30 ձայնեղ տղաներ է պահանջում: Բախտը ժպտում է մահ Ս. Թադևոս եկեղեցու 20 տղաներից ամենաքաղցր ու հնչեղ ձայն ունեցող Սողոմոնին:

Գևորգ Դ Կաթողիկոսի առաջ կանգնած է տասներկուամյա գունատ պատանի՝ ծղոտի պես բարալիկ, թռչունի պես երկչոտ՝ տաճկական կարմիր հալավով, պոչավոր մաշված սուերով: Վեհափառի հարցերին մանչուկը չպատասխանեց՝ հայերեն չգիտեր: Ու Կաթողիկոսի՝ տաճկերեն տված այն հարցին, թե որ հայերեն չգիտե, էլ ո՞ւր է եկել, մա, զգալով Վեհի բարի հայացքը, մի կերպ պատասխանում է.

- Զգիտեմ, դրա համար էլ ինձ բերել են, որ հայերեն սովորեմ:

Տղայի տրամաբանված պատասխանը դուր է գալիս Կաթողիկոսին, ու մրա այն հարցին, թե տղան երգել գիտե՞.

Եվ տղան սկսեց... թուրքերեն երգել...

Բառերը եղուկ... Ձայնը՝ զուլալ...

Իսկ երբ թուրքերեն երգին հաջորդում է «Հույս զվարթը» և ևս երկու շարական, ու երբ Վեհարանը լցվեց մանկական զրնգում ձայնի մաքուր ու ջինջ դալլալներով, Վեհափառի աչքերից արցունքներ զլորվեցին, և մա կարգադրեց տղային ճեմարան ընդունել՝ իբրև եզակի մի բացառություն:

Տարբեր երկրներից ու գավառներից ճեմարանում սովորելու եկած տղաներն իրենց հետ բերում էին ճակատագրի բերումով աշխարհով մեկ ցիրուցան եղած հայերի ավանդույթներն ու սովորությունները, երգերն ու պարերը, իրենց պապեմական ֆոլկլորը: Նա խմորում էր ընկերներից իրենց իմացած երգերն ու պարեղանակները, մահ ֆոլկլորը գրի առնել ու համձնել իրեն: Ամռանը արձակուրդ գնացող իր դասընկերներից պարտադրում էր վերադառնալ տեղական երգերը գրի առած: Մ. Արեղյանի պատմելով, մրա հավաքած և սեփական ձեռքերով գրի առած երգերի ու պարեղանակների տարբերակների թիվը անցել էր 25 հազարից: Այդ տարիներից էր, որ Սողոմոնը «Լո-լո-լո» մեղեդու և Մ. Արեղյանի գրած տեքստով ստեղծում է հրաշալի «Միփանա քաշեր» երգը, որը դառնում է ճեմարանի ուսանողության քայլերգը, տարածվում մահ Օուշիում և անցնում Եվրոպա:

1890 թ. Ռուսիսից Սողոմոնը ձեռնադրվում է սարկավագ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

Կոմիտաս վարդապետի անձնական նկարագրի ու բնավորության գծերի մասին պատմել ու հուշեր են գրել իր ուսանողական ու աշխատանքային ընկերներից շա-

1894 թ. սեպտեմբերի 11-ին ավագ սարկավագ Սողոմոն Սողոմոնյանը ձեռնադրվում է արեղա և ամվանակոչվում 7-րդ դարի ճշանավոր Կաթողիկոսի՝ ամվանի զիտնականի, երգահանի ու հրաշալի երգիչ ԿՈՄԻՏԱՍԻ անունով:



ԿՈՄԻՏԱՍ՝ ՎԱՐՆԱԳԵՏ

1895 թ. փետրվարի 26-ին Կաթողիկոս Մկրտիչ Նրիմյանի հատուկ հրամանով Ս. Աստվածածին եկեղեցում Կոմիտասին շնորհվում է վարդապետական աստիճան և զավագան:

ԱՐԽԱՋԻՆ ԱՅՑԸ ԹԻՖԼԻՍ

Ամբողջ էությունը, հոգով ու սրտով և բոլորյալ մախախմամբությամբ երաժիշտ ձնված Կոմիտասը չէր կարող ռավարարվել Լեւոնիաձեւում ստացած երաժշտական գիտելիքներով. մա ձգտում էր հասնել երաժշտական արվեստի բարձունքներին: Այդ ճպտակով մա խորհրդակցում է իր սիրելի Վեհափառի հետ: Վեհր խրախուսում է մրա ձգտումները և խորհուրդ տալիս մախ մեկնել Թիֆլիս, մի որոշ ժամանակ սովորել Պետերբուրգի կոնսերվատորիա մավարտած Լեւոնիաձեւի մոտ, մինչև իմքը կրանակցի ազգային մեծ բարերար Ալեքսանդր Լեւոնյանցի հետ՝ Բեռլինում սովորելու մյուրական միջոցներ ստամալու համար:

Եւ 1895 թ. հոկտեմբերին, երաժշտական կրթության մեջ խորանալու մպատակով, Կոմիտասը մեկնում է Թիֆլիս: Ճոր ամիս մա աշակերտում է Եկմալյանին՝ ըմբռնմանով մրա բոլոր գիտելիքները: Եկմալյանը զարմանում է իր սամի արտասովոր ընդունակությունների և երաժշտական խորիմացության վրա: Ուսուցիչը համոզվում է, որ իր սամին այլես տալու բան չունի, որ Կոմիտասի մամ երաժշտին պետք է դասավանդես մվելի մեծ ու հմուտ երաժիշտներ, որ մրա տեղը միայն Բեռլինում է՝ իր մշամավոր կոնսերվատորիայով ու հռչակավոր երաժիշտներով:

Վերադառնալով Լեւոնիաձեւ, խրիմյան Հայրիկից տեղեկանում է, որ ազգային մեծ բարերար Լեւոնյանցի համաձայնել է իր միջոցներով Կոմիտաս վարդապետին երեք տարով Բեռլին ուղարկել՝ երաժշտական բարձրագույն կրթություն ստամալու:

ԲԵՐԼԻՆ. 1896. ՀՈՒՆԻՍ. ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅՈՒՆ

Իր հանձնարարկաններով 27-ամյա Կոմիտասը ներկայանում է Արքայական կոնսերվատորիայի ռեկտոր, աշխարհահռչակ շուրակահար ու կոմպոզիտոր Յոզեֆ Լեոպոլդին: Անվամի երաժիշտը զերմամացու սառնությամբ ջննում է պայծառ աչքերով իրեն մայող և պատասխաններով հավատ ներշնչող, ձայնային արտակարգ հնարավորություններ, մրանուր լսողություն և երաժշտական փայլում ընդունակություններ ունեցող ասիացի երիտասարդին և մրան գրանցում կոնսերվատորիայի առաջին կուրսեցիների ցուցակում վեց տարվա ուսումնառությամբ: Հանի որ Կոմիտասը միայն երեք տարվա ուսման վարձի և Բեռլինում ապրելու ծախքերի հնարավորությամբ էր եկել, ռեկտորը մրան խորհուրդ է տալիս խորացված ծագրով ուսանել և միամամանակ սովորել հայտնի երաժիշտ-մանկավարժ պրոֆեսոր Ռիխարդ Օմիդտի մասնավոր երաժշտացում համատեղ սովորելով մա եկեղեցական երաժշտության ճեմարանում իրրա ազատ ունկնդիր:

«Ուսուցիչս փորձեց ձայնս և որոշեց, որ ես բարիտոն եմ, որ ամբողջովին ամփոփում է բարձր տեմորի ու ստորին բարիտոնի ամբողջ տարածությունը»,- գրում է Կոմիտասը ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին: Լիամամանակ Օմիդտը հայտնում է, որ «Կոմիտասի ձայնի մեջ ձուլված է համագումարը թե՛ տեմորի ճկունության և թե՛ բարիտոնի փափկությամբ»:

ԿՈՄԻՏԵԱՍԻ ԴԵԲՅՈՒՏՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

1899 թ. մայիսի 10-ին, երեկոյան ժամը 8-իմ կայացած Միջազգային երաժշտության ընկերության երկրորդ նիստում, որին մասնակցում էին աշխարհահռչակ երաժիշտներ, «Հայոց եկեղեցական և աշխարհիկ երաժշտությունը» թեմայով զեկուցում է կարողում մաս ընկերության անդամ Կոմիտաս վարդապետը: Բեռլինյան երեք բեղում տարիների հախտոմ ու թովոնդակալից կյանքը, երաժշտության տեսության ու կատարողական արվեստի մեջ խորացած, գերմաներենին հմտորեն տիրապետող և հոնտորական արվեստի ամուրամալի ձիրք ունեցող երեսնամյա փորձված երաժիշտի ու բանախոսի համար դժվար չէր Գիտածողովի հարյուրավոր երաժիշտներով համոզել և իր զեկուցման մյուսը քառաձայն երգչախմբի հմուտ կատարումներով ապացուցել, որ հայն ունի իր սեփական երաժշտությունը, որ մրա ունեցածը աստորաթյուզանդական կամ հնդկապարսկական խառնուրդ չէ, ինչպես կարծում էին օտար (և ոչ միայն օտար) երաժիշտներն ու հոգևորականները: Կոմիտասի զեկուցումը հաճախ ընդմիջվում էր կատարվող երգերով. ըստ որում կատարվում են մասն քրդական, պարսկական և տաճկական երգեր, որոնցով Կոմիտասը ցույց է տալիս դրանց և հայկական երգերի միջև եղած տարբերությունները: Այս զեկուցում-համերգով Կոմիտասն ընդգծեց հատկապես այն միտքը, թե «հայկական երաժշտությունն այնքան ինքնուրույն ու հարազատ է իր ժողովրդին, որչափ մրա՝ դարերի խորքից եկած լեզուն ու գրականությունը, որովհետև յուրաքանչյուր ազգի երաժշտությունն տվյալ ազգի հնչյունական ելևէջներից է սնվում»:

Դասախոսություն-համերգին ներկա եղած Բեռլինի Օպերային թատրոնի տնօրենը, հիացած Կոմիտասի ձայնով, մրան առաջարկում է մեծ հոնորարով աշխատել իր Օպերային թատրոնում որպես մենակատար: Բայց հայրենասեր երաժիշտը շնորհակալություն է հայտնում հրավերքի համար և ասում, որ ինքը պարտք ունի կատարելու իր ժողովրդի հանդեպ, պետք է վերադառնա Հոգևոր ճեմարան և իր մեծան երաժիշտներ պատրաստի: Այս մասին Կոմիտասը պատմել է իր մտերիմ ընկեր Հրաչյա Աճառյանին:

Այս մույն դասախոսություն-համերգներն ունկնդիրների խնդրանքով կրկնվում է հուլիսի 24-ին Բեռլինի Օպերային երաժշտանոցի դահլիճում:

Այս երկու դասախոսություն-համերգների վերաբերյալ ժամանակի զերմանական ու ֆրանսիական մամուլը բազմաթիվ դրվատական ու հիացական հոդվածներ է տպագրում՝ այն համարելով տոնախմբություն, որի մեծան մինչ այդ չէր եղել ոչ Բեռլինում և ոչ էլ Փարիզում:

1899 թ. օգոստոսի 20-ին Կոմիտասը «Բրդական երաժշտությունը» դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ ավարտում է համալսարանը և մույն օրը ստանում Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիան ավարտելու վկայական:

ՎԵՐԱԴԱՐՁ. ՀԱՅՐԱՆՈՒՓ

1899-ի սեպտեմբերին Կոմիտասը իր հայրենիքում էր: Նա Բնույիմից դաշմամուր էր ունեւ խրիմյամի եղորո թոռնիկների համար:

Բնմարամում Կոմիտասը ձնոմամուխ է լինում մեծ կտավի ստեղծագործություն-ների: Նա Հ. Պարոմյամի «Բնծապատիվ մուրացկամների» համար նրաժշտություն է գրում և Հրայյա Ամառյամի հետ գործը ընմադրում ճնմարամի ուսանողների մի-ջոռով: ԻՐ. Սոնոյամը խոստացել էր «Սասնա ծռերի» համար լերերետո գրել, Կոմի-տասը սկսել էր աշխատել նրաժշտությամ վրա. միաժամանակ ռեյիտատիվներ (ասերգեր) էր գրում «Կարմիր վարդան» օպերայի համար, լայց ավելի նոանդում աշխատում էր «Անուշ» օպերայի վրա: Այդ մպատակով էլ ճա մեկնում է Թիֆլիս՝ Թումանյամի հետ խորհրդակցելու:

Նա ճնմարամում իր սամերով հատվածներ է կատարում Վերդիի «Աիդա» և Գունոյի «Ֆաուստ» օպերաներից: Համերգը կրկնվում է նրեանում:

ԲՆՈՒԼՆՈՒՆ՝ ՓԱՐԻԶ

1901 թ. հունիսին Կոմիտասը Բնույիմով մեկնում է Փարիզ: Սա ճրա առաջին այցն էր Փարիզ: Փարիզը սառնասիրտ ու մարդու նկատմամբ անտարրեր Բնույիմը չէ. այստեղ կյանքը նոում է գերեկ թե վիշեր, մարդիկ ավելի շերմ են, եոանդում: Պի-ետ Սրբին իր քարեկամիմ ծանոթացնում է իմպրեսիոնիզմի հայտնի ճերկայացուցիչ-ներ Կլոդ Դեբյուսի, Մորիս Ռավելի, Սեմ-Սանսի, իմպես ճակ նույն ուղղությանը պատկանող գեղանկարիչներ Մանեի, Մոնեի, Պիսարոյի և շատ ուրիշների հետ: Այստեղ մեկուկես ամսվա ըմթացքում Մարգարիտ Բարսյանն ու Արշակ Չոպան-յանն իրենց սիրելի ըմկերոշն ու քարեկամիմ մոտիկից ծանոթացնում են Ճվրոպայի այս շքեղ քաղաքի մշակութային կյանքին ու մշակույթի անվանի գործիչների հետ:

ՈՐՏԵՂ ԵՐԳ, ԱՅՆՏԵՂ ԿՈՄԻՏԱՍԸ

Էջմիածնում աշխատելու հիմգ տարիների ըմթացքում Կոմիտասը լինում է Հա-յաստանի գրեթե բոլոր շրջաններում ու գյուղերում, հատկապես եկեղեցական տո-մերին ճա լինում է տարրեր եկեղեցիների քակերում, թաքնվում ծառերի ետևում կամ քարձրանում կտուրները և վաղտնի ձայնագրում ուխտավորների երգերն ու պարեղամակները: Հալ շինականն այնքան էր ըմտելացել իր սիրելի խաղ կանչող վարդապետի ճերկայությանը, որ չէր քաշվում ճրանից և ազատ ու անկաշկանդ կատարում էր ճրա խնդրամը՝ երգել, պարել, գրույցներ ու ավանդություններ պատմել, որպեսզի իմքն այդ բոլորը գրի առներ:

Կոմիտասի երգացանկը մեծապես հարստացրին Հառիճը, Ապարանն ու Գյումրին:

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1905 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճը լեռն-լեռնում էր ոչ միայն տեղի, այլև Ռուսաստանից ու Եվրոպայից Թիֆլիս եկած մտավորականներով: Եկել էին դեռ երկու ամիս առաջ հայտարարված Կոմիտասի՝ 60 հոգանոց երգչախմբի համերգը լսելու: Այն ցնցող տպավորություն է թողնում ունկնդիրների վրա: Համերգը կրկնվում է ապրիլի 3-ին: Համերգից հետո Կոմիտասն ու իր սիրելի մեներգիչ Վահան Տեր-Առաքելյանը հյուրընկալվում են Թումանյանի բազմահարկ ընտանիքում: «Մեր «Վերամտումը» շատ հյուրեր է ընդունել ու ճանապարհել, բայց Կոմիտասը ոչ թե մեր հյուրն է, այլ մեր աչքի լույսը, այսօր մա մեզ հրայրք պարզենք», - ասում է Հ. Թումանյանը:

Հաջորդ օրը Կոմիտասը հայկական երաժշտության մասին Հոփմանյան վարժարանի դահլիճում դասախոսություն է կարդում, որը զուգակցվում է համերգով:

ՈՒ ԽԵՆԹԱՑԱԾ ԾԱՓ ՏՎԵՑ ՓԱՐԻՋԸ

Կոմիտասը վաղուց էր հրավեր ստացել մասնակցելու փարիզյան Հայկական երգի նվագախմբին, որը կազմակերպել էր Արշակ Չոպանյանը: 1906 թ. Կոմիտասն իր երգերը տպագրել տալու համար մեկնում է Բեռլին, այստեղից էլ՝ Փարիզ: Այստեղ մա Ա. Չոպանյանի և Մ. Բաբայանի միջոցով հայ և օտարազգի ուսանողներից ըստաճայն մի հրաշալի երգչախումբ է պատրաստում, որին մասնակցում էին մաև օպերային երգիչներ, կոմպոզիտորիայի ուսանողներ և մեներգիչներ Արմենակ Ծախմուրադյանը, Մուղունյանը և Մ. Բաբայանը: Վերջինս նույնպես հրաշալի երգիչ էր:

1906 թ. դեկտեմբերի 1-ին Սալ Դե գլեգրիկոպոլիտի մեծ սրահում Կոմիտասը փառահեղ շքեղության մի համերգ է տալիս: «Ամբողջ հասարակությունը կարծես պապանձվել էր, տպավորությունը անպատմելի էր ...», - գրում է Մ. Բաբայանը:

Համերգի վերջում Կլոդ Դեբյուսիմ մոտենում է Կոմիտասին, ծնկի գալիս ու ասում.

- Հայր Կոմիտաս, խոնարհում եմ ցուխս Ձեր երաժշտական հանճարի առաջ:

Ապա դառնալով դահլիճում շուռնները պահած ունկնդիրներին՝ անվերապահորեն հայտարարում է.

- Եթե Կոմիտասը գրեր միայն «Ամտունիմ», այդ էլ թավական էր, որ մա համարվեր աշխարհիս մեծ երաժիշտներից մեկը:

ՀԱՄԵՐԳԱՀԱՆԴԵՍՆԵՐ ԾՎԵՑՑԱՐԻԱՑՈՒՄ

Փարիզում ունեցած արտակարգ հաջողություններից հետո Կոմիտասը մեծ պատրաստակամությամբ է արձագանքում Փարիզից դուրս հայկական համայնքների խնդրանքին և նույն թվականի մայիսի կեսերից մինչև հուլիսի կեսերը համերգ-դասախոսություններով հանդես է գալիս Ժնևում, Ցյուրիխում, Բեռնում, Լոզա-

տարագ մատուցում, համերգներ տալիս և նորահոր երգերով հարստացած՝ ոտք դնում Պոլիս:

ՊՈԼԻՍ

Այս խայտաբղետ քաղաքում վաղուց ի վեր բնակվում էին հարյուր հազարից ավելի հայեր, որտեղ կային 28 հայկական դպրոցներ և 32 եկեղեցիներ: Կոմիտասն էլ ցանկացնում էր կոմսերվատորիա հիմնել: Այդ նպատակով նա հայկական դպրոցներից հավաքագրում է 300 ձայնեղ երկսեռ աշակերտներ և կազմում մի հզոր երգչախումբ՝ «Գուսան» անունով: Եվ հնուտ մանկավարժ ու մեծ երաժիշտ վարդապետի քրտնաջան աշխատանքը տալիս է իր արդյունքը. կարճ ժամանակից հետո Պոլսի հայաբնակ թաղերում թևածում է հայ քաղցրահնչուն երգը:

ԿՈՄԻՏԱՍԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

1911-ի ապրիլի 10-ին Կոմիտաս Հայր Սուրբը Ս. Զատկին՝ Քրիստոսի Հարության տոնի առթիվ Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատարագին էր: Մայր Հայրենիքից այդքան հեռու ապրող հայերին Կոմիտասը փառավորում է իր երգերով: Այնտեղից նա մեկնում է Ալեքսանդրիա, որտեղ 190 հոգանոց երկսեռ քառանյայն երգչախումբ կազմում ու Եգիպտոսի հայերին ցույց տալիս, որ եթե բուրգերը կանգնած են տեղում, և մարդիկ են նրանց այցի գալիս, ապա հայ երգն ինքն է այցի գնում՝ որտեղ հայ կա՝ աշխարհին ցույց տալով իր հմայքը: Արաբական մամուլը չլսված ու չգրված խոսքեր գրեց հայ երգի ու նրա անմահ կատարողի մասին. «Հանձին Կոմիտասի ողջունում ենք այն մեծ առաքյալին, որով կարող է հպարտանալ ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ողջ Արևելքը»,- գրում է «Էլ Վաթան» արաբական թերթը:

ՎԵՐԱԴԱՐՁ ՊՈԼԻՍ

Պոլսում Կոմիտասն ազգօգուտ գործեր շատ էր անում, բայց Պոլիսը հայրենիք չէր, այն խորթ ու օտար էր Հայր Սուրբի համար. նրան կանչում էր մայր հողը, իր ժողովուրդը, իր Սոնա յարմ ու Ծիրանի ծառը, իր Մայր Տաճարն ու Մասիս սարը, մանավանդ որ խազերի լրիվ վերծանման համար դեռ գործ ունեւր անելու Մատենադարանում ու դեռ երգեր ունեւր ծայնագրելու և, վերջապես, շատ էր կարոտել իր սաներին ու ընկերներին:

Եվ հետո, վերջին հաշվով, Պոլիսը Կոմիտաս վարդապետի համար ի՞նչ...

ԵՎ ԿԱ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ...

...ու մտա՞լ լավ չընդունեցի՞մ... Դեռի՞դ Հիմքերորդ Կաթողիկոսի այն հարցին, թե «Ե՛րբ ես եկել, ե՛րբ ես գնում», Կոմիտասը պատասխանում է, թե «Այսօր եկա, վաղը կգնամ»: Խիստ վիրավորված ու իրեն ամչափ վարկարենկված զգալով՝ Կոմիտասը թողնում է իր սիրասուն Լ՛ալո Ցաճարն ու նրկու ամիս շրջում Հայաստանում: Ի.ի-մում է Ապարանում, Դարաքիլիսայում, Ծիրակում, Աշտարակում, Կոտայքում, Իգ-դիրում՝ կարծես իր կարոտն առնելու և վերջին հրաժեշտը տալու և, 100-ից ավելի մոդերնիստական գրի առած, վիրավոր սրտով ու կոտրված հոգով վերադառնում այդ անի-րավ ու մարդակեր Պոլիս...

ՓԱՌԱՏՈՒՆ ՊՈԼՍՈՒՄ

1913-ի հոկտեմբերի 13-ը անմոռաց կմնա Պոլսի ու դրսից եկած օտարականների Ռիշոդոլֆյան մեջ:

Գրեկ տոնահամոհներ մվիրված էր հայ գրերի գյուտի 1500 և հայ գրքի տպագրու-թյան 400-ամյակին: Տոնահամոհներ նախապատրաստել և ղեկավարում էր Կոմիտաս վարդապետը: Իր հոնտորական արվեստով հրաշալի բացման խոսքից հետո, որպես օրվա բանախոսի, ամբիոնը տրամադրում է նախապահական սեղանի կենտրոնում նստած Գաբիել Վարուժանին: Նրան հաջորդում են մյուս բանախոսները, որոնց խոսքն ընդմիջվում է Սիամանթոյի՝ օրվա տոմին մվիրված «Սուրբ Մաշտոց» ըն-դարձակ բանաստեղծությունից հատվածներ կարդալով:

Ներկաների համար շատ անակնկալ էր Թալեաթի բեմ բարձրանալը. ներկաները լավ գիտեին դիվանագետ թուրքերի երկերեսահիությունը... քայքայ մի սուտը գոմե այդ պահին հայոց ուժի վկայությունն էր հաստատում:

Թալեաթից հետո միայն բեմ բարձրացավ ավելի դիվանագետ ու կեղծավոր Ջե-մալ փաշան: «Այն ժողովուրդը, որ իր սեփական տառն ու մշակույթը չունի,- այսպես սկսեց մա իր խոսքը,- չի տարբերվի վայրի ազգերից: Մինչդեռ հայն ահա իր առաջա-դիմական ոգու ամենբերքի ապացույցն է պարզում աշխարհի առաջ: Ժուրաքանչյուր օսմանցու խղճի պարտքն է ցնահատել քաղաքակրթության ասպարեզում հայի գրաված բարձր դիրքը...»:

«Հայ մտավորականությունը ցնծության մեջ էր, որ թուրքական հայաստյաց ոեծիմի տակ, հերոսաբար մաքսառելով, կարողացավ կազմակերպել այսպիսի տոնահամոհնե-մը»,- գրում է Ադալֆի Մեսրոպյանը:

Տոնահամոհների հանդիսավոր մասի դադարից հետո մվագահանդեսի բացման պատիվը տրվում է Կոմիտասի սիրելի սան, Գրանդ օպերայի անգուգական տեմոր Օահմուրադյանին, որը «Գուսան» երգչախմբի հետ հնչեցրեց «Ով մեծասքանչ դու լե-զու» հրաշալի երգը, որի մեղեդին Կոմիտասը գրել էր հատկապես այդ օրվա համար: Հնչում են նաև «Հայաստան», «Կոունկ», «Մուկաց Միրզա», «Կիլիկիա» և այլ երգեր:

Դաճիճի չորս կողմերից սպիտակ աղավաղներ են բաց թողնվում: Բեմը զարդարվում է անհամար ծաղիկներով: Կոմիտասին զրկելու, համբերելու հերթը չէր վերջանում:

ՓԱՐԻՋԸ ՉՇԱՑՐԵՑ ԿՈՄԻՏԱՍԻՆ, ԿՈՄԻՏԱՍՆ ԻՐ ԵՐԳՈՎ ՆՎԱԺԵՑ ՓԱՐԻՋԸ

1914 թ. հունիս: Նորից Միջազգային երաժշտական ընկերության հերթական համագումար: Համագումարին մասնակցում են բոլոր քաղաքակիրթ երկրներից ավելի քան 400 մասնակիցներ: Մերձավոր Արևելքի երկրներից հրավիրված էր միայն Կոմիտասը՝ իր երկու դասախոսություններով: Կոմիտասի երկու զեկուցումներն էլ լսվեցին շատ մեծ հետաքրքրությամբ:

Իր այս հրաշալի դասախոսությունների ու ելույթներում տված համերգի համար Կոմիտասին շնորհվում է Առաջին կարգի մրցանակ: Նորից հռչակվածներ, գովասանքներ, նորամուտ հրավերներ... Բայց վարդապետը տուն էր շտապում:

ԴԱՌԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Եղեռնից մեկ ամիս առաջ «Թյուրք-Օջախի» մեջ երիտթուրքերը մի շքեղ հանդես էին կազմակերպել, որտեղ հրավիրված էր նաև Կոմիտասը՝ փոքրիկ երգչախմբով: Նշանավոր պաշտոնյա Համտուլլահ Սուպեհի բեյը թեմ է հրավիրում Կոմիտասին: Ներկայացնելով նրան՝ բազմաթիվ թուրքերի առաջ ասում է.

«...Եվ հետո, ճշմարտությունը, որքան ալ դառը ըլլա ամ, պետք է խոստովանիլ, որ հայ ազգը դարեր ի վեր մեր մշակութային կյանքին մեջ իր հառաջապահի մասնավոր տեղը ունեցած է. Թուրքիոյ որ կողմն ալ երթաք, Ամատուլուի որ անկյունն ալ ըլլաք, հայ միտքը, հայ ստեղծագործ ձեռքը «հոս եմ» կըսե: Օրինա"կ կուզեք. Պոլսո սուլթանական պալատները մեյ մեկ զլուխգործոցներ են, հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներ են: Դեպի երկինք բարձրացող միմարեր են, ուր ամեն օր մուսուլմանները Ալլա աքսեր կ'աղոթ, շատերը հայ ստեղծագործ ձեռքերու մեջ մեկ կոթողներ են: Զեր սիրելիներու տապանաքարերը, որոնք այնքան նրբությամբ ունեն, նորեն հայ վարպետներու գործեր են: Վաճի մշանավոր գեղաճաշակ արծաթյա տուփերը, որ օտարականներու անգամ հիացում կ'ազդեն» հայ ոսկերչության արտադրություններն են:

Բժշկական համալսարանի հիմնադիրները և գիտական գիրքերու առաջին հեղինակները նորեն հայեր եղած են... թուրք թատրոնը իր գոյությունը հայերուն պարտի...

Այսօր ալ Եվրոպաները հաղթած տաղանդավոր Կոմիտաս-երաժշտագետը ամեն ջանք թափում է Պոլսին մեջ առաջին կոմսերվատորիան հիմնել... Փառք ու պատիվ Կոմիտաս վարդապետին: Ահա այսպես ուշիմ ու ընդունակ ազգի մը հետ միասին կ'ապրինք, որ մինչև հիմա ալ ամեն ազգի մեջ տիրապետող է»:

ԳԱՐՈՒՆ Ա, ՋՈՒՆ Ա ԱՐԵՎ

Եւ ըոյրորովիմ էլ զարմանալի չէ, որ Քայ ազգիմ այդպես զնախտող ու մրա քանքաղը առաջն արժևորող երկերեսամի ու ստոր ազգմ ուղիղ մեկ ամիս Քնտո մախիի ու եղերմ է կազմակերպում մի շինարար ու իմաստում ազգի մկատմամբ:

...Եւ 1915 թ. ապրիլի 24-ի սև ու ողորեզական գիշերը մեկ ու կես միլիոն Քայերի Քամար չունեցալ լուսարաց:

Գիշերվա ուշ ժամ էր, Կոմիտասն աշխատում էր մոմի լույսի տակ: Ներս եմ խու- ժում երկու ոստիկան, տակնուվրա ամում սեմյակը, պատառոտում ու Քատակիմ շպրտում սուրը մասուքները և տանում Կոմիտասին (բարեբախտաբար Թերեմեզ- լանը վամ էր զմացել):

...Կնտրոնական րամտի բակում կոմիտասը Քանդիպեց իր ընկերներին ու քա- րեկամներին:

217 մտավորականների ու Քազարավոր Քայ աքսորյալների մեջ էր ման Կոմի- տաս վարդապետը:

Իսկ այդ ճանապարհը վախճան չուներ... Նրանց ըշում էին երկու տարբեր ուղղու- թյուններ՝ դեպի Այաշի ու Հանդըրի աքսորավայրերը: Անվերջանալի օրերով ու գի- շերներով ըշում էին սովաՔար ու տանջալույ անմեղ ժողովրդին, ըշում էին խզա- կոթների Քարվածների ու բարկ արևի տակ: Ու... ձգվում է Քոզնատանց քարավանը...

Գիշերային Քոզնարեկ ոտմաձայները խլացնում էր միայն Կոմիտասի լալագին ու դառնաշունչ -Տէր, ողորմեա--ն.

Ամենասուրը եՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ, տուր աշխարհիս խաղաղություն...

Հրացանների խզակոթերը լոնցնում եմ վարդապետին: Էլ ի՞նչ Տեր, ի՞նչ Ողորմյա:

...Ու խեմթացալ վարդապետը... խեմթացալ՝ տեսնելով թուրք ենիշերիների աՔազարհոր, զազամաքարո գործողություններն անմեղ ժողովրդի մկատմամբ... Ու այդպես, Քոզեկան Քավասարակշռությունը կորցրած -ապրեց- 20 տարի:

1916-ի զարմանը Կոմիտասին տեղավորեցին Պուսի Օիշլի Քոզեքուծարանում: Բայց նրան լուրջ, մասնագիտական քուծում էր անՔրածեշտ: Հայ մտավորական- ները -Օզեմեջ Կոմիտասին- Քանձնախումբ կազմակերպեցին, դրամ Քավաքեցին, և Կոմիտասը տեղափոխվեց Փարիզ: Դա 1919-ի մարտի 19-ին էր. «Գուսանի» կեց- դանի մնացած անդամներն ալտասվախառն աչքերով ճանապարհ էին դնում իրենց ուսուցչին:

Եվ Կոմիտասը վերջին անգամ եղավ Փարիզում, քայց այս անգամ -ոչ թե եվրոպայեն փառք քաղելու, այլ իր ցավին Քամար դարման մուրալու,- գրում է Հ. Միրունին:

Ա. Չոպանյանի օգնությամբ Կոմիտասին տեղավորում եմ Վիլ-Եվրայի Քոզեքուծարանում: 1922-ին տեղափոխում եմ Վիլ-Ժուիֆ Քոզեքուծարան, որտեղ էլ

1935-ի Ռոկոտեմբերի 21-ին, ժամը 6-ին, կնքում է իր մահկանացուն՝ իր սիրասուն ազգից, Մասիսներից ու Արագածից կարոտով:

Կոմիտասն ապրեց 66 տարի, որից 20-ը՝ աշխարհից ու մարդկանցից դառնացած: Թեև հիվանդանոցներում մորաճ այցելում էին իր քարեկամներն ու սաները, բայց մա շատ հաճախ չէր խոսում և գերադասում էր մեռակությունը:

Հոկտեմբերի 27-ին ժամ Գուժուհի հայկական եկեղեցու բակում կատարվում է թաղման շքեղ արարողություն, որից հետո մորա ապակեպատ, զմուսված դագաղն իջեցվում է եկեղեցու մկուղ՝ հարմար առիթով Հայաստան տեղափոխելու:

1936-ի մայիսին Ֆրանսիայից մերգաղթող հայերի հետ հավերժական ճամփորդը վերադարձավ իր հավերժական ու վերջին հանգրվան:

Կոմիտասի դագաղը ուսերից վեր դեպի Պանթեոն էին տանում Իսահակյանն ու Չարենցը, Արեշյանն ու Թերլեմեզյանը, կառավարությունն ու ժողովուրդը:

Խոնարհվեց հայ երգի հսկա կաղնին՝ խորհրդանշելով իր ժողովրդի դառը ճակատագիրը և անմահացնելով այդ ժողովրդի՝ դարերից եկած ու դեպի դարերը գնացող անմահ ցանձերը: Նա իր ժողովրդի հետ է հավիտյանս հավիտենից, քանի կա հայ ժողովուրդը, կապրեմ մաև մորա երգն ու Կոմիտասը, որովհետև մորա երգը հնչում է հավերժ՝ որպես ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ:



ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԱՅՈՒՆԻՔԻ ԵՐԻՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ՝ ՎԱՆՔԸ

Պատմական Հայաստանի Ռապույժ Գաղափարներից է Սյունիքը: Նրա բնությունը գեղեցիկ է, իսկ հարավային մասը՝ անտառապատ ու հարուստ բուսական և կենդանական աշխարհով, պատմամշակութային հուշարձաններով: Նա արևելքից սահմանակից է Այրարատին, արևմուտքից՝ Արցախին, հարավարևմուտքից՝ Վասպուրականին՝ իր ենթակայության մեջ ընդգրկելով 12 գավառ: Երկիրը ղեկավարվել է մեծամուն իշխանների և թագավորների կողմից, իսկ հոգևոր-կրոնական կյանքը՝ Ներսես Մեծի կողմից շնորհված 12 եպիսկոպոսների գլխավորած թեմերի, որոնք ղեկավարվել են միտրոպոլիտության կողմից: Եպիսկոպոսության ղեկավարը կամ միտրոպոլիտը ընտրվել է Կաթողիկոսի հավանությանը և հաստատվել նրա կողմից: Այս միտրոպոլիտությունն իր գոյության շրջանում կարևոր դեր է խաղացել երկրում կրոնական ափսոսանքի ամրապնդման գործում: Սյունիքում գործել են քաղաքիվ կրոնամշակութային կենտրոններ, վանքեր, եկեղեցիներ, որտեղ դաստիարակվել են համարաճանոթ հոգևորականներ, գրիչներ, պատմագիրներ և ստեղծել արժեքավոր քաղաքիվ գործեր: Այդ վանքերի թվին է պատկանում նաև ԵՐԻՑՈՒ ՎԱՆՔԸ:

Ստեփանոս Օրբելյանը, լինելով Սյունյաց երկրի վերջին՝ 53-րդ միտրոպոլիտը (13-14-րդ դարի սկիզբ), իր հոգևոր-եկեղեցական և քաղաքական գործունեությանը զուգահեռ, կատարել է զիտական խոշոր աշխատանք Սյունիքում տեղի ունեցած կարևոր ռազմաքաղաքական իրադարձությունները պատմության մեջ ճշգրիտ գնահատելու հարցում, կազմել Գաղափարական, իշխանական ու թագավորական տների կառավարման հաջորդականությունը, եպիսկոպոսության աթոռակալների ճշգրիտ ցանկը և այլն: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, Երիցավանքը հիմնադրվել է 6-րդ դարում և գոյատևել մինչև 10-րդ դար: Այն մեզ է հասել ավերված վիճակում ու գտնվում է ներկա Արծվաճիկ գյուղից արևելք երեք կիլոմետր հեռավորության վրա, մի քարձորադիր տեղում, քարածալոյի պոնտիկ: Ըստ պատմիչի, միտրոպոլիտության վեցերորդ աթոռակալ Տեր Մուշեղն հաջորդել է Տեր Երիցակը՝ Սուրբ վանահայր, մեծ տոնեմվար, խարազանագետ ու խստակրոն ճգնավոր: Երկար տարիներ ապրել է Բաղք գավառում, մի քարանձավ տեղում, ապա զնացել երանելի Գյուտի վանք և այնտեղ խստակյաց ճգնությանը անցկացրել քաղաքիվ օրեր: Այնուհետև Սուրբ Գյուտի օժանդակությամբ և հրամանով 12 կրոնավորներով զայիս է այդ տեղը ու հայր Գյուտի կողմից պարգևատրվել քաղաքիվ ունեցվածքներով շինում եկեղեցին և այն կոչում Նոր Երուսաղեմ: Բայց բոլորովին, որոնք ժամանակին Գյուտի կողմից քնակեցվել էին այդ վայրում, դիմադրում են Երիցակի շինարարությանը: Սուրբ Հայրն այդ լսելով՝ նրանց համոզում է, որ խաղաղվեն, և

սահմանում է համապատասխան չափով վանքից մրանց կարիքները հոգալու հնարավորություն: Ինքն էլ օրըստօրե մասնակցում է շինարարությանը, կառուցողներից ճաշ ուղարկում: Եվ Երիցակն այսպես շինելով Աստուտուն ու կանգնեցնելով փառաքանության տեղ, այն հարմարեցնում է հրեշտակակրոն մարդկանց բնակության համար:

Թեև Տեր Երիցակի և մրա կառուցած Երիցավանքի գործունեությունը լուսաբանող աղբյուրներն անբավարար են, սակայն միայն այդ մասին հիշատակումը



Երիցավանքի գանգակատունը

վկայում է երկրում քրիստոնեության ամրապնդման նպատակին մրա բերած ավանդի մասին:

Բազմիցս տեղացիներից լսելով Երիցավանքի մասին տարբեր զրույցներ՝ հետաքրքրություն առաջացավ մոտիկից ծանոթանալու դրան: Որոշեցի անձամբ մեկնել պատմական այդ սրբավայր և սեփական աչքերով տեսնել այն, դրա շինությունները և մտովի փոխադրվել վեցերորդ դար:

1997 թվականի սեպտեմբերի 29-ին Արծվանիկից, որտեղ էի հանգստի առիթով, մեկնեցի՝ պատմական այդ վայր: Իրոք, վայրը, որտեղ կառուցված էր վանքը, շատ է գեղեցիկ, սակայն շինությունների մերկա վիճակը գոհացուցիչ չէր և վկայում էր, թե ինչպիսի հոդմեր են անցել մրա զլխով ու ավերիչ հետքեր թողել դարերի ընթացքում: Գոհ եմք, որ պահպանվել է թեկուզ այդքանը, իբրև անցյալի պատմական նշխարներ: Եկեղեցու թաքծրադիր տեղում ամրացրած ցուցամակը հիշեցնում է, թե այն պահպանվում է պետության կողմից:

Օրբելով և զճնկով տարածքը, շինությունները (և՛ խաչքարե կարելի է անվանել), ծամողացածք ամենիմ: Հիսապոր եկեղեցին, որը կոչվում է Սուրբ Նախավկա, մի խաչքար, եզակի ձորիմվածքով ճարտարապետական կառույց է, միանավ, թաղածածկ երկարավուն դափնեով, ունի երեք ռազ կամարաշարեր, որոնք փակված էին ռաբրով: Կաթիլի երկարությունը է 15-20 մետր, լայնությունը՝ 7 մետր, բարձրու-



Երիցավանք

թյունը՝ 10-11 մետր: Տանիքը տեղ-տեղ խախտված է, հատակը՝ հողից, Սուրբ Սեղանը ու ճրա տանիքը՝ քանդված:

Եկեղեցուց ոչ հեռու կար ճան մի խախտված մատուռ, որին տեղացիները «Ջանգակատուն» են անվանում: Ինչպես նշեցինք, երկու շինություններն էլ գտնվում են կիսավեր վիճակում: Ներսիս և դրսից, թեև կիր-ավագ ամուր շաղախին, վեճերի քարերը թափված են, քացակայում է որևէ մի հուշագիր արձանագրություն (տե՛ս լուսանկարները): Վանքի տարածքում, եկեղեցուց ոչ շատ հեռու, գտնվում է ճրա հանգստարանը, սակայն ճեղքայաների տապալանքարերին չկար ոչ մի հիշատակություն՝ քացառությամբ մեկից, որի վրա դժվարությամբ ընթերցվեց «ԳՈՂ» հիշատակող բառը: Պետք է նշել, որ շրջապատող ամենի լեռների և դժվարանց ուղիների շնորհիվ վանքը կարողացել է պաշտպանվել ու դիմակայել թշնամիների ասպատակություններից: Տեր երիցակը, որը Կաթողիկոս Մուշեկի կողմից և Սյունիքի ազգաբնակչության միաձայն ցանկությամբ 1530-ական թվականներու ձեռնադրվում է Սյունիքի՝ թվով յոթերորդ միտրոպոլիտ, գահակալում է ընդամենը մեկ տարի և

վախճանվում: Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի, Երիցակը թաղվում է Երիցավանքում:

Շարտարապետ Ա. Խ. Մնացականյանը մեծ ճարտարապետական շինությունները, ինչպիսիք է Երիցավանքի եկեղեցին, գտնում է, որ կառուցվել են 5-7 դարերում, իսկ 9-րդ դարի վերջից նրանք ձևափոխություններ են կրել:

Արծվանիկ ցյուղի տեղանվան մասին այն կարծիքը կա, թե այժմյան «Արծվանիկ» տեղանունն առաջացել է հենց ԵՐԻՑԱՎԱՆԻԿ ձևից: 14-րդ դարում վերանում է Սյունիքի միտրոպոլիտությունը, իսկ խորհրդային բռնաթեոսպոման տարիներին՝ մեկ քաղմաթիվ թեմեր Հայաստանում:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանում տեղի ունեցող որոշ փոփոխությունները նպաստեցին անկախության հաստատման և կրոնական կյանքի աշխուժացման գործընթացին: Տասնամյակների դադարից հետո աստիճանաբար վերելք է ապրում հոգևոր կյանքը: Բացվեցին մոր եկեղեցիներ, Էջմիածնին վերադարձվեցին որոշ վանքեր, կառուցվում են մոր եկեղեցիներ, և ժողովուրդը հոգևոր հայրերի օգնությամբ վերադառնում է իր պատմական դավանանքին: Այդ ամենը կանոնավորելու և ղեկավարելու նպատակով մորապետություն վարչական շրջաններում ստեղծվեցին եկեղեցական թեմեր: 1996 թվականի մայիսի 30-ի պաշտոնագրով Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գաբեզին Ա-ն մախկիմ չորս թեմերի փոխարեն ստեղծեց ութը, որոնցից մեկն էլ՝ Սյունիքում թեմակալ առաջնորդ նշանակելով Արթուրյան վարդապետ Մկրտչյանին (1997 թ. հունիսից՝ եպիսկոպոս): Անկասկած, թեմի առաջ ծառայած լուծում պահանջող հարցերի հետ, մրա ուշադրության տեսադաշտից չի վրիպի մեկ ԵՐԻՑԱՎԱՆԻՔԻ հովանավորությունը:



ԹԱԹՈՒԼ ԶԱՎԵՆՆԻ ՍՅՈՒՆՆԻ

ՍՅՈՒՆՑԱՑ ԾԱՂԱՏ ՈՍՏԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՋ

Վաղմջական ժամանակներից մինչ 9-րդ դարը Մեծ Հայքի Այունիք մահանգի աշխարհիկ և Ռուկնոր կենտրոնը եղել է Մեղուկը գավառի Ծաղատ գյուղաքաղաքը, որը մասնագիտական գրականությամբ մեք նույնացված է Այունիքի մարզի Ծաղատ գյուղի հետ:

Այունյաց ավելի քան 500-ամյա զահանգիստ կենտրոնի խորհրդավոր լուրջությունը, այսինքն՝ ժամանակակից Ծաղատում հնագույն Ծաղատը հիշեցնող պատմահնագիտական ստույգ արժեքների բացակայությունը և մյուս կողմից՝ պատմահնագիտական հուշարձանների անհաստատելի թաքցվածությունը աչքի ընկնող Սիսիան քաղաքի հին ամվան ամրալուս լինելը, սակայն, դրոշմեղ կասկածի ենթարկել իշխող տեսակետը և Սիսիան քաղաքի տարածքում սկստրել Այունյաց պատմական ուսումը:

Հիշատակություններ պատմական Ծաղատի վերաբերյալ

Պատմական Ծաղատի վերաբերյալ առաջին վկայությունը տվել է հին հույն գիտնական Պտղոմեոսը (ծն. թ. անհտ. - մոտ մ. թ. 168 թ.): Նրա կազմած «Ասիայի երրորդ քարտեզում» Ծաղատը նշված է «Սալատա» ձևով¹: Այս վկայությունը հուշում է, որ 2-րդ դարում Ծաղատը աչքի ընկնող քնակավայր էր և, ըստ երևույթին, համոզիսանում էր Այունիքների իշխանական տոհմի կենտրոնատեղին:

Հայ պատմիչներից պատմական Ծաղատի մասին առավել ստույգ տեղեկություններ է թողել Այունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Իր «Պատմություն մահանգին Սիսական» երկում նա նկարագրել է 4-րդ դարում Այունիքի իշխաններ Ամդոկի և նրա որդի Բարիկի գործունեությունը՝ կապված Ծաղատ մայրաքաղաքի հետ:

Ըստ պատմիչի, Ծաղատում էր գտնվում Այունյաց աշխարհի Ս. Ստեփանոս Նախավկա Մայր եկեղեցին՝ մի «Քարակոփ չքնադաշեն եկեղեցի, որպիսի ճարտարապետական կառուցվածք ուրիշ ոչ մի տեղ չկար, այն ուներ «գմբեթ» ու խորանքն չորեքկուսի, մի յարկ, մի տանիք և ոչ ուրոյն ուրոյն որպէս և այլ զաղատուսաշէն եկեղեցիք»²:

¹ Հայկական սովետական հանրագիտարան: Երևան, 1983, հ. 9, էջ 416 (քարտեզ):

² Պատմություն մահանգին Սիսական արարելալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկո-

5-րդ դարում, հայ դպրության սկզբնավորման ժամանակ, Մեսրոպ Մաշտոցի կողմից Սյունիքում բացվել են Հայաստանում առաջին քրիստոնեական դպրոցները: Դրանցից զարգացման ամենաբարձր մակարդակն ունեւր Սյունյաց վարդապետարանը³, որը գործեց 5-9-րդ դարերում: Ստ. Օրբելյանը Սյունյաց վարդապետարանի մասին գրում է, թե ինչպես որ «աթենացիքն ի մէջ Հոռոմոց և Յունաց ճոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ, յիսպանիացոց աշխարհին լատին և հելլէն դպրութեամբ, այսպէս և սոքա ի տաճա Թորգոմայ յաշխարհիս Հայոց»⁴:

Չմայած պատմիչը ուղղակի չի նշում վարդապետարանի գործելու կոնկրետ վայրը, սակայն կարելի է ընդունել, որ այն գտնվել է Սյունյաց հոգևոր կենտրոն Օաղատում:

821 թվականին Օաղատի վրա է հարձակվել արաբ զորավար Մրվանը: Ստ. Օրբելյանը գրում է. «Եւ բազում աւարովն եկեալ (Մրվանը - Թ. Ս.) ի Սիւնիս ամրանայ ի թերդագիւղն Օաղատու և կամէր զայն ևս ապականել զգեղեցիկ աշխարհն Սիսական. և կոտեալ զգօրսն ի գաւառին Մղկաց ի միմ տեղութ»⁵:

Այդ արշավանքի մասին հիշատակել է նաեւ Մ. Կաղանկատվացին: Նա գրում է. «Եւ ի նոյն ամի (821 թ. - Թ. Ս.) ասպատակեաց Սեադայ աշխարհաւորն Տաճիկ, որ Աւառանջան անուն ճամաչէր. ի սահման Հայոց. և յաւարի առեալ զաշխարհն ամենայն դառնայ ի Սիւնիս, և ամրանայ ի թերդատեղի աւանին Օաղատու, որ է ի գաւառին Մղկաց»⁶:

821 թ. Մրվանի արշավանքից Օաղատը այնքան է տուժել, որ Սյունյաց գահերեց իշխան Վասակ Սյունին իր աթոռանիստը նույն թվականին Օաղատից տեղափոխեց հարևան Վայոց ձոր գավառի Եղեգիք ավան:

851 թվականը Օաղատից Տաթև տեղափոխվեց Սյունյաց թեմի եպիսկոպոսանիստը: Այդ քայլը թելադրված էր անվտանգության նկատառումներով:

Այսպիսով, Օաղատը՝ վաղ միջնադարյան Հայաստանի հզորագույն նախարարական տոհմի գահանիստը, Հայաստանի վարչա-քաղաքական, առևտրա-տնտեսական և հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը, 9-րդ դարի սկզբին կորցրեց

պոսի Սիւնեաց: Թիֆլիս, 1910, էջ 42: Ժարտարապետ է. Մելիքյանի կարծիքով, պատմիչը, շեշտելով շինության խորաններից գմբեթի արտասովոր ձևով միավորված, միաձավայ լինելու հանգամանքը, եկեղեցու ընդհանուր հորինվածքի մասին որևէ ակնարկ չի անում: «Չորեքկուսի» ածականը, գրում է է. Մելիքյանը, որը նշանակում է քառակույմ, քառանիստ, վերաբերվում է ոչ թե շինության քառաթև, չորս խորաններով կազմված խաչակերպ կառուցվածքին, այլ նրա խորանների ձևին: Մի հարկի ու տանիքի ներքո մի քանի խորանների և մեկ գմբեթի ամփոփումն անհնար է, ուստի գմբեթը կարող էր միավորված լինել միայն մեկ, ակներևաբար ավագ խորանի հետ»: Մելիքյան է., Արաբաձև տաճարների գմբեթավորումը, «Գիտություն և տեխնիկա», 1987, թիվ 5, էջ 44:

³ Նույն տեղում, էջ 133:

⁴ Նույն տեղում:

⁵ Օրբելյան Ստ., Նշվ. աշխ., էջ 158:

⁶ Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 326: Ստ. Օրբելյանի նշած Մրվանը կաղանկատվացու զորքում հիշատակված է Սեադա անվամբ:

իր կրթմանի դերն ու ռազմակուրսումը և, ըստ կրկնության, շարունակում էր պոլիտլուծ ունենալ որպես արարական իշխանության գիմվորական և վարչական կենտրոն, ռոտվիստ, ինչպես վկայում է ԼԲ. Կաղանկատվացի, արար գորավար Արվանը, -դառնալով Այումիք, ամրացավ Օադատ ավանի բերդատեղում»:

Հ. ԼԲանանդյանը գրում է, որ «... քաղաքները, որոնք խիստ տուժել էին արարական արշավանքների ու պարբերաբար կրկնվող ապստամբությունների և կոիվների ժամանակ, ստացել էին այլ մշամակություն: Նրանք դառել էին արարական իշխանության գիմվորական և վարչական կենտրոնները և բնակեցված են եղել արարներով ու դառել էին, վերազանցողներ, արարական վետերանների զաղութներ»⁷:

Արարական աղբյուրներում «Օադատ» անվան քաղաքությունը հիմք է տալիս եզրակացման, որ արարները 9-13-րդ դարում Օադատը կոչել են արարական անուանով, ինչպես օրինակ, Դվիմը կոչում էին Դարի, Նախիջևանը՝ Նաշավա, Պարտավը՝ Ռարդա և այլն: Դառնալով արարական գիմվորական և վարչական գլխավոր հենակետը Այումիքում, Այումյաց զահանգիստ Օադատ ավանը արարների կողմից, մեր կարծիքով, կոչվել է Այսավան (Ռայերեն՝ Այումի ավան կամ Այումյաց ավան - Թ. Ա.), որի մասին իր աշխարհագրական բառգրքում հիշատակում է արար աշխարհագիր Ռակուտ Այ Համավի (1178-1229)⁸: Համաձայն մյուս վկայության, այդ քաղաքը գտնվել է Առանի կողմերում, Ռայլակամից (Փայտակարամից - Թ. Ա.) չորս օրվա ճանապարհի հեռավորության վրա⁹:

Խոսելով «Այումիք», «Ախական» և այլ տեղանունների ծագման վերաբերյալ, Հ. Հյուրշմանը գրել է, որ «Ախականը այն անունն է, որ Այումիք Պարսից և ապա նաև Արարացուց և Ասորուց բերմին մեջ կը կրեր: Այումիքը, և երկրորդ՝ արարացի պատմագիրներն երկիրս կ'անուանեն Sisa-jon (հին պարսկ. Sisağat - միջ. պարսկ. Sisaakan)»¹⁰:

10-րդ դարում Տաթևի վանքին տրվող հարկերի հին ցուցակում Մղուկը գավառում նշված են Օադատը՝ 12 և Օադատ վանքը՝ 6 հարկաչափերով¹¹:

14-րդ դարում՝ 1378 թվականին, հիշատակվում է Օադատի գործող եկեղեցին՝ Ա. Գրիգոր անվամբ¹²:

Օադատի վերաբերյալ 15-17-րդ դարերում հիշատակություններ հայտնի չեն: Օադատ գյուղը մշվում է 1781 թ. Տաթևի վանքին տրվող հարկերի «Քյոթուկ» կոչվող ցուցակում¹³:

⁷ Մանանդյան Հ., Քրեական տեսությունը հայ ժողովրդի պատմության, Բ. Բ., Երևան, 1960, էջ 295:

⁸ Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմող՝ Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 82:

⁹ «Մեկ օրվա ճանապարհի մեծությունը հավասար է եղել միջին հաշվով 7-8 ժամվա ճանապարհի (35-40 կմ)», Հայկական սովետական հանրագիտարան, Բ. Բ., Երևան, 1982, էջ 679:

¹⁰ Օրբելյան Ստ., Ոշվ. աշխ., էջ 510:

¹¹ Հյուրշման Հ., Հին հայոց տեղոյն անունները, Վիեննա, 1907, էջ 96:

¹² Ժ. Դ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 527:

¹³ Դավթյան Ծ. Բ., Ախիանի բնակավայրերի պատմությունը, Երևան, 1997, էջ 15:

«Ծաղատ» անվան ստուգաբանությունը

Միջնադարյան Սյունիքի բազմաթիվ գյուղանուններ արտացոլում են բնական միջավայրը, տեղանքի գեոմորֆոլոգիական և ջրաբանական առանձնահատկությունները: Ասվածի հաստատումն են հանդիսանում, օրինակ, Ծղուկքի և նրանից անջատված Ալլախ գավառի¹⁴ Ապարանից գետ, Գետակից, Մեծածոր, Մշկածոր, Բարունջ, Զկանարած, Բողոտի ջուր, Ուռական գետ, Գինական գետ գյուղանունները և այլն¹⁵: Ծաղատը նմանատիպ տեղանուններից է:

Այն կազմված է շաղ բառարմատով և հնագույն վերջածանցից սերած առ տեղանվանակերտ մասնիկով, ինչպես օրինակ՝ բացատ, խորխորատ, հեղեղատ հնագույն հայերեն բառերը¹⁶:

«Ծաղ+ատ»-ը ծագում է շաղ «ցող, խոնավություն, թրջել, թացություն» արմատից և նշանակում է ջրով թրջված տեղ¹⁷:

«Ծաղատի» նախնական ձևը «սաղ+ատ»-ն է, որ նշանակում է ծանծաղուտ¹⁸ և առաջացել է հայերենում Ս>Ծ հայտնի հնչյունափոխությամբ, այնպես, ինչպես Սյունիքի Սոթք գավառում Սիսկայան դարձել է Ծիշկայա, Կոփսական գավառում՝ Սիսկերտը դարձել է Ծիշկերտ, Ծղուկք գավառում՝ Սիսթատիան դարձել է Ծիշթատի¹⁹:

«Ծաղատ» անվան վերոնշյալ ստուգաբանության օգտին են խոսում Ստ. Օրբելյանի՝ պատմական Ծաղատի բնական, աշխարհագրական պայմանների վերաբերյալ հաղորդած տեղեկությունները: Ըստ պատմիչի, Ծաղատը կառուցված է եղել

¹⁴ Կարծում ենք, որ Սյունիքի բաժանումը 14 գավառների, այդ թվում՝ Ծղուկքից Ալլախի անջատումը, կատարել է ոչ թե Ստ. Օրբելյանը, այլ նրանից հետո մեկ ուրիշը՝ հարկացուցակի բնագրում ավելացնելով ևս երկու գավառ: Դեռևս 15-րդ դարի սկզբին, 1406-1408 թթ., Տաթևի համալսարանում սովորած Թովմա Մեծոփեցին գրում է Սյունիքի 12 գավառների բաժանված լինելու մասին (Մեծոփեցի Թ., Պատմություն Լիան Թառնուրայ և յաշորդաց իւրոց, Փարիզ, 1960, էջ 14): Օրբելյանից բացի, ինչպես գրել է Թ. Հակոբյանը, «Ալլախ գավառանունը չեն հիշատակում ո՛չ նրանից առաջ և ո՛չ էլ նրանից հետո եղած պատմիչներն ու աշխարհագիրները: Հարկացուցակում (խոսքը վերաբերվում է Ստ. Օրբելյանի աշխատությանը կից Տաթևի վանքին տրվող հարկերի հին ցուցակին - Թ. Ա.) Ծղուկքը երկու մասի բաժանելը հավանաբար եղում էր եկեղեցական աշխարհագիր կատարելու և հարկեր հավաքելու հարմարություններից, այնպես որ նա քաղաքացիական իմաստով վարչական միավոր չէր» (Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 43):

¹⁵ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 510-511:

¹⁶ Իշխանյան Ռ., Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Երևան, 1989, էջ 55, նաև՝ Պետրոսյան Ս., Հացագզիների պաշտամունքի արտացոլումը Ծարայի ավանդազրույցում, ՊԱՀ, 1981, թիվ 3, էջ 199:

¹⁷ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, հ. 3, էջ 487-488:

¹⁸ Նշվ. աշխ., հ. 4, էջ 163:

¹⁹ Ռոմադյան Ա., Սյունիքը դիցարան, Երևան, 1981, էջ 18:

մի լճակի ափին «և դարձնալ թաղք մի Օաղատայ ի լերիմ ծովում լեզր ծովակի միջոց... և գորտքն ի ծովում ըստ սովորութեան իրեանց դարբառոյ մուրիմ լաւէժ աղաղակելով...»²⁰։ Բնտ երևույթիմ, «ծովակը» ճաճանմամ, գորտերով լիք զետա-մերձ լճակ է եղիլ։

Օաղատի Ա. Ստեփանոս Նախավկա եկեղեցու արևմտյան կողմում, մոտ «մի ձայն տալու հետավորության» վրա, գտնվել է մի ճաճանման փոս, որը կրում էր «Աճճատու փոս» անունը։ Մյուսյաց պատմիչը ձկարագրել է, թե ինչպես Մայր եկեղեցու յար և դաման մշակներից մեկի «ոտքերը կապ են ընկել» Աճճատու փոսում, և չի կարողացել քայլել²¹։

Ինչպես երևում է, պատմական Օաղատը կառուցված է եղել ջրաշատ. մակե-րևութային ջրերով, ճահիճներով և ծանծաղուտներով առատ զետաճվածում։

Սաղատձոր-Շաղատ

Ներկայիս Օաղատ գյուղը գտնվում է Սիսիան քաղաքից 12 կմ հյուսիս-արև-մուտք, Սիսիան-Նախիջևան խճուղու ձախ կողմում, հրոտան զետի աջ ափին։

Գյուղի բնակիչների մի մասը եկել են Պարսկաստանից։ Այդ մասին Ղ. Ալիշանը գրում է. «Յետ հազարամյալ մոռացության անուամ տեղույս ի գիրս. յալտնեցաւ ի գալստեան զաղթականին Հայոց ի կողմանց Խոյի այսր, յամի 1829, իրեւ տանց երեսնից, առ որս իջեանեալ ագաւ Նդիա Սմիտի Ամերիկացի քարոզիչ (ի 6-7 մոյեմբերի, 1830) զիշերըս երկու, միմչն էր ցոցա կանգնեալ եկեղեցի, քայց ումէից երէց մի, այլ ոչ իմչ յիշէ գշիմէ կամ գաւերոյ տեղոյն»²²։

Օաղատի մոտ 100 տեղանուցներն առաջացել են 1829 թվականից հետո։ Այդ են վկայում ցրանց ստուգաբանությունն ու բովանդակությունը։

Պատմական Օաղատի տեղադրության վերաբերյալ ուսումնասիրողների կար-ծիքները իրարամերձ են։

Ղ. Իմեհյանը պատմական Օաղատը ցուցնացրել է Երնջակ գավառի Շոռթ գյուղաքաղաքի հետ։ Նա գրում է. «Այս Շաղատ թուի լինել նոյն՝ որ այժմ այլայլու-թեամբ կոչի Շոռթ, զի քաց ի մերձատրութեմէ անուանց՝ ճաւ դիրքն ընդհան-րապէս համաձայնին։ Այժմեան Շոռթ չէ ինչ հետի ի Նախճաւանայ, սոյնպէս և Ծղուկն զառառ յորում էր Օաղատ՝ սահմանակից էր Նախճաւանայ. ի Շաղատ էր եկեղեցի յառում սրբոյն Ստեփաննոսի, Նոյնպէս եւ ի Շոռթ գտանի Սուրբ Ստե-փաննոս, այժմ փոխարկեալ ի մատուռն»²³։

²⁰ Օրրեյյան Ստ., Ըշվ. աշխ., էջ 44։

²¹ Նոյն տեղում, էջ 45։

²² Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 212։

²³ Իմեհյան Ղ., Ստորագրություն հին Հայաստանայց, Վենետիկ, 1822, էջ 281։

Թ. Հակոբյանը ենթադրում է, որ պատմական Օաղատը գտնվել է ներկայիս Օաղատից հյուսիս²⁴, իսկ բերդը գտնվել է գյուղի արևելյան մասում բարձրացող երկու բլուրների շրջանում²⁵:

Ա. Ղարազոյանը գրում է, որ Օաղատի շրջակա գյուղերի բնակիչների վկայությամբ գյուղից հարավ-արևմուտք գտնվող Քոչաբերդ լեռան զագաթին անցյալում բերդ է եղել: Իր կարծիքով, այստեղ բերդ չի եղել, այլ «եղել է ոչխարների փառախ, որի մասին է վկայում մահ լեռան ներկայիս Քոչաբերդ անունը»²⁶:

Մեր համոզմամբ, իրոք Քոչաբերդի զագաթին բերդ է կառուցվել: Սակայն բերդի տեղադիրքը և տարածքի մեծությունը ցույց են տալիս, որ այն զառանգիտ բերդ չի եղել և ունեցել է զուտ ռազմա-պաշտպանական նշանակություն:

Ստ. Օրբելյանը իր «Պատմության» մեջ Տաթևի վանքի հին հարկացուցակում Սյունիքի Այլախ գավառի գյուղերի թվում հիշատակում է Սաղատձոր (ժամհաղտաի ձոր – Թ. Ս.) գյուղը²⁷, որն ունի Օաղատ անվան մույնամուկ ծագումը և նշանակությունը: Սաղատձոր գյուղի տեղադրության վերաբերյալ մատենագրական աղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ չկան ստույգ տեղեկություններ:

«Սաղատձոր» տեղանվան ստուգաբանությունը մեզ բերում է այն համոզմամբ, որ ներկայիս Օաղատը հանդիսանում է հնագույն Սաղատձոր գյուղը:

Ներկայիս Օաղատում Սուրբ Ստեփանոս Նախավկա և Սուրբ Գրիգոր եկեղեցիներից ոչինչ չի պահպանվել: Գյուղում կանգուն է 1848 թվականին բազիլիկ ոճով կառուցված Ս. Գևորգ եկեղեցին:

Սյունիքի ավելի քան 500-ամյա մայրաքաղաքը հիշեցնող պատմահնագիտական ոչ մի արժեք չկա ներկայիս Օաղատում: Պատմական Օաղատն ու ժամանակակից Օաղատ գյուղը իրար են առնչվում միայն անվան մոլորությամբ: Այս իրողությունը պարտադրում է մեզ մասկին Մղուկը գավառի այլ վայրում փնտրել աշխարհիկ և հոգևոր զառանգիտ Օաղատը:

Սիսիան քաղաքի տեղանունները և պատմահնագիտական հուշարձանները

Մղուկը գավառի տարածքում պատմահնագիտական տեսանկյունից ամենահարուստ, աշխարհագրական և ռազմապաշտպանական առումով բարեհարմար վայր է ներկայիս Սիսիանի ափսեաձև ընդարձակ զոգահովիտը: Հաշվի առնելով այս հանգամանքը, նպատակահարմար է պատմական Օաղատը փնտրել նախ և առաջ Սիսիան քաղաքի տարածքում:

²⁴ Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 139:

²⁵ Նշվ. աշխ., էջ 140:

²⁶ Ղարազոյան Ա., Ակունքներ, «Ռոտան», Սիսիան, 1988, թիվ 48:

²⁷ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 511:

Սիսիամը նախկինում կրում էր «Ղարաքիլիսա» անունը: 1935 թվականին ՀԱՍՀ Գեղարգյուն սովետի նախագահության Թրամանգյուրվ Ղարաքիլիսան վերանվանվեց Սիսավան, իսկ 1940 թվականին՝ Սիսիամ: «Սիսիամ» անունը մինչև 1940 թվականը կրում էր Սիսիամի շրջանի Հացավան գյուղը:



Սիսավանի տաճար (VII դար)


«Ղարաքիլիսա» մշանակում է «սև եկեղեցի»: Այդ անունը պայմանավորված է եղել գյուղում գտնվող Սյունի վանքի (Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճար) առկայությամբ:

Ղարաքիլիսա գյուղը, մեզ հայտնի տվյալներով, առաջին անգամ հիշատակվում է Կարա-Կոյունլու Հասան-Ալիի 1468 թ. Թրովարտակում՝ Տաթևի վանքին պատկանող գյուղերի ցուցակում²⁸: Այստեղ Ղարաքիլիսան մշված է որպես Թուման-ե-Նախչևան վիլայեթի Սիսաջան մահիանյի գյուղ:

²⁸ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Բ. Ա., Հրովարտակներ, պր. Ա. լԺԵ-ԺԶ դդ.), կազմող՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1956, էջ 48:

«Ղաթաքիլիսա» ամունը հետևանք է 15-րդ դարի սկզբին Մղուկքում թուրքմենական ցեղերի տիրապետության: Կարևոր է սակայն պարզել, թե ինչպես էր կոչվում այդ հին հայնական բնակավայրը վաղ միջնադարում, մախքան թուրք քոչվորների հայտնվելը:

Մղուկք զավատ թուրքական էթնիկ տարրի ներթափանցումը և հետագայում մատակցության անցնելը ուղեկցվել է զավառի հայնական տեղանունների փոփոխությամբ: Այն կատարվում էր կա՛մ տեղանվան իմաստի թարգմանությամբ, կա՛մ իշխողի լեզվի հնչյունային օրենքներին համապատասխան այլափոխմամբ. կա՛մ էլ մոր անուն տալով: Սիսիանի գոգահովտի 80-ից ավելի տեղանունների գերակշիռ մասը օտարահունչ է: Դրանցից պատմագիտական արժեք են ներկայացնում հատկապես հետևյալ՝ «Ջորաքարեր», «Ծակ քար», «Շահրիստան», «Սյունի բերդ», «Ծահ-նափոս», «Մատաղաբլուր», «Իշխանի կամուրջ», «Սյունի վանք» և «Բլկանոց» (տե՛ս քարտեզը) տեղանունները:



«Շահրիստան» թյուրքերեն բառ է, հայերեն նշանակում է «քաղաքատեղ»: Այսպես է կոչվում Սիսիան քաղաքի ներկայիս Գալի թաղամասը և նախկին օղանավակայանի արևելյան մասը ընդգրկող բնակատեղին²⁹: Ակամայից տեղանունը հուշում է այստեղ ինչ-որ մի քաղաքի գոյության մասին:

²⁹ Հասարակական Մ., Ոչվ. աշխ., էջ 132:

17. Հասարակության կարծիքով, այդ տարածքում գտնվել է մի ավամ՝ «Սյունի» անունով, իսկ «Օմարիստամը» հանդիսացել է Սյունի ավանի «շահաստամը»³⁰:

18. Հասարակության կարծիքով, սակայն, հիմնավոր չէ, որովհետև՝

ա) հայ մատենագիր և վիճակիր աղբյուրներում վաղ միջնադարյան Մշակույթ ավանտում «Սյունի» անվամբ գյուղաքաղաք կամ ավան չի հիշատակվում,

բ) միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքները քաղկացած էին երեք մասից՝ միջնաքերդից, շահաստամից և արվարձաններից: Շահաստամը, բուն քաղաքը, իր լրաված տարածքով մի քանի անգամ զերազանցում էր միջնաքերդին: Այստեղ էիմ լսնվում շուկա- հրապարակները, խանութները, կրպակներն ու արհեստանոցները³¹: Սիսիանի «Օմարիստամը» չէր կարող լինել շահաստամ, քանի որ դարեր շարունակ տեղարնիկ հայր կապապանը, սերմոն-սերունդ կիոխանցեր ոչ թե քաղաքի մի թաղամասի, այլ հենց ողջ քաղաքի անունը:

Օմարիստամին մերձակա թյուրքներն տեղանունները հայկական տեղանունների ուղղակի թարգմանություններն են, ինչպես օրինակ, Մատաղարյուր-կուրրան քափա, իշխանի կամուրջ-խանքյուրփի, խայաղյուր-խայրույաղ և այլն:

Օմարիստամի տարածքում կա մի հնագույն եկեղեցի՝ ավերակ վիճակում: Այն ունեցել է կոմիդդրն ծածկ, կառուցվել առանց կրաշաղախի, խոշոր, վատ հղկված քարերով: Պահպանվել են 2,2 մետր հաստությամբ հիմնապատերը: Հատակագծի չափերն են՝ 12x15 մետր: Եկեղեցու շուրջը միջև 1960-ական թվականները եղել են դամբարաններ, որոնցից պահպանվել են միայն հարավային կողմի դամբարանները: Այստեղ կան միջնադարյան երկու խաչքարեր:

Ամենայն հավանականությամբ, եկեղեցին վաղ միջնադարյան քրիստոնեական կառույց է: Չնայած եկեղեցու պեղման աշխատանքները կիսատ են մնացել³², սակայն նրա հիմնապատերի դասավորությունից երևում է, որ այն, Սյունյաց պատմիչի ձևարարած Օաղատի Ս. Ստեփանոս Մայր եկեղեցու նման, ունեցել է զմբեթախորան կառուցվածք:

«Սյունի քերդ» (Սյունյաց քերդ): Այսպես է կոչվում Օմարիստամից արևելք, Որոտանի և նրա աջակողմյան Սիսիան վտակի միախառնման վայրում, մի քարեհարմար դիրք ունեցող սարառստի վրա գտնվող քերդը: Այն այժմ ավերակ է: Պարսպի երեք մետր լայնությամբ հիմնապատի մնացորդները լավ են երևում Որոտանի կիրճի կողմից:

Բերդը կառուցվել է հեյլենիստական դարաշրջանում և հանդիսացել, հավանաբար, Սյունյաց զահակալ իշխանների նստավայրը, Սյունիք ճահանգի վարչական-կառավարական կենտրոնը: Այդ եմ վկայում քերդի աճաղախ հիմնապատերի մնացորդները և նրանից արևմուտք ընկած մի բլրի մոտ հայտնաբերված իշխանական տոհմական դամբարանը:

³⁰ Նույն տեղում:

³¹ Հակոբյան Թ., ձշվ. աշխ., էջ 11:

³² Պեղման աշխատանքները իրականացվել են 1987 թ., հնագետ Բ. Սաղոյանի ղեկավարությամբ:

Սյունի բերդի գահաճիստ լիցելը հաստատվում է մահ Մղուկը գավառի բերդաշինական համակարգի ուսումնասիրությամբ³³:

Սյունիքի կարևոր առևտրական ճանապարհները միևնույն ժամանակ ունեցել են ռազմա-ստրատեգիական մշտնակոթյուն, ուստի մրամջ երկայնքով կառուցվել են զուտ ռազմական բերդեր և պահակակետեր:

Մղուկքի բոլոր 12 բերդերը կազմել են պաշտպանական գծային ուղղագիծ համակարգ: Մղուկքի բերդերի պաշտպանական համակարգի հիմնական նպատակն է եղել պաշտպանել Սյունի (Օաղատի - Թ. Ս.) բերդը³⁴: Թշնամին որպեսզի գրավեր գահաճիստ Սյունի բերդը, պետք է պաշարեր այդ ուղղության վրա գտնվող բոլոր բերդերը:

Վաղ միջնադարում Սյունի գահաճիստ բերդից արևմուտք առաջացել է Օահրիստան-Օաղատը: Այդ են ապացուցում հնագիտական, դրամագիտական տվյալները և տեղանունների ստուգաբանությունը:

1986 թվականին Օահրիստան-Օաղատի տարածքում, Սյունի բերդի արևմտյան կողմում, խոշոր դրամական գանձ հայտնաբերվեց: Գանձի բազմաթիվ և բազմատեսակ դրամները պատկանում էին 6-9-րդ դարերին: Այն աղբյուրագիտական առումով գնահատվեց որպես կարևորագույն պատմական վկայություն³⁵: Պարզվեց, որ Սյունի բերդի շուրջ ստեղծված Օահրիստան-Օաղատ բնակավայրը 9-րդ դարի սկզբին ապրանքափոխանակության և դրամաշրջանառության ասպարեզում միջազգային կապեր է ունեցել և առևտրի պահանջները բավարարելու նպատակով այստեղ դրամների հատման փողերանոց է եղել³⁶:

Բերդի արևմտյան կողմի հարթակի վրա, հագիվ մշմարելի դամբարանադաշտում գտնվել են հնագույն, վաղ և ուշ միջնադարյան դամբարաններ: Դամբարաններից մեկը ունեցել է հնագիտական երեք շերտ³⁷:

Քանի որ ակնհայտ է, որ Սյունի բերդին կից բնակավայրը պատմական Օաղատ գյուղաքաղաքն է՝ Սյունյաց ուստանը, ուստի Սյունի (Սյունյաց) բերդը մույն Օաղատի բերդն է: Հիմա հասկանալի է, թե ինչու Ստ. Օրբելյանը Սյունիքի մշտնավոր 23 բերդերը թվարկելիս չի մշել Օաղատի բերդը: Դրա փոխարեն մա հիշատակել է Սյունի բերդը³⁸:

Նախքան 821 թվականը, երբ Սյունյաց աշխարհիկ գահաճիստը Օաղատ գյուղաքաղաքից տեղափոխվեց Վայոց ձորի Եղեգիջ ավան, Օաղատում ապրած աշխարհիկ և հոգևոր առաջնորդները հայ մատենագիր և վիժագիր աղբյուրներում հիշատակված են ոչ թե ծննդավայրի, բնակավայրի անվամբ («Օաղատեցի»), այլ որպես կանոն՝ տոհմի անվամբ («Սյունի»)՝³⁹: «Օաղատեցի» անունը հանդիպում է

³³ Զարյան Ա. Ա., Սյունիքի ամրոցաշինության որոշ սկզբունքների մասին: ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 224-232:

³⁴ Զարյան Ա. Ա., մշվ. աշխ., էջ 225:

³⁵ Մուշեղյան Խ., Սյունիքի դրամական գանձը, ՊԲՀ, 1989, թիվ 2, էջ 123:

³⁶ Նույն տեղում, էջ 131:

³⁷ Հասարակական Մ., մշվ. աշխ., էջ 176:

³⁸ Օրբելյան Ստ., մշվ. աշխ., էջ 13:

³⁹ Օրինակ, «Սյունի» տոհմանունն էր կրում Սյունյաց վարդապետարանի ռուսացապետ,

միայն 821 թվականից հետո: Օրիճակ. 874 թվականին Անանի կղզու եկեղեցիների և Ռոդավազ վանքի ժաման արարողությանը մերկա է. եղել Արտավազ Օաղատենցի իշխանը⁴⁰:

«Շահնափոս»: Այս տեղանունը վկայում է, որ Ղարաքիլիսա-Ախիանը արաբական և մոնղոլական տիրապետության շրջանում եղել է քաղաք և կատարել վարչական կենտրոնի դեր: Հայտնի է ման, որ մոնղոլները նվաճումների ժամանակաշրջանում որևէ քաղաք չդրավելով՝ այնտեղ քոչվոր ազնվականներից մշամակում էին քաղաքապետ՝ «շահնա»⁴¹:

1240-50-ական թթ. թաթարական զորքի վլխավոր Բաչու Նոյիմը նստում էր Ախիանում⁴²:

«Մատաղարլուր»: Օաթրիստան-Օաղատում Այուդի բերդից արևմուտք գտնվող մի ոլլի անվանումն է: Մատաղարլուրի Քարավառաչաց կողմում 1970 թվականին պատահաբար հայտնաբերվել է հելլենիստական դարաշրջանի (2-րդ դար մ.թ.ա.) լացառիկ հարուստ իշխանական ստորերկրյա դամբարան, որը, հավանաբար, պատկանել է Այուդիների մախարաբական տոհմին⁴³: «Մատաղարլուր» անունը պայմանավորված է իշխանական դամբարանի գոյությամբ:

«Իշխանի կամուրջ»: Որոտան գետի վրա, Այուդի բերդի և Օաթրիստան-Օաղատի մոտ, վաղ միջնադարում կառուցված կամրջի անվանումն է⁴⁴: Կամուրջը կառուցված է եղել սրբատաշ թագալտից, ունեցել երկաթե միացումներ: Կամրջի վերջին մնացորդները Որոտանը քշել-տարել է 1920 թվականին՝ վարճանային զորեղ վարարման ժամանակ⁴⁵:

«Այուդի վանք» (Սբ. Գրիգոր Լուսավորիչ տաճար): Ախիան քաղաքի հյուսիսարևմտյան դարվանդին է գտնվում Այուդի վանքը՝ կառուցված 555-584 թթ. ժամանակահատվածում⁴⁶, հեթանոսական տաճարի տեղում: Ատ. Օրբելյանի վկայությամբ՝ «առաջև վանացն ի մէջ քաղցրաբայեաց մէլդանին դնեն իշխանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ և յամենայն աուր ասեն գային ի ժամ պատարագին»⁴⁷:

Հայաստանի կրոնական, գիտական, մշակութային նշանավոր գործիչ, 734-735 թթ. Այուդյաց եպիսկոպոս Տեր Ստեփանոսը, որը սակայն ձեռնդրվ Դվինի ավագ քահանայի որդին էր (Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 132):

⁴⁰ Նույն տեղում, էջ 175:

⁴¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 616:

⁴² Գանձակնցի Կ., Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. վ. Առաքելյանի, Երևան, 1982, էջ 265:

⁴³ Խաչատրյան Ժ., Դիակիզումը Հայաստանում (մ.թ.ա. 2-րդ - մ.թ. 3-րդ դդ.), «Լուսաբեր» հաս. գիտ., Երևան, 1975, թիվ 2, էջ 69:

⁴⁴ Մ. Հասարթյանը կամուրջը վկայակոչել է «Ջարե» անվամբ, որը նորաթուխ անուն է (Հասարթյան Մ., նշվ. աշխ., էջ 132): Կամրջի իսկական պատմական անունը «Իշխանի կամուրջ»-ն է, որ տարածված է Ղարաքիլիսա-Ախիանի տեղաբնիկների շրջանում:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Այուդի Թ., Երբ է կառուցվել Ախիանի Ա. Գրիգոր Լուսավորիչ տաճարը, «Էջմիածին», 1997, թիվ Ժ, էջ 87:

⁴⁷ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 338:

Պատմիչի այս վկայությունը հիմք ընդունելով, Ղ. Ալիշանը գտնում էր, որ Օաղատի վանքը նույն Սյունի վանքն է⁴⁸։ Նրա կարծիքով, «այսպիսի ընդհանուր տոհմական անուն վայել է այն վանաց՝ որ առ երի գահաճիստ տեղոյն կայցե»⁴⁹։ Ղ. Ալիշանը, սակայն, Ղարաքիլիսայի (Սիսիանի) վանքը անվանելով «Ս. Հովհաննես»⁵⁰, եզրադրում էր, որ Սյունի վանքը կառուցված է եղել ներկայիս Օաղատ գյուղում։

Օաղատի և Սյունի վանքերի նույնության վերաբերյալ Ղ. Ալիշանի ենթադրությունը հիմնավորվում է նաև Ս. Օրբելյանի հետևյալ վկայություններով.

ա) 8-րդ դարում, Սյունիքի գյուղերի տաճարների և վանքերի միջև գերադասության-առաջնության խնդրով ծագած վիճարարության առթիվ, պատմիչը հիշատակում է Սյունիքի 5 առաջիկա մշահավոր վանքերը, որոնց թվում Սյունի վանքը բացակայում է, իսկ Օաղատի վանքը և գյուղը մշված են⁵¹։

բ) Տաթևի վանքին տրվող հարկերի հին ցուցակում (10-րդ դար) Օղունք գավառի 75 բնակավայրերի անվանացանկում Սյունի վանքը կրկին բացակայում է, իսկ Օաղատի վանքը և Օաղատ բնակավայրը մշված են⁵²։

գ) «Պատմության» ԿԲ գլխում Սյունյաց աշխարհի գործող 30 վանքերը և միաբանությունները թվարկելիս, Ստ. Օրբելյանը Տաթևի և Թանափատի վանքերից հետո հիշատակում է Սյունի վանքը, իսկ Օաղատի վանքի մասին՝ լռում⁵³։

Բացի այդ, արդեն ասվել է, որ 14-րդ դարում Օաղատում գործող եկեղեցին, Սյունի վանքի նման, կրում էր Ս. Գրիգոր Լուսավորչի անունը։

Ինչպես մշեցիքը, «Օաղատ» մշահակում է «ջրով թրջված տեղ» և արտահայտում տեղանքի՝ մակերևութային ջրերով առատ լինելը։ Հետադարձ պատմաաշխարհագրական դիտարկումը ցույց է տալիս Սիսիան քաղաքի ջրաբանական պայմանների և տեղագրության համապատասխանությունը պատմական Օաղատի բնական պայմանների վերաբերյալ Սյունյաց պատմիչի նկարագրություններին։

Սիսիան քաղաքի տարածքը խիստ առատ է մակերևութային ջրերով։ Գոգահովտով հոսում է Որոտոն գետը։ Ընդամենը 6-7 տասնամյակ առաջ, հատկապես գարնանային վարարումների օրերին, Որոտանը հունից դուրս գալով՝ հեղելում էր աջափնյա տարածքները մինչև 100 մետր լայնությամբ՝ գոյացնելով ճահիճներ, ջրափոսեր։ Եթե դրան զումարենք այն, որ Որոտանի ձախափնյա թեքություններում Սյունիքի հրաբխային բարձրավանդակում սնվող ստորերկրյա ջրերը, աղբյուրների տեսքով քաղաքի տարածքում ելք ունենալով, գոյացրել են ճահճոտ տեղանք, ապա

⁴⁸ Ալիշան Ղ., մշվ. աշխ., էջ 212։

⁴⁹ Նույն տեղում։

⁵⁰ 19-րդ դարի 90-ական թվականներին Ղարաքիլիսա-Սիսիանի եկեղեցու հին, իսկական անունը հայտնի չէր։ Եկեղեցին կոչում էին Ս. Հովհաննես։ Անվանի վիճագրագետ Ս. Բարխուդարյանը 1958 թ. եկեղեցու պատին եղած արձանագրությունների հիման վրա ճշտորեն պարզեց հուշարձանի անունը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», կամ ուղղակի՝ «Սյունի վանք» (Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիճագրության, հ. 2, Երևան, 1960, էջ 85)։

⁵¹ Օրբելյան Ստ., մշվ. աշխ., էջ 48-49։

⁵² Նույն տեղում, էջ 510։

⁵³ Նույն տեղում, էջ 338-340։

ավելի Ֆասկամայի կղառնա, թե իմյու է ալս վայրը շաղատ (ջրով թրջված տեղ) անվանվել:

Հազարավոր տարիների ընթացքում լեռնային Որոտանի ջրերը խորքային էրոզիայի միջոցով քայքայել, մաշել ու ձևափոխել են Վնտի Ռումը, իջեցրել գետաձուլ-տի Ռատակը: Հետևապես, պատմական Ծաղատի «ծովակը» գտնվել է Սիսիանի իշխանի կամրջի մոտ և Քամոդիսացի Որոտանի ջրերով սնվող, գորտերով լիքը, ճաճամման գետամերձ լճակ, որիմ կից բարձունքին (այդ վայրը այժմ գերեզմանոց է - Խ. Ս.) կառուցված է եղել գյուղաքաղաքի մի թաղը:

Պատմիչի Քիչատակած «Առձմատու» փոսը՝ ճաճին է եղել և գտնվել է Ծաղատ-տան-Ծաղատի Ռմալույն եկեղեցուց արևմուտք, որտեղ ընդերքից բխող աղբյուրների ջրերն առայսօր ճաճին են գոյացնում:

Սյունիքի զամառնիստ կենտրոն Ծաղատի՝ Սիսիան քաղաքի տարածքում գտնվելու օգտին է խոսում Ստ. Որբելյանի ևս մեկ մկարագրությունը, ըստ որի՝ «-րդ դարում, նոր մառացել էին Սյունյաց իշխանը և Ռոզնոր տերը, իշխանի այրու՝ Սաթակիա տիկնոջ միջնորդությամբ Հայոց Մուշն Ալյաքերնցի Կաթողիկոսը (կղթ. 526-534) Քայրապետական ճոխությամբ զայիս է Սյունյաց զամառնիստ կենտրոն:

«Իսկ ի մերձենայմ ի զաթ իշխանաց ի Սիւնիս՝ անտաւորքն առաջի ընթանային»⁵⁴: Սաթակիա տիկնոջ, իր որդու, ազատագուցող բոլոր ճեծյալների, քաճաճանքի և տաճոտների Ռետ ընդառաջ է ելնում, դիմավորում կաթողիկոսին. «և մեծանայմ աղաղակաւ ճեչէին, գոչէին զերզս օրհմութեան այմքան, միմշ լի լիմէր փորակ վաւառին իրեն յորոտմամէ ամպոց: Եւ այնպէս փառաւորութեամբ տարեալ իջուցանէին ի խորանն արքունական, և ծառուցամէին ի վերայ ոսկեթել և մարգարտաշար քազմականին, ի զաթ իշխանացն, ի տեղին, որ կոչի Կից վտակաց»⁵⁵:

Պատմիչի Քիչատակած «Կից վտակաց» վայրը՝ Սյունիքի իշխանների զամառնեղին, Որոտան մայր գետի և ճրա աջակողմյան, մերկայումս Սիսիան կոչվող վտակի միախառնման տեղն է, որտեղ կառուցված է Սյունի (Ծաղատի) քերդը:

Օրբելյանը «վտակ»⁵⁶ քաղը գործածել է «առու, գետակ» (Ռոսող ջուր - Թ. Ս.) ձշանակությամբ և այն որևէ կապ չունի «վտակ» Ռասկացության ժամանակակից ֆիզիկա-աշխարհագրական մեկնաբանության հետ: «Կից վտակաց» վայրի անվան մասին Ղ. Ալիշանը գրել է. «Առումը այդ ի դէպ զա միութեան երկուց ջրոցն»⁵⁷: Բացի այդ, «-րդ դարում չկար «զլխավոր (մայր) գետ» ժամանակակից աշխարհագրական ըմբռնումը: Միջին դարերում Որոտանը միաժամանակ մի քանի անուն էր կրում: Օրինակ, 10-րդ դարում գետը վերին Ռոսանքում կոչվել է Զկնարած»⁵⁸, Սիսիանի (Ծաղատի) զոզաճվտում՝ Ապարամից գետ»⁵⁹, իսկ կիրճով Ռոսելիս՝ Որոտան»⁶⁰:

⁵⁴ Նույն տեղում, էջ 74:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Աճառյան Հր., Գշվ. աշխ., Բ. 4, էջ 350:

⁵⁷ Ալիշան Ղ., Գշվ. աշխ., էջ 214:

⁵⁸ Օրբելյան Ստ., Գշվ. աշխ., էջ 262:

⁵⁹ Նույն տեղում, էջ 510:

⁶⁰ Նույն տեղում, էջ 202:

Տեղի՞ն է ճշել, որ «Կից վտակաց» վայրի մասին պատմիչի նկարագրության մեջ Շաղատ անվան բացակայությունը պատճառ է դարձել բազմաթիվ ուսումնասիրողների կողմից նկարագրության տարբերությունների և 6-րդ դարում Սյունյաց ոստանի տեղադրության վերաբերյալ իրարամեծ կարծիքների դրսևորման:

Ինչ վերաբերվում է պատմիչի նկարագրած «փորակին»՝ գալատի ձորին, որտեղ օրհներգողների ծայնն ամպի որոտի մեան արձագանքում էր, ապա այն ամենայն հավանականությամբ Որոտանի կիրճն է՝ ներկայիս Ծաքե գյուղի մոտ:

Այսպիսով, վարկածային բնույթի սույն հոդվածի խնդրո առարկայի քննարկման սահմաններում, տպագիր սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության հիման վրա փորձ արվեց ցույց տալ, որ պատմական Շաղատը գտնվել է ներկայիս Սիսիան քաղաքի տարածքում: 4-9-րդ դարերում, մասնաճան Սյունյաց աշխարհիկ և հոգևոր գահաձիստը Շաղատից տեղափոխվելը, Շաղատի և՛ բերդը, և՛ վանքը, և՛ վարդապետարանը կոչվել են «Սյունի» տոհմանվամբ՝ շեշտելով իրենց տոհմական պատկանելիությունը և մահանգական ճշմանկությունը:

821-ից հետո Շաղատը դարձել է արաբական զինվորական և վարչական կենտրոն՝ Սայսավան անունով: 9-րդ դարում Բյուզանդիայի հետ առևտրական հարաբերությունների ընդհատումով և միջազգային առևտուրը դեպի Կուր գետի ավանը փոխանցելու հետևանքով, Շաղատ-Սայսավանը դարձել է Նախիջևան-Պարտավ ճանապարհի հանգույց: Սյունի (Շաղատի) բերդի արևմտյան կողմում հայտնաբերված խոշոր դրամական գանձը ցույց է տալիս, որ 9-րդ դարի սկզբին այդ բնակավայրը ապրանքափոխանակության և դրամաշրջանառության ասպարեզում միջազգային կապեր է ունեցել և առևտրի պահանջները թավարարելու նպատակով այստեղ դրամահատարան է եղել:

1236 թ. Սյունիքը մվանել են մոնղոլ-թաթարները:

1385 թ. Ծղուկքը ենթարկվել է Ոսկե Հորդայի Թուխթամիշ խանի, իսկ 1387 թվականին՝ Լենկթեմուրի ավերիչ ասպատակություններից: Ենթադրում ենք, որ Շաղատ-Սայսավան քաղաքը իր Սյունի բերդով ավերվել է հենց այդ ժամանակահատվածում, որից հետո, մեզ հայտնի տվյալներով, 15-րդ դարում ավերված քաղաքից ոչ հեռու գտնվող բնակավայրը սկսել է կրել «Ղարաքիլիսա» անունը: Այդ են վկայում Սիսիանի գոգահովտի պատմաճանաչիտական հուշարձանները, մատենագրական աղբյուրները, տեղանունները և պահպանված ավանդազրույցները:

Ներկայիս Շաղատը գտնվում է Սիսիանի գոգահովտում, 12 կմ հեռու պատմական Շաղատից: Պատմության մեջ քիչ չեն մեան դեպքերը: Օրինակ, ներկայիս Արտաշատը պատմական Արտաշատից հեռու է գտնվում 10 կմ⁶¹, իսկ ներկայիս Կապանը Սյունյաց թագավորանիստ Կապանից 17 կմ⁶²:

Ինչ վերաբերվում է ներկայիս Շաղատ գյուղի անվանը, ապա մեր խորին համոզմամբ, ինչպես վերը ճշեցինք, առաջացել է «Սաղատձոր» գյուղանունից, որը ժամանակի ընթացքում հայտնի Ս>Ծ հնչյունափոխության արդյունքում դարձել է «Շաղատ»:

⁶¹ Հակոբյան Թ., ճշվ. աշխ., էջ 129:

⁶² Հայատտանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986, հ. 1, էջ 494:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Sous la direction de Raymond H. Kévorkian, Bibliothèque nationale de France, Paris, 1996, 256 p.

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՄԻՋԵՎ,
ԵՐԵՔՀԱԶԱՐԱՄԵԱՒ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ:
ԽՄԲ.՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՓԱՐԻԶ, 1996, 256 էջ»

1996 թ., իրավամբ, կարելի էր համարել հայկական մշակույթի տարի Ֆրանսիայում: Նաև ջաղացում դեռևս մարտ ամսին կազմակերպվեց հայ հնագույն և անտիկ մշակույթին նվիրված ցուցահանդես, որն իր դռները բացեց այցելուների առջև 1996 թ. մարտի 23-ին: Հրապարակվեց նաև այդ ցուցահանդեսի նյութերին նվիրված մի նկարազարդ հատոր, Լուար-Ատլանտիկ հնագիտական թանգարանի ղեխավոր ավանդապա՛հ ժակ Սանտրոյի ընդհանուր խմբագրությամբ, ուր Հայաստանի հնագետների լայն մասնակցությամբ քննության են առնվում հայոց հնագիտական մշակույթի բազմաթիվ հարցեր, որոնց վերաբերում են հիմնականում նախազարյին Հայաստանին: Այս ցուցահանդեսի տրամաբանական շարունակությունը կարելի է դիտել Փարիզի Ազգային գրադարանի Ռովանու ցեղքո հունիսի 12 - հոկտեմբերի 20-ը կազմակերպված ցուցահանդեսը, որն անվանված էր «Հայաստանը Արևելքի և Արևմուտքի միջև. երեքհազարամյա ջաղացակրթություն»: Ցուցահանդեսի կազմակերպիչն ու ոգին էր Ազգային գրադարանի աշխատակից, Նուբարյան մատենադարանի տնօրեն Ռայմոնդ-Հարություն Գևորգյանը:

Այս ցուցահանդեսի բացման արարողությամբ մասնակցեցին Ֆրանսիայի և Հայաստանի նախագահները, Ն.Ս.Ս.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, եղբանկահիշատակ Գարեգին Ա-ը: Ցուցահանդեսի բացառիկ հաջողությունը պայմանավորված էր նաև նրա շրջանակներում կազմակերպված գիտական նստաշրջաններով և անշուշտ, Հարություն-Ռայմոնդ Գևորգյանի խմբագրությամբ լույս ընծայված «Հայաստանը Արևելքի և Արևմուտքի միջև. երեքհազարամյա ջաղացակրթություն» գրքով:

Ներկա գրախոսության մեջ փորձենք ներկայացնել այդ աշխատանքի նպատար հայագիտությանը: Հմուտ խմբագիրը կարողացել է գրքի ստեղծմանը մասնակից

